Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1500

Վ. Ի. ԼԵՆԻՆ

# 1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1925

3K23
Հ-14

Վ. Ի. ԼԵՆԻՆ

26 MAY 2005
24 NOV 2009

3K23
Z-14
ար.

# 1905 ԹՎԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1925.

10 ФЕВ 2013

1500

Հայպետհրատ Պետ. Պубл. Библиотека ՀԽՍՀ-ССР им. А. Мясникяна

1700
39

№ 285 Դրատեսվար Տիրաժ 3000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

# ԶԵԿՈՒՑՈՒՄ

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Ս.-Դ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ [1].

Իմ խնդիրն է՝ շարադրել այն հարցի առաջադրումը, թե ս.-դ. ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ ինչ մասնակցություն պիտի ունենա։ Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ նման հարց է ծագել։ Կարելի յե կարծել, որ ս. դ. գործերը հիանալի յեն, և ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ նրա մասնակցության հավանականությունը շատ մեծ է։ Իրոք այդ այդպես չէ։ Այդ հարցը քննության առնել մոտակա գործնական իրականացման տեսակետից դոնքիշոտություն կլիներ։ Բայց այդ հարցը մեր վզին փաթաթված է ոչ այնքան գործերի պրակտիկ դրությամբ, որքան գրական բանավեճով։ Անհրաժեշտ է միշտ նկատի ունենալ, որ այդ հարցն առաջինը Մարտինովը [2] է հարուցել մինչև հունվարի 9-ը [3]։ Ահա ինչ եր գրում նա իր «Յերկու դիկտատուրա» բրոշյուրում (եջ 10—11)։

«Մի րոպե, ընթերցող, պատկերացրեք Լենինի ուտոպիան իրականացված, պատկերացրեք, որ կուսակցությունը, որի անդամների կազմը նեղացրած է այնպես, որ նրա մեջ մասնակցում են միայն պրոֆեսիոնալ հեղափոխականները, հաջողվեց «նախապատրաստել, նշանակել և անցկացնել համաժողովրդական զինված ապստամբություն»։ Արդյոք ակնհայտ չէ, որ համաժողովրդական կամքը հեղափոխությունից հետո իսկույն ևեթ հենց այդ կուսակցությանը կնշանակեր ժամանակավոր կառավարություն։ Արդյոք ակնհայտ չէ, որ ժողովուրդը հենց այդ կուսակցությանը, և ոչ թե որևէ ուրիշին, կհանձներ հեղափոխության մոտակա բախտը։ Արդյոք ակնհայտ չէ, որ այդ կուսակցությունը, չցանկանալով կորցնել ժողովրդի իրեն ցույց տված առաջվա վստահությունը, ստիպված կլիներ, պարտավոր կլիներ իշխանությունն իր ձեռքը վերցնել և պահել այն, մինչև որ նա հեղափոխական միջոցներով կամրապնդեր հեղափոխության հաղթանակը»։

Հարցն այսպես դնելն անհավանական է, բայց փաստապես այ
է նրա իմաստը. Մարտինովը գտնում է, որ չեթե մենք շատ լա
նախապատրաստեյինք և առաջ մղեյինք ապստամբությունը, այն ժա
մանակ հուսահատ դրության մեջ կընկնեյինք։ Ցեթե մենք շարադրեյին
մեր վեճը վորևե ոտարերկրացու, ապա նա յերբեք չեր հավատա, թ
հնարավոր է հարցն այդպես դնել, և չեր հասկանա մեզ։ Միայն Ռու
սաստանի Ս.-Դ. հայացքների պատմությունն իմանալով և «Рабоче
дело»-յի հայացքների «պոչականությունը [4] իմանալով կարելի յ
մեր վեճը հասկանալ։ Հարցը թեորիայի անհետաձգելի հարց է դար
ձել, վորի պարզաբանումն անհրաժեշտ է։ Դա մեր նպատակների պար
զության հարցն է։ Ցես շատ կխնդրեյի ընկերներին, վոր մեր վի
ճաբանությունները ռուսական պրակտիկներին [5] շարադրելիս ուժե
կերպով ընդգծեյին Մարտինովի կողմից հարցի այսպես դնելը։

«Искра»-յի № 96-ում տպված է Պլեխանովի հոդվածը։ Մենք շա
ենք գնահատել և գնահատում ենք Պլեխանովին այն բոլոր «վիրավ
րանքների» համար, վոր նա հասցրել է ոպպորտյունիստներին, և վ
րոնք նրա դեմ հարուցել են բազմաթիվ անձերի հարգարժան թշնա
մանքը։ Բայց Մարտինովին պաշտպանելու համար մենք չենք կարո
գնահատել նրան։ Այստեղ մեր առաջ նախկին Պլեխանովը չե։ Ն
հոդվածը վերտառում է. «Իշխանությունը գրավելու հարցի առթիվ
Այս արվեստականորեն նեղացնում է հարցը։ Մենք հարցը յերբեք այդ
պես չենք դրել։ Պլեխանովը գործն այնպես է պատկերացնում, վ
իբր թե «Вперед»-ը Մարքսին ու Ենգելսին «փիլիստերության վա
պետներ» է անվանել։ Բայց իրոք այդ այդպես չե, այդ մի փոքրի
գաղտնի փոփոխություն է (подмена)։ Այս հարցում Մարքսի ըն
հանուր կոնցեպցիան «Вперед»-ը հատկապես ընդգծել է իբրև ճիշ
Փիլիստերությանը վերաբերող բառերն ուղղված եյին Մարտինով
կամ Լ. Մարտովին։ Ինչքան էլ վոր մենք պատրաստ ենք բարձր գն
հատելու բոլոր նրանց, ովքեր աշխատում են Պլեխանովի հետ, բայ
այնուամենայնիվ, Մարտինովը Մարքս չե։ Պլեխանովն իզուր է մթա
նում մարտինովականությունը։

Մարտինովը պնդում է, վոր չեթե մենք վճռական մասնակցո
թյուն ունենանք ապստամբության մեջ, մեզ համար այն մեծ վտա
գըն է ծագում, վոր պրոլետարիատը կհարկադրե մեզ իշխանությո
նը վերցնել։ Այս դատողության մեջ յուրահատուկ, թեև հասկանալ
տրամաբանություն կա։ Ինքնակալության դեմ կռվի հաղթանակել
վտանգի այս յուրահատուկ մտանանշման առթիվ «Вперед»-ը հարցն
նում է Մարտինովին ու Լ. Մարտովին, խոսքը ինչի՞ մասին է, սոցի
լիստակա՞ն թե՞ դեմոկրատական դիկտատուրայի մասին։ Առաջ
բերում Ենգելսի [6] նշանավոր բառերն այն առաջնորդի դրությ



վտանգավորության մասին, վորը դեռևս լիակատար տիրապետու-
թյան համար չհասունացած դասակարգի անունից ստանձնում է իշ-
խանությունը։ «Вперед»-ում մենք պարզաբանել ենք, վոր Ենգելսը
ճանանշում է առաջնորդի դրության վտանգավորությունը, յերբ նա
post factum [7] է ճշգրտում սկզբունքների և իրականության բառերի
և փաստերի միջև յեղած գժտությունը։ Այդպիսի գժտությունը դեպի
օրուստ է տանում քաղաքական կրախի (կործանման) իմաստով և վոչ
թե ֆիզիկական պարտության։ Դուք պետք է (այս է Ենգելսի միտ-
քը) պնդեք, թե հեղաշրջումը սոցիալիստական է, մինչդեռ նա իրոք
միայն դեմոկրատական է։ Ցեթե մենք այժմ Ռուսաստանի պրոլետա-
րիատին խոստանայինք, վոր իվիճակի յենք այժմ ապահովել լիակա-
տար տիրապետություն, այն ժամանակ կընկնեյինք այն սխալի մեջ,
ինչ անում են սոցիալիստ-հեղափոխականները։ Հենց ս.-հ. այդ սխա-
լի վրա, վորոնք ասում եյին, թե հեղափոխությունը «վոչ թե բուր-
ժուական, այլ դեմոկրատական» կլինի, մենք՝ ս.-դ. շարունակ ծիծա-
ղում եյինք։ Մենք շարունակ ասում եյինք, վոր հեղափոխությունը
վոչ թե կթուլացնի, այլ կուժեղացնի բուրժուազիային, բայց պրո-
լետարիատին կտա անհրաժեշտ պայմաններ հաջողությամբ կռվելու
հանուն սոցիալիզմի։

Բայց յերբ խոսքը վերաբերում է դեմոկրատական հեղաշրջմանը,
այն ժամանակ մեր առաջ յերկու ուժ կա՝ ինքնակալությունն ու հե-
ղափոխական ժողովուրդը, այսինքն պրոլետարիատն իբրև գլխավոր
կռվող ուժ և գյուղացիությունն ու ամեն տեսակ մանր-բուրժուական
տարրերը։ Պրոլետարիատի շահերը չեն զուգադիպում գյուղացիության և
մանր բուրժուազիայի շահերին։ Սոցիալ-դեմոկրատիան շարունակ ընդ-
գծել է, վոր հեղափոխական ժողովրդի խորքերում այդ դասակարգա-
յին զատումն անխուսափելի յե։ Կռվի ոբյեկտը տաք կռվի ժամանակ
կարող է ձեռքից-ձեռք անցնել։ Հեղափոխական ժողովուրդը ձգտում է
ժողովրդի ինքնակալության, բոլոր ռեակցիոն տարրերը պաշտպանում
են ցարի ինքնակալությունը։ Այս պատճառով հաջող հեղաշրջումը չի
կարող լինել պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական
դիկտատուրա, վորոնց շահերը **ցարի ինքնակալության** դեմ զուգա-
դիպում են։ «Զատ-զատ գնալ, միասին խփել» լոզունգի շուրջը համա-
ձայնություն յեկան և՛ «Искра»-ն [8] և «Вперед»-ը [9], բայց «Вперед»-ն
ավելացնում է, չեթե պետք է միասին խփել, ապա միասին խփել մին-
չև վերջ և միասին յետ մղել թշնամու փորձերը կորցրածը վերադարձ-
նելու համար։ Ինքնակալության տապալումից հետո կռիվը չի ընդ-
հատվի, այլ կսրվի։ Ռեակցիոն ուժերը հենց այն ժամանակ իսկական
կռվով կկազմակերպվեն կռվի համար։ Ցեթե մենք գործ ենք ածում
ապստամբության լոզունգը, ապա մենք չպետք է վախեցնենք սոցիալ-

դեմոկրատիային ապստամբության հաղթանակի հնարավորությամբ: Նվաճելով ժողովրդի ինքնակալությունը, մենք պետք է պաշտպանենք այն,—իսկ դա յել հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան է: Նրանից վախենալու վոչ մի հիմք չկա: Հանրապետության նվաճումը պրոլետարիատի համար հսկայական նվաճում է, չնայած սոցիալ-դեմոկրատիայի համար հանրապետությունը «բացարձակ իդեալ» չէ, ինչպես բուրժուական հեղափոխականի համար, այլ միայն ազատության յերաշխիք սոցիալիզմի լայն կռվի համար: Պարվուսն[10] ասում է, վոր վոչ մի յերկրում ազատության նվաճումն այսպիսի հսկայական զոհեր չի նստել: Այդ ճիշտ է: Այդ հաստատում է նաև յեվրոպական բուրժուական մամուլը, վոր հեռվից ուշադրությամբ հետևում է ռուսական անցքերին: Ինքնակալության ընդդիմադրությունն ամենատարրական ռեֆորմներին անհավատալի չափերով ուժեղ է, իսկ ինչքան ուժեղ է ազդեցությունը, այնքան ավելի ուժեղ է հակազդեցությունը: Այստեղից բղխում է ինքնակալության լիակատար կրախի մեծ հավանականությունը: Հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի մասին յեղած ամբողջ հարցն իմաստ ունի ինքնակալության լիակատար տապալման ժամանակ: Հնարավոր է, վոր մեզ մոտ կկրկնվեն 48-50 թ. թ.[11] անցքերը, այսինքն ինքնակալությունը վոչ թե կտապալվի, այլ կըսահմանափակվի և կդառնա սահմանադրական միապետություն: Այն ժամանակ վոչ մի դեմոկրատական դիկտատուրայի մասին խոսք լինել չի կարող: Բայց յեթե ինքնակալ կառավարությունն իրոք կտապալվի, ապա նա պետք է մեկ ուրիշով փոխարինվի: Իսկ այդ մեկ ուրիշը կարող է լինել միայն ժամանակավոր հեղափոխական կառավարությունը: Նա կարող է միայն հենվել հեղափոխական ժողովրդի վրա, այսինքն պրոլետարիատի ու գյուղացիության վրա: Նա կարող է լինել միայն դիկտատուրա, այսինքն վոչ թե «կարգի» կազմակերպություն, այլ պատերազմի կազմակերպություն: Ով գրոհով է գնում բերդի վրա, նա չի կարող պատերազմը շարունակելուց հրաժարվել և այն բանից հետո, յերբ կտիրի բերդը: Յերկուսից մեկը՝ կամ վերցնենք բերդը, վորպեսզի պահենք այն, կամ գրոհի չդիմենք և հայտնենք, վոր միայն մի փոքրիկ տեղ ենք ցանկանում բերդի մոտ:

Անցնում եմ Պլեխանովին[12]: Նա խորապես սխալ մի ձև է գործադրում: Նա խուսափում է կարևոր սկզբունքային հարցերից, դիմում է մանր բծախնդրությունների, գործադրելով գաղտնի փոփոխության (подмена) վորոշ մոմենտ: «Вперед»-ը պնդում է, վոր ընդհանուր առմամբ Մարքսի սխեման ճիշտ է (սխեմա՝ սկզբում ինքնակալության փոփոխությունը բուրժուական միապետության, իսկ հետո մանր-բուրժուական դեմոկրատական հանրապետության), բայց յեթե մենք առաջուց նկարագրելու լինենք ըստ այդ սխեմայի այն սահ-



մանները, վորին մենք հասնելու յենք, այն ժամանակ ֆիլիստերներ կլինեյինք: Այդպիսով Պլեխանովի պաշտպանությունը Մարքսին «verlorene Liebesmüh» (սիրո կորած ջանքեր) են: Պլեխանովը Մարտինովին պաշտպանելով վկայության է կոչում Կոմմունիստների Միության կենտր. Կոմիտեյի «Դիմումը»՝ ուղղված Միության անդամներին[13]: Այդ «Դիմումը» Պլեխանովը նորից սխալ է պատմում: Նա ստվերի մեջ է թողնում, վոր այդ «Դիմումը» գրվում եր այն ժամանակ, յերբ ժողովրդի լիակատար հաղթանակն արդեն չեր հաջողվել, չնայած 1848 թ. Բեռլինում պրոլետարիատի հաղթական ապստամբության: Բուրժուական-սահմանադրական միապետությունն արդեն փոխարինել եր ինքնակալությանը և, հետևաբար, ամբողջ հեղափոխական ժողովրդի վրա հենվող ժամանակավոր կառավարության մասին խոսք անգամ լինել չեր կարող: «Դիմումի» ամբողջ իմաստն այն է, վոր ժողովրդական ապստամբության անհաջողությունից հետո Մարքսը խորհուրդ է տալիս բանվոր դասակարգին կազմակերպվել և պատրաստվել: Մի՞թե այդ խորհուրդները պետքական են Ռուսաստանում դրությունը պարզելու համար մինչև ապստամբության սկիզբը: Մի՞թե այդ խորհուրդները պարզում են մեր վիճելի հարցը, վոր յենթադրում է պրոլետարիատի հաղթական ապստամբություն: «Դիմումն» այսպես է սկսվում. «...Յերկու հեղափոխական տարիների, 1848-1849, ընթացքում Կոմմունիստների Միությունը յերկու ձևով է իրեն ցույց տվել՝ նախ նրանով, վոր, նրա անդամներն ամենուրեք յեռանդով մասնակցում եյին շարժմանը... ապա նրանով, վոր նրա շարժման մասին ունեցած հայացքները» (վոր, իմիջի այլոց, շարադրված են «Կոմմունիստական մանիֆեստի» մեջ) «միակ ճիշտը դուրս յեկան»... «Միևնույն ժամանակ Միության նախկին ուժեղ կազմակերպությունը նշանավոր չափով թուլացավ: Անդամների մեծ մասը, վոր անմիջապես մասնակցել եր հեղափոխական շարժմանը, մտածում եր, վոր գաղտնի ընկերությունների ժամանակն անցել է, և վոր բավական է մենակ աշխարա յելույթը: Առանձին խմբակները և համայնքներն սկսեցին թուլացնել Կենտրոնական Կոմիտեյի (Կենտրոնական Վարչության —Zentralbehörde) հետ հարաբերությունն պահպանելը և աստիճանաբար բոլորովին ընդհատեցին այն: **Այսպիսով այն ժամանակ, յերբ դեմոկրատական կուսակցությունը, մանր բուրժուազիայի կուսակցությունը Գերմանիայում շարունակ ավելի լավ կազմակերպվում եր, բանվորական կուսակցությունը** կորցրեց իր միակ ամուր հենարանը, կազմակերպված ձևով պահպանվեց ամենաշատը առանձին տեղերում տեղական նպատակների համար և սրա շնորհիվ **ընդհանուր շարժման մեջ** (in der allgemeinen Bewegung) **ամբողջովին մանր-բուրժուական դեմոկրատների տիրապետության յեվ ղեկավարության տակ ընկավ»:**

Այսպես, ուրեմն, Մարքսը 1850 թ. հաստատում է, որ մանր-բուրժուական դեմոկրատիան 1848 թ. արդեն անցած հեղափոխության ժամանակ կազմակերպվածության տեսակետից շահեց, իսկ բանվորական կուսակցությունը կորցրեց։ Բնական է, որ Մարքսի ամբողջ ուշադրությունը դառնում է այն բանին, որպեսզի բանվորական կուսակցությունը նորից բուրժուազիայի պոչումը չմնա։ «...Ներկայումս, երբ առաջներս է նոր հեղափոխությունը, չափազանց կարևոր է, որպեսզի բանվորական կուսակցությունը հանդես գա հնարավոր չափով ավելի կազմակերպված, հնարավոր չափով ավելի միաբան և հնարավոր չափով ավելի ինքնուրույն, եթե նա նորից չի ուզում, ինչպես 1848 թ., շահագործվել բուրժուազիայից և քարշ գալ նրա պոչից»։

Հենց բուրժուական դեմոկրատիայի այս մեծ կազմակերպվածության շնորհիվ է, որ Մարքսը չի կասկածում, թե նա անպայմանորեն գերակշռություն կստանա, եթե իսկույն ևեթ նոր հեղաշրջում կատարվի։ «Որ մանր-բուրժուական դեմոկրատիան հեղափոխության հետագա զարգացման ընթացքում Գերմանիայում որոշ ժամանակ (für einen Augenblick) գերակշռություն կստանա, այդ ամեն մի կասկածից դուրս է»։ Այս բոլորն ուշադրության առնելով՝ մենք կհասկանանք, թե ինչու Մարքսը «Դիմումի» մեջ ոչ մի խոսք չի ասում ժամանակավոր Կառավարության մեջ պրոլետարիատի մասնակցության մասին։ Այս պատճառով Պլեխանովը բոլորովին անարդար է, երբ պնդում է, որ իբր Մարքսը «թույլատրելի չէր համարում նույնիսկ մտածել այն մասին, որ պրոլետարիատի քաղաքական ներկայացուցիչները կարող են մանր բուրժուազիայի ներկայացուցիչների հետ միասին աշխատել նոր հասարակակարգի ստեղծման վրա» («Искра» № 96)։ Այս ճիշտ չէ։ Մարքսը Ժամանակավոր Հեղափոխական Կառավարության մեջ մասնակցելու հարցը **չի հարուցանում**, իսկ Պլեխանովը գործն այնպես է շուռ տալիս, որ իբր **Մարքսն այդ հարցը բացասաբար է վճռում**։ Մարքսն ասում է՝ մենք, սոցիալ-դեմոկրատներս շարունակ պոչ ենք եղել, մենք ավելի վատ ենք կազմակերպված, մենք պետք է ինքնուրույն կերպով կազմակերպվենք այն դեպքի համար, եթե մանր բուրժուազիան նոր հեղաշրջումից հետո իշխանության գլուխն անցնի։ Մարտինովը Մարքսի այս նախադասություններից հետևյալ եզրակացությունն է հանում.—մենք, սոցիալ-դեմոկրատներս, որ այժմ ավելի լավ ենք կազմակերպված, քան մանր-բուրժուական դեմոկրատիան, և անպայման կազմում ենք ինքնուրույն կուսակցություն, պետք է վախենանք այն բանից, որ ապստամբության հաջողության դեպքում ստիպված կլինենք մասնակցել Ժամանակավոր Հեղ. Կառավարությանը։ Այո՛։ Ընկեր Պլեխանով, այլ բան է մարքսիզմը ու այլ բան մարտինովիզմը։ Որպեսզի ավելի ակնառու ցույց տանք 1905 թ. Ռուսաստանի



դրության ամբողջ զանազանությունը 1850 թ. Գերմանիայի դրությունից, կանգ առնենք դարձյալ «Դիմումի» մի քանի հետաքրքիր կտորների վրա։ Մարքսի մոտ խոսք անգամ չկա պրոլետարիատի դեմոկրատական դիկտատուրայի մասին, որովհետև նա հավատում էր պրոլետարիատի անմիջական սոցիալիստական դիկտատուրային անհապաղ մանր-բուրժուական հեղաշրջումից հետո։ Օրինակ՝ ագրարային հարցի առթիվ նա ասում է, որ դեմոկրատիան ուզում է մանր-բուրժուական գյուղացիական դասակարգ ստեղծել, իսկ բանվորները պետք է ընդդիմանան այդ ծրագրին գյուղական պրոլետարիատի ու սեփական շահերի համար։ Նրանք պետք է պահանջեն, որպեսզի բռնագրաված ֆեոդալական հողային սեփականությունը պետական սեփականություն մնա և բանվորական գաղութների վերածվի, որոնց վրա միություններ կազմած գյուղական պրոլետարիատը պետք է օգտվի խոշոր ագրիկուլտուրայի (հողագործության) բոլոր միջոցներից։ Պարզ է, որ այս տեսակ ծրագրների ժամանակ Մարքսը **չէր կարող** խոսել դեմոկրատական դիկտատուրայի մասին։ Նա գրում էր ոչ թե հեղափոխության նախօրյակին, իբրև կազմակերպված պրոլետարիատի ներկայացուցիչ, այլ հեղափոխությունից հետո, իբրև կազմակերպվող բանվորների ներկայացուցիչ։ Մարքսն իբրև առաջին անելիք ընդգծում է այն, որ հեղաշրջումից հետո Կենտր. Կոմիտեն անհապաղ պիտի ուղևորվի Գերմանիա, կուսակցության համագումար հրավիրի և նրան առաջարկի միջոցներ ձեռք առնել բանվորների ակումբները կենտրոնացնելու համար»։ Այսպիսով ինքնուրույն բանվորական կուսակցության իդեան, որ մեզ համար մի-արյուն է դարձել, այն ժամանակ նոր էր։ Չպետք է մոռանալ, որ 1848 թ., երբ Մարքսը խմբագրում էր ազատ ու ծայրահեղ հեղափոխական լրագիրը («Neue Keinische Zeitung» [14], նա ոչ մի բանվորական կազմակերպության վրա չէր հենվում։ Նրա լրագիրը պաշտպանում էյին արմատական բուրժուաները, որ քիչ մնաց տապալեյին այն, երբ Մարքսը նրանում հունիսյան օրերից հետո հարձակվեց Պարիզի բուրժուազիայի վրա։ Ահա այս պատճառով է, որ այդ «Դիմումի» մեջ այնքան շատ է խոսվում բանվորների ինքնուրույն կազմակերպության մասին։ Այնտեղ խոսքը վերաբերում է այն բանին, որ նոր պաշտոնական կառավարության կողքին կազմվեն բանվորների հեղափոխական կառավարություններ ինչպես բանվորական ակումբների և բանվորական կոմիտեների ձևով, այնպես և համայնական խորհուրդների և կոմունալ վարչությունների ձևով։ Այնտեղ խոսքը վերաբերում է այն բանին, որ բանվորները պետք է զինված լինեն և կազմեն ինքնուրույն բանվորական գվարդիա։ Իբրև ծրագրի 2-րդ կետ մատնանշվում է, որ նրանց մեջ բուրժուական թեկնածուների կողքին պետք է դրվեն բանվոր թեկնածու-

ներ, ըստ հնարավորին Միության անդամներից։ Թե ինչքան թույլ եր այդ Միությունը, ցույց է տալիս այն, վոր Մարքսը պետք է ապացուցեր սեփական թեկնածուներ դնելու անհրաժեշտությունը։ Այս բոլորի յեզրակացությունն այն է, վոր Մարքսը չի հիշել և չի վճռել ժամանակավոր Հեղ. կառավարության մեջ մասնակցելու հարցը, վորովհետև այդ հարցն այն ժամանակ չեր կարող վոչ մի գործնական նշանակություն ունենալ, և ամբողջ ուշադրությունն ամբողջովին դարձվում եր ինքնուրույն բանվորական կուսակցություն կազմակերպելու վրա։

Ապա Պլեխանովը «Искра»-յում ասում է, վոր «Вперед»-ն ըստ եյության վոչ մի ապացույց չի բերում, սահմանափակվելով միքանի սիրած բառերի կրկնությամբ, վոր «Вперед»-ը իբր թե ցանկանում է քննադատել Մարքսին։ Այդպես է արդյոք։ Չենք տեսնում մենք ընդհակառակը, վոր «Вперед»-ը հարցը կոնկրետ հողի վրա յե դնում, հաշվի առնելով այն ռեալ հասարակական ուժերը, վորոնք Ռուսաստանում մասնակցում են հանուն դեմոկրատական հեղաշրջման կատարվող կռվին։ Իսկ Պլեխանովը վոչ մի բառ չի ասում ռուսական կոնկրետ պայմանների մասին։ Նրա ամբողջ բազաժը սահմանափակվում է մի յերկու տեղին չբերած ցիտատներով։ Այդ հրեշավոր է, բայց այդ այդպես է։ Ռուսական սիտուացիան այնքան է զանազանվում արեվմտայեվրոպականից, վոր Պարվուսը կարող եր նույնիսկ հարց դնել, թե ո՞ւր է մեզ մոտ հեղափոխական դեմոկրատիա։ Հնարավորություն չունենալով ապացուցելու, վոր «Вперед»-ը ցանկանում է «քննադատել» Մարքսին, Պլեխանովը ականջներից բռնած մեջ է քաշում Մախին ու Ավենարիուսին[15]։ Յես վճռականապես չեմ հասկանում, թե ինչ կապ ունեն այս հեղինակները, վորոնց յես ամենափոքր չափով իսկ չեմ համակրում, սոցիալական հեղափոխության հարցի հետ։ Նրանք գրել են փորձի անհատական և սոցիալական կազմակերպության մասին կամ սրա նման ինչ-վոր բան, բայց, ճիշտ եմ ասում, դեմոկրատական դիկտատուրայի մասին չեն խորհրդածել։ Միգուցե Պլեխանովին հայտնի յե, վոր Պարվուսը Մախի ու Ավենարիուսի կողմնակից է դարձել։ Կամ գուցե Պլեխանովի գործերն այնպես են, վոր ստիպված է տեղի-անտեղի Մախին ու Ավենարիուսին նշանի տախտակ (мишень) շինել իր համար։ Ապա Պլեխանովը ասում է, վոր շուտով Մարքսն ու Ենգելսը հավատը կորցրին սոցիալական հեղափոխության մոտիկության վրա։ Կոմմունիստների Միությունը քայքայվեց։ Սկսվեցին եմիգրանտական խըռբըծանքները, վոր Մարքսն ու Ենգելսը նրանով եյին բացատրում, թե հեղափոխականներ կային, բայց հեղափոխություն չկար։ Պլեխանովը գրում է «Искра»-յում. «Պրոլետարիատի քաղաքական խնդիրները նրանց կողմից կորուսվեցին» (Մարքսի ու Ենգելսի կողմից, վորոնք հա-



վատը կորցրել եյին սոցիալական հեղափոխության մոտիկության վրա) «արդեն այն յենթադրությամբ, վոր դեմոկրատական կարգը բավական յերկարատև շրջանի ընթացքում տիրապետող կլինի։ Բայց հենց այդ պատճառով նրանք ել ավելի վճռականորեն կդատապարտեյին սոցիալիստների մասնակցությունը մանր-բուրժուական կառավարության մեջ» (№ 96)։ Ինչո՞ւ։ Պատասխան չկա։ Պլեխանովը նորից դեմոկրատական դիկտատուրան գաղտնի կերպով փոխում է սոցիալիստականի հետ, այսինքն ընկնում է Մարտովի սխալանքի մեջ, վորից շատ անգամ յեռանդագին զգուշացրել է «Вперед»-ը։ Առանց պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրայի Ռուսաստանում հանրապետություն անկարելի յե։ «Вперед»-ն այս պնդումը ցուցադրել է իրական դրության անալիզի հիման վրա։ Դժբախտաբար Մարքսն այդ դրությունը (սիտուացիան) չգիտեր և նրա մասին չի գրել։ Յեվ այդ պատճառով Մարքսից միայն ցիտատներ բերելով վոչ կարելի յե հաստատել և վոչ ել հերքել այդ սիտուացիայի անալիզը։ Իսկ կոնկրետ պայմանների մասին Պլեխանովը վոչ մի բառ չի ասում։

Ե՛լ ավելի անհաջող է Ենգելսից բերած յերկրորդ ցիտատը։ Նախ խիստ տարորինակ է, վոր Պլեխանովը վկայության է կանչում մասնավոր նամակը, չմատնանշելով, թե վորտեղ և յերբ է հրատարակված այն։ Ենգելսի նամակների հրատարակման համար մենք շնորհակալ կլինեյինք, բայց կցանկայինք տեսնել նրանց լրիվ բնագիրը։ Սակայն մենք վորոշ տվյալներ ունենք Ենգելսի նամակի իսկական իմաստի մասին դատելու համար։

Մենք ճշգրիտ գիտենք,—այս ել յերկրորդ,—վոր իննսունական թվականների Իտալիայի սիտուացիան բոլորովին նման չե ռուսականին։ Իտալիան արդեն քառասուն տարուց ավելի յե, վոր ոգտվում է ազատությամբ։ Ռուսաստանում բանվոր դասակարգը չի կարող յերազել անգամ դրա մասին առանց բուրժուական հեղափոխության։ Հետևաբար Իտալիայում բանվոր դասակարգը վաղուց արդեն կարող եր ինքնուրույն կազմակերպություն զարգացնել սոցիալիստական հեղաշրջման համար։ Տուրատին[16] իտալական Միլյերանն է։ Այդ պատճառով շատ հավանական է, վոր այն ժամանակ ել Տուրատին հանդես գար միլյերանական իդեաներով։ Այսպիսի յենթադրությունը լրիվին հաստատվում է նրանով, վոր, հենց Պլեխանովի իրեն խոսքերով, Ենգելսն ստիպված եր բացատրել Տուրատիին բուրժուական-դեմոկրատական և սոցիալիստական հեղաշրջման միջև յեղած զանազանությունը։ Նշանակում է՝ Ենգելսը հենց նրանից եր վախենում, վոր Տուրատին կընկնի այն առաջնորդի կեղծ դրության մեջ, վորը չի հասկանում իր մասնակցած հեղաշրջման սոցիալական իմաստը։ Հետևաբար Պլեխանովի

մասին մենք ստիպված ենք մեկ անգամ ևս կրկնել, վոր նա շփոթում է դեմոկրատական և սոցիալիստական հեղաշրջումը:

Բայց գուցե Մարքսի ու Ենգելսի մոտ կարելի չէ պատասխան գտնել վոչ թե կոնկրետ ռուսական սիտուացիայի հարցի մասին, այլ պրոլետարիատի հեղափոխական կռվի ընդհանուր սկզբունքների մասին: Համենայն դեպս «Искра»-ն այդպիսի մեկ ընդհանուր հարց դրել է:

№ 93-ում նա գրում է. «Լավագույն ճամպան պրոլետարիատին բուրժուական-դեմոկրատական պետությունն իբրև ասպարեզ իր կուսակցություն կազմակերպելու համար դա բուրժուական հեղափոխության զարգացման ճանապարհն է **ներքևից**, պրոլետարիատի ճնշմամբ իշխանության գլուխ կանգնած դեմոկրատիայի վրա»: «Искра»-ն ասում է,— «Вперед»-ը ցանկանում է, վորպեսզի պրոլետարիատի ճնշումը հեղափոխության վրա (*) վոչ միայն փողոցից լինի, այլև վերևից, ժամանակավոր կառավարության ապարանքներից»: Այս ձևակերպումը ճիշտ է, «Вперед»-ն իրոք այդ ցանկանում է: Այստեղ մեր առաջ է իրոք ընդհանուր սկզբունքային մի հարց, արդյոք հեղափոխական ազդեցությունը թույլատրելի չէ ներքևից, թե՞ նաև վերևից: Այս ընդհանուր հարցին Մարքսի և Ենգելսի մոտ կարելի չէ պատասխան գտնել:

Յես նկատի ունեմ Ենգելսի հետաքրքրական հոդվածը՝ «Բակունինիստները գործի յեն» (1873 թ.): Ենգելսը համառոտակի նկարագրում է 1873 թ. սպանական հեղափոխությունը, յերբ յերկիրը բռնված էր ինտրանսիժենտների, այսինքն ծայրահեղ հանրապետականների ապստամբությամբ: Ենգելսը ընդգծում է, վոր այն ժամանակ խոսք ել չէր կարող լինել բանվոր դասակարգի անհապաղ ազատագրության մասին: Խնդիրն այն եր, վորպեսզի հեշտացվեր պրոլետարիատի համար այն նախորյա աստիճանների անցումը, վորոնք նախապատրաստում են սոցիալական հեղափոխությունը, այն է, վորպեսզի վերացվեյին այն արգելքները, վորոնք կանգնած եյին նրա ճանապարհին: Սպանական բանվոր դասակարգը կարող եր ոգտագործել այդ հնարավորությունը միայն գործոն կերպով մասնակցելով հեղափոխությանը: Այն ժամանակ այդպիսի մասնակցությանը խանգարիչ եր բակունինիստների ազդեցությունը և իմիջի այլոց նրանց ընդհանուր գործադուլի իդեան, վոր շատ ճակի կերպով քննադատել է Ենգելսը: Ենգելսն իմիջի այլոց նկարագրում է Alcoy 30 հազար գործարանային բանվոր ունեցող քաղաքի անցքերը: Պրոլետարիատն այնտեղ դրության տերն է հանդիսացել: Իսկ ինչ է արել նա այն ժամանակ: Հակառակ բակունինիզմի սկզբունքներին ստիպված է յեղել մասնակցելու ժամանակավոր Հեղափոխական կառավարությանը: «Բակունինիստները,—ասում է Ենգելսը,—յերկար տարիների ընթացքում քարոզում եյին, վոր ամեն մի հեղափոխական



ազդեցություն վերից վար վնասակար է, ամեն ինչ պետք է կազմակերպվի և անցկացվի վարից վեր»:

Այսպես, ուրեմն, ահա թե ինչպես պատասխանեց Ենգելսը «Искра»-յի դրած ընդհանուր հարցին «վերից և վարից» սկզբունքի մասին: «Искра»-յի **սկզբունքը՝ «միայն վարից և վոչ մի դեպքում վերից»— անարխիստական սկզբունք է**: Սպանական հեղափոխության անցքերից յեզրակացություն հանելով, Ենգելսն ասում է. «Բակունինիստները պետք է գործեյին հակառակ սեփական սկզբունքների, հակառակ այն սկզբունքի, վոր իբր թե հեղափոխական կառավարության հաստատումը նոր խաբեյություն է և նոր դավաճանություն բանվոր դասակարգի հանդեպ» (ինչպես այժմ ցանկանում է մեզ հավատացնել Պլեխանովը): «Հակառակ այդ սկզբունքներին բակունինիստները պետք է առանձին քաղաքների կառավարական կոմիտեների ժողովներին մասնակցեյին և ընդ այդ իբր թույլ փոքրամասնություն, վորին տիրում և քաղաքականապես շահագործում եր բուրժուազիան»: **Այսպես, ուրեմն, Ենգելսին գուր չի գալիս միայն այն, վոր բակունինիստները փոքրամասնություն եյին և վոչ թե այն, վոր նրանք այնտեղ մասնակցում եյին:** Վերջացնելով բրոշյուրը, Ենգելսն ասում է, վոր բակունինիստների որինակը «ցույց է տալիս մեզ, թե ինչպես պետք չէ հեղափոխություն անել»:

Յեթե Մարտովը իր հեղափոխական գործունեյությունը սահմանափակեր բացառապես վարից ներգործելով, ապա նա կկրկներ բակունինիստների սխալը:

Բայց «Искра»-ն սկզբունքային տարաձայնություններ սարքելով «Вперед»-ի հետ, ինքը մոլորվելով կանգնում է մեր տեսակետի վրա: Այսպես, Մարտովը ասում է, վոր պրոլետարիատը ժողովրդի հետ միասին պետք է հարկադրեն բուրժուազիային հեղափոխությունը տանել մինչև վերջ: Բայց սա յել այլ բան չէ, բայց յեթե «ժողովրդի», այսինքն պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դիկտատուրա: Բուրժուազիան ամենևին չի ցանկանում հեղափոխությունը տանել մինչև վերջ: Իսկ ժողովուրդը պետք է ցանկանա այդ իր կյանքի սոցիալիստական պայմանների շնորհիվ: Հեղափոխական դիկտատուրան կլուսավորի նրան և ներս կքաշի քաղաքական կյանքի մեջ:

«Искра»-ն № 95-ում գրում է.

«Բայց յեթե անկախ մեր կամքից հեղափոխության ներքին դիալեկտիկան այնուամենայնիվ վերջիվերջո մեզ իշխանության հասցներ, յերբ դեռ սոցիալիզմի իրականացման համար ազգային պայմանները հասունացած չեն, մենք յետ-յետ չեյինք քաշվի: Մենք նպատակ կդնեյինք ջախջախել հեղափոխության ազգային նեղ շրջանակները և դեպի հեղափոխության ուղին հրել Արևմուտքը, ինչպես հարյուր տարի առաջ Ֆրանսիան դեպի այդ ուղին հրեց Արևելքը»:

Այսպես, ուրեմն, «Искра»-ն ինքն ընդունում ե, յեթե այդպիսի դժբախտություն պատահեր, վոր մենք հաղթեյինք, այն ժամանակ մենք պետք ե գործեյինք հենց այնպես, ինչպես մատնանշում ե «Вперед»-ը։ **Հետեվաբար «Искра»-ն գործնական հարցում գնում ե «Вперед»-ի հետքով** և հոդս ե ցնդեցնում իր սեփական դիրքը։ Միայն չեմ հասկանում, ինչպես կարելի յե Մարտովին ու Մարտինովին հակառակ իրենց կամքի քարշ տալ դեպի իշխանություն։ Այս արդեն բոլորովին անմտություն ե։

«Искра»-ն որինակ ե բերում Ֆրանսիան։ Բայց այդ յակոբինյան Ֆրանսիան ե։

Յակոբինությամբ վախեցնել հեղափոխության մոմենտում մեծագույն գռեհկություն ե։ Դեմոկրատական դիկտատուրան, ինչպես յես արդեն մատնանշեցի, «կարգի» կազմակերպություն չե, այլ պատերազմի կազմակերպություն։ Յեթե նույնիսկ մենք տիրեյինք Պետերբուրգը և գիլյոտինով գլխատեյինք Նիկոլային, ապա կունենայինք մեր առջև միքանի Վանդեա։ Յեվ Մարքսը հիանալի հասկանում եր այդ, յերբ 1848 թ. «Նոր Հռենոսյան լրագրում» հիշում եր յակոբինյաններին։ Նա ասում եր. «1793 թ. տեռորը այլ բան չե, բայց յեթե պլեբեյական յեղանակ աբսոլյուտիզմի և հակահեղափոխության հետ հաշիվ մաքրելու»։ Մենք նույնպես գերադասում ենք ռուսական ինքնակալության հետ հաշիվ մաքրել «պլեբեյական» յեղանակով և «Искра»-յին ենք թողնում ժիրոնդիստական յեղանակները։ Ռուսական հեղափոխությունն իր առաջ չտեսնված հաջող սիտուացիա ունի (հակաժողովրդական պատերազմ [17], ինքնակալության ասիական պահպանողականություն և այլն)։ Յեվ այդ սիտուացիան թույլ ե տալիս հույս ունենալու ապստամբության հաջող յելքի վրա։ Պրոլետարիատի հեղափոխական տրամադրությունը վոչ թե որերով, այլ ժամերով ե աճում։ Յեվ այսպիսի մոմենտում Մարտինովականությունը վոչ միայն հիմարություն ե, այլև վոճրագործություն, վորովհետև նա վնասում ե պրոլետարիատի հեղափոխական յեռանդի թափին, կտրում ե նրա հեղափոխական բուռն խանդավառությունը։ Այս նույն այն սխալն ե, վոր ուրիշ պարագաներում, վոչ դեմոկրատական, այլ սոցիալիստական դիկտատուրայի հարցի մասին գերմանական կուսակցության մեջ անում եր Բերնշտայնը։

Վորպեսզի ձեզ կոնկրետ պատկերացում տամ, թե իրոք ինչ եյին Ժամանակ. Հեղ. Կառավար. այդ հռչակավոր «ապարանքները», վկայության կկանչեմ մի աղբյուր ևս։ Ենգելսն իր հոդվածներից մեկում [18] նկարագրած ունի, թե ինչպես ինքը մասնակցել ե հեղափոխությանը այդ «ապարանքների» մոտ։ Որինակ՝ նա նկարագրում ե Հռենոսյան Պրուսիայի ապստամբությունը, վոր Գերմանիայի ամենաարդյունագործա-



կան կենտրոններից մեկն եր։ Դեմոկրատական կուսակցության հաղթության շանսերը,—ասում ե նա, այստեղ հատկապես բարեհաջող եյին։ Խնդիրն այն եր, վոր բոլոր ազատ ուժերը ձգվեյին Հռենոսի աջ ափը, ապստամբությունը տարածվեր ավելի լայն ասպարեզում և փորձ անեյին այստեղ լանդվերի (ժողովրդական զորքի) միջոցով ստեղծել հեղափոխական բանակի միջուկ։ Հենց այսպիսի առաջարկ էլ արավ Ենգելսը, յերբ նա գնում եր Ելբերֆելդ, վորպեսզի ինչ վոր կարելի յե անի իր ծրագրի իրագործման համար։ Յեվ Ենգելսը հարձակվում ե մանր-բուրժուական առաջնորդների վրա այն բանի համար, վոր նրանք չկարողացան ապստամբությունը կազմակերպել, փող չպատրաստեցին, որինակ, բարրիկադների վրա կռվող բանվորներին պահելու համար և այլն։ Պետք եր ավելի յեռանդուն գործել,—ասում ե Ենգելսը։ Առաջին քայլը պետք ե լիներ Ելբերֆելդի քաղաքացիական բանակի զինաթափումը և նրա զենքի բաշխումը բանվորներին, ապա հարկադրական տուրքի գանձում այդ ձևով զինած բանվորների ապրուստի համար։ Բայց այս առաջարկությունը միայն ու բացառապես յես եյի անում,—ասում ե Ենգելսը։ Հասարակական Ապահովության ամենահարգարժան Կոմիտեն ամենափոքր չափով տրամադիր չեր այսպիսի «տեռորիստական ձեռնարկությունների»։

Այսպիսով մինչդեռ մեր Մարքսն ու Ենգելսը (հա՛, ուզում եյի ասել Մարտինովն ու Մարտովը) մեզ վախեցնում են յակոբինությամբ[19], Ենգելսը խարազանում եր հեղափոխական մանր բուրժուազիային «յակոբինյանական» գործելակերպն արհամարհելու համար։ Ենգելսը հասկանում եր, վոր պատերազմի պատրաստել և հրաժարվել պետական գանձարանից և պետական իշխանությունից—պատերազմի ժամանակ—նշանակում ե անարժան ձևով բառախաղ անել։ Իսկ վորտեղից եք դուք ճարելու փող ապստամբության համար, յերբ նա համաժողովրդական դառնա, պ. պ. Նոր-իսկրայականներ։ Չե՞ վոր վոչ պետական գանձարկղից։ Այս բուրժուակա՞ն ե։ Այս յակոբինյանականությո՞ւն ե։

Բադենի [20] ապստամբության առթիվ Ենգելսը գրում ե. «Ինսուրրեկցիոն (ապստամբական) կառավարությունն իր ձեռքում հաջողության բոլոր շանսերն ուներ՝ պատրաստ բանակ, լիք զինանոցներ, հարուստ պետական գանձարան, համերաշխ բնակչություն։ Բոլորը և ամեն մեկը հետին թվով հասկացան, թե ինչ եր հարկավոր անել այդ պայմաններում։ Պետք եր զորք կազմել ազգային ժողովի պաշտպանության համար, յետ մղել ավստրիացիներին և պրուսացիներին, նետել ապստամբությունը հարևան պետությունները և «թուլամորթ, գերմանական այսպես կոչված ազգային ժողովը ապստամբած ժողովրդի և ապստամբած բանակի տեռորիստական ազդեցության տակ դնել. ապա

պետք էր կազմակերպել ապստամբության ուժերը, նրա տրամադրության տակ դնել առատ դրամական գումարներ, շահագրգռել հողագործական բնակչությունը ապստամբությամբ՝ անհապաղ բոլոր ֆեոդալական պարհակները վերացնելու միջոցով։ Յեվ այս բոլորը պետք էր անհապաղ անել, վորպեսզի ապստամբությանը յեռանդուն բնույթ տրվեր։ Ապահովության Կոմիտե նշանակելուց մի շաբաթ հետո արդեն ուշ էր»։

Մենք հավատացած ենք, վոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատները ապստամբության մոմենտում Ռուսաստանում Ենգելսի նման հեղափոխության զինվորներ գրվելով նույնպիսի «յակոբինյան» խորհուրդներ կտան։ Իսկ մեր «Искра»-ն գերադասում է ընտրական բյուլետենների ծրարների գույնի մասին գրել, հետին պլանը մղելով Ժամանակավոր Հեղ. Կառավարության և Հիմնադիր Ժողովի հեղափոխական պաշտպանության հարցը։

Մեր «Искра»-ն վոչ մի դեպքում մտադիր չի «վերից» ներգործել։

Կարլսրուեյից [21] Ենգելսը ճանապարհվեց Պֆալց [22]։ Ժամանակավոր կառավարության մեջ նստած էր նրա ընկեր դ'Եստերը (վոր մի անգամ Ենգելսին կալանքից ազատել էր)։ «Մեր կուսակցությունը խորթ շարժմանը պաշտոնական կերպով մասնակցելու մասին խոսք էլ լինել չէր կարող,—ասում է Ենգելսը։—Յես շարժման մեջ պետք է գրավեյի այն տեղը, ինչ վոր կարող եյին միայն գրավել «Նոր Հռենոսյան Լրագրի» աշխատակիցները—զինվորի տեղ։ Մենք արդեն խոսել ենք Կոմմունիստների Միության այն քայքայման մասին, վորն Ենգելսին դրել էր մի վիճակում, յերբ նա համարյա բանվորական կազմակերպությունների հետ վորևե կապ չուներ։ Այդ հասկանալի յե դարձնում մեր բերած ցիտատը. «Ինձ առաջարկում եյին քաղաքացիական ու զինվորական շատ պաշտոններ,—գրում է Ենգելսը,—պաշտոններ, վոր յես մի րոպե իսկ չեյի տատանվի ստանձնել պրոլետարական շարժման ժամանակ։ Տվյալ պայմաններում յես բոլորը մերժեցի»։

Ինչպես տեսնում եք, Ենգելսը չէր վախենում վերից ներգործել, չէր վախենում պրոլետարիատի խիստ մեծ կազմակերպվածությունից և ուժից, վոր նրան կարող եյին հասցնել ժամանակավոր կառավարության մեջ մասնակցելու անհրաժեշտությանը։ Ենգելսն, ընդհակառակը, ցավում էր, վոր շարժումը բավականաչափ հաջող չէր, բավականաչափ պրոլետարական չէր շնորհիվ բանվորների լիակատար անկազմակերպվածության։ Բայց նույնիսկ այսպիսի պայմաններում անգամ Ենգելսը պաշտոն ստանձնեց. Նա բանակում ծառայում էր իբրև Վիլլիխի [23] թիկնապահ, իր վրա վերցրեց ամմունիցիայի մատակարարումը, անհավատալի դժվարություններով տեղափոխում էր վառոդ, կապար, փամփուշտներ և այլն։ «Մեռնել հանուն հանրապետության,—այս էր իմ այն ժամանակվա նպատակը»,—գրում է Ենգելսը։



Ընկերներ, թողնում եմ ձեզ դատելու, թե արդյոք նման է Ենգելսի խոսքերով նկարագրված ժամանակավոր կառավարության պատկերը այն «ապարանքներին», վորոնցով Նոր «Искра»-ն աշխատում է մեզանից խրտնեցնել բանվորներին։

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Սոցիալ-դեմոկրատիան իբրև բանվորական շարժման գիտակից արտահայտիչ իրեն նպատակ է դնում լիակատար կերպով ազատել բոլոր աշխատավորներին ամեն մի ճնշումից ու շահագործումից։ Այդ նպատակին հասնելը, արտադրության միջոցների մասնավոր սեփականության վոչնչացումը և սոցիալիստական հասարակության ստեղծումը պահանջում է կապիտալիզմի արտադրողական ուժերի շատ բարձր զարգացում և բանվոր դասակարգի ահագին կազմակերպվածություն։ Առանց քաղաքական ազատության ժամանակակից բուրժուական հասարակության մեջ անհնար է արտադրողական ուժերի լիակատար զարգացում, վոչ լայն, բաց ու ազատ դասակարգային կռիվ, վոչ էլ պրոլետարիատի մասսաների քաղաքական լուսավորություն, դաստիարակություն ու համախմբում։ Ահա թե ինչու գիտակից պրոլետարիատը միշտ իրեն խնդիր է դնում վճռականորեն կռվել հանուն լիակատար քաղաքական ազատության, հանուն դեմոկրատական հեղափոխության։

Այս խնդիրը մենակ պրոլետարիատը չի, վոր դնում է իր առաջ։ Բուրժուազիային նույնպես պետք է քաղաքական ազատություն։ Ունևոր դասակարգերի կրթված ներկայացուցիչները վաղուց պարզել են ազատության դրոշակը. գլխավորապես այդ դասակարգերից ծագած հեղափոխական ինտելլիգենցիան հերոսաբար կռվում էր ազատության համար։ Բայց վողջ բուրժուազիան ամբողջությամբ ինքնակալության դեմ վճռական կռվի ընդունակ չէ, նա վախենում է այդ կռվում կորցնել իր սեփականությունը, վոր նրան կապում է գոյություն ունեցող հասարակության հետ, նա վախենում է բանվորների խիստ հեղափոխական յելույթից, վորոնք յերբեք կանգ չեն առնի մենակ դեմոկրատական հեղափոխության վրա, այլ կձգտեն սոցիալիստական հեղաշրջման, նա վախենում է լիակատար կերպով գժտվել չինովնիկությունից, բյուրոկրատիայից, վորի շահերը հազարավոր թելերով կապված են ունևոր դասակարգերի շահերի հետ։ Այդ պատճառով ազատության համար մղվող բուրժուական կռիվը աչքի յե ընկնում յերկչոտությամբ, անհետևողականությամբ, կիսատությամբ։ Պրոլետարիատի խնդիրներից մեկն է բուրժուազիային առաջ հրել, դնել ամբողջ ժողովրդի առաջ դեմոկրատական հեղաշրջման լոզունգները, ինքնուրույն և համարձակ կերպով դիմել այդ լոզունգների իրականացմանը, մի խոս-



Пуб. Библиот... ССР

քով՝ ամբողջ ժողովրդի ազատության համար մղած կռվում ավանգարդ, առաջապահ գունդ լինել։

Ռուս սոցիալ-դեմոկրատներն այդ խնդրի իրագործման նպատակով ստիպված են յեղել արդեն շատ անգամ պատերազմել բուրժուական լիբերալիզմի անհետևողականության դեմ։ Հիշեցնենք, օրինակ, թե ինչպես սկսեց պ. Ստրուվեն իր ցենզուրայից ազատ գործունեությունը իբրև քաղաքական մարտիկ հանուն Ռուսաստանի «ազատագրության»։ Նա սկսեց այն Վիտտեյի «Հիշողությունների» առթիվ առաջաբան գրելով, վորտեղ ցուցադրված եր բոլորովին «շիպովյան» (արդի քաղաքական բաժանումների լեզվով ասած) մի լոզունգ՝ «իրավունքներ և տիրական զեմստվո»։ Սոցիալ-դեմոկրատիան ցույց եր տալիս այդ լոզունգի ամբողջ հետամնացությունը, ամբողջ անմտությունը, ամբողջ հետադիմականությունը, պահանջում եր վորոշ և վճռական դեմոկրատական ծրագիր, ինքը ցուցադրեց այդպիսի ծրագիր իբրև անբաժանելի բաղկացուցիչ մաս իր կուսակցական ծրագրի։ Սոցիալ-դեմոկրատիան ստիպված եր կռվել նաև իր սեփական շարքերում դեմոկրատական խնդիրների նեղ հասկացողության դեմ, յերբ այսպես կոչված եկոնոմիստներն ամեն կերպ ստորացնում եյին այդ խնդիրները, քարոզում եյին «տնտեսական կռիվ տնտեսատերերի և կառավարության հետ», պնդում եյին, թե անհրաժեշտ է սկսել իրավունքների նվաճումից, շարունակել քաղաքական ագիտացիայով և միայն հետո, աստիճանաբար (ստադիաների թեորիա) անցնել քաղաքական կռվի։

Այժմ քաղաքական կռիվը սարսափելի աճել է, հեղափոխությունը բռնել է ամբողջ յերկիրը, ամենաչափավոր լիբերալները «ծայրահեղ» են դարձել, և կարող է թվալ, վոր այնպիսի պատմական տեղեկանքներ մոտիկ անցյալից, ինչպիսիք մենք այժմ բերեցինք, անտեղի յեն, չեն կարող վոչ մի կապ ունենալ կենդանի, փոթորկոտ ներկայի հետ։ Բայց այս կարող է թվալ միայն առաջին հայացքից։ Ինարկե, այնպիսի լոզունգներ, ինչպես հիմնադիր ժողով, ուղիղ և հավասար ընտրական իրավունք գաղտնի ձայնտվությամբ (վոր վաղուց և ամենից առաջ ցուցադրել են սոցիալ-դեմոկրատներն իրենց կուսակցական ծրագրում) ընդհանուր սեփականություն են դարձել, ընդունված են անլեգալ «Освобождение»-յի կողմից, մտել են «Союз Освобождения»-յի ծրագրի մեջ, դարձել են զեմստվային գործիչների (земцы) լոզունգներ, ամեն ձևով կրկնվում են լեգալ մամուլի մեջ։ Վերջին տարիների ու ամիսների ընթացքում ռուսական բուրժուական դեմոկրատիզմի առաջադիմությունն անկասկած է։ Բուրժուական դեմոկրատիան անցքերից դաս է առնում, դեն է գցում պրիմիտիվ լոզունգները (ինչպես է Շիպովի՝ «իրավունքներ և տիրական զեմստվո»), կաղալով քարշ է գա-



լիս հեղափոխության յետևից. Նրա խոսքերի ու գործերի միջև յեղած հին հակասությունների փոխարեն, սկզբունքով դեմոկրատիզմի և «ռեալ քաղաքականության» դեմոկրատիզմի միջև ծնվում են նոր հակասություններ, վորովհետև հեղափոխության աճումը դեմոկրատիայից արվող պահանջները շարունակ ավելի ու ավելի բարձրացնում է։ Իսկ բուրժուական դեմոկրատիան բարձրացնելով իր լոզունգները, շարունակ յետ է մնում անցքերից, շարունակ քարշ է գալիս պոչից, շարունակ միքանի գրադուս ցած է ձևակերպում այդ լոզունգները, քան այդ պահանջում է հեղափոխական իրական կռիվը հանուն իրական ազատության։

Իսկապես, վերցրեք այս արդեն ընթացիկ, ընդհանուրից ընդունված լոզունգը՝ հիմնադիր ժողով ընդհանուր և այլն ընտրական իրավունքի հիման վրա։ Արդյոք բավակա՞ն է այն հետևողական դեմոկրատիզմի տեսակետից։ Արդյոք բավակա՞ն է այն ապրած մոմենտի կենսական հեղափոխական խնդիրների տեսակետից։ Այս յերկու հարցին էլ չի կարելի այլ կերպ պատասխանել, քան բացասաբար։ Վորպեսզի համոզվենք սրանում, բավական է միայն ուշադրությամբ վերլուծել մեր կուսակցական ծրագիրը, վորը դժբախտաբար մեր կազմակերպությունները բավականաչափ հաճախ չեն մտաբերում, մեջ բերում և տարածում։ (Իբրև յերջանիկ բացառություն, վոր արժանի յե լայն ընդօրինակման, նշենք մեր կուսակցության ծրագրի վերջերս կատարած արտատպությունը Ռիգայի, Վորոնեժի և Մոսկվայի կոմիտեների թերթիկներում)։ Մեր ծրագիրը նույնպես անկյունաքար է դարձնում համաժողովրդական Հիմնադիր Ժողովի լոզունգը («համաժողովրդական» բառով մենք պայմանավորվենք կարճության համար նշանակել ընդհանուր և այլն ընտրական իրավունքը)։ Բայց այդ լոզունգը մեր ծրագրում մենակ չէ, այլ դրված է այնպիսի կոնտեքստում, այնպիսի լրացումներով ու պարզաբանություններով, վորոնք անհնար են դարձնում նրա սխալ մեկնաբանությունը անգամ այն մարդկանց կողմից, վորոնք ամենաանհետևողական կերպով են կռվում ազատության համար, կամ նույնիսկ կռվում են ազատության դեմ։ Այդ լոզունգը մեր ծրագրում դրված է հետևյալ լոզունգների հետ կապակցված. 1) ցարական ինքնակալության տապալում, 2) նրա փոխարինումը դեմոկրատական **հանրապետությամբ**, 3) դեմոկրատական սահմանադրությամբ ապահոված **ժողովրդի ինքնակալություն**, այսինքն **ամբողջ** գերագույն պետական իշխանության կենտրոնացում օրենսդրական ժողովի ձեռքում, վոր բաղկացած է ժողովրդի ներկայացուցիչներից և կազմում է մեկ պալատ։

Կարելի՞ յե կասկածել այն բանում, վոր այս բոլոր լոզունգների ընդունումը պարտադիր է ամեն մի հետևողական դեմոկրատի համար։

Չէ՞ որ «դեմոկրատ» բառը և ըստ քերականական իմաստի և ըստ քաղաքական նշանակության, որ տվել է նրան Յեվրոպայի ամբողջ պատմությունը, նշանակում է՝ ժողովրդի ինքնակալության կողմնակից։ Նշանակում է, ծիծաղելի յե խոսել դեմոկրատիզմի մասին և միևնույն ժամանակ ժխտել այդ լոզունգներից թեկուզ մեկն ու մեկը։

Բայց բուրժուազիայի այն հիմնական հակասությունը, որ կա մասնավոր սեփականությունը պաշտպանելու ձգտման և ազատության հասնելու ցանկության միջև, այդ հակասությունն այնքան խոր է, որ լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչները, կողմնակիցներն անխուսափելիորեն ընկնում են այդ ծիծաղելի դրության մեջ։ Ինչպես բոլորին հայտնի յե, Ռուսաստանում աճագին արագությամբ զարգանում է շատ լայն լիբերալ կուսակցություն, որին են պատկանում թե «Союз Освобождения»-ն [25], թե բազմաթիվ զեմստվային գործիչներ և թե այնպիսի թերթեր, ինչպիսիք են՝ «Наша Жизнь» [26], «Наши дни» [27], «Сын Отечества» [28], «Русские Ведомости» [29], և այլն, և այլն։ Այդ լիբերալ-բուրժուական կուսակցությունը սիրում է, որ իրեն կոչեն «սահմանադիր-**դեմոկրատական**» կուսակցություն։ Իսկ իրոք, ինչպես յերևում է անլեգալ «Освобождение»-ի հայտարարություններից և ծրագրից, դա **միապետական** կուսակցություն է։ Նա ամենևին չի ցանկանում հանրապետություն։ Նա չի ցանկանում մեկ պալատ [30] և վերին պալատի համար մտցնում է անուղղակի և փաստապես ոչ ընդհանուր ընտրական իրավունք (նստակեցության ցենզ)։ Նա ամենևին չի ցանկանում, որ ամբողջ գերագույն պետական իշխանությունն անցնի ժողովրդին (չնայած ցույց տալու համար նա շատ է սիրում խոսել իշխանությունը ժողովրդին անցնելու մասին)։

Նա չի ցանկանում ինքնակալության **տապալումը**, նա լոկ ցանկանում է իշխանության բաժանումը 1) միապետության, 2) վերին խոշոր պալատի (որտեղ կգերակշռեն հողատերերն ու կապիտալիստները) և 3) ներքին պալատի միջև. **մենակ վերջինս** է, որ կառուցվում է դեմոկրատական սկզբունքներով։

Այսպիսով մեր աչքի առաջ է անկասկածելի այն փաստը, որ մեր «դեմոկրատական» բուրժուազիան հանձինս իր նույնիսկ ամենաառաջավոր, կրթված, անմիջականորեն կապիտալին ամենից քիչ յենթակա ներկայացուցիչների քարշ է գալիս հեղափոխության պոչից։ Այդ «դեմոկրատական» կուսակցությունը վախենում է ժողովրդի ինքնակալությունից։ Կրկնելով մեր համաժողովրդական Հիմնադիր Ժողովի լոզունգը, նա իրականում բոլորովին աղճատում է այդ լոզունգի իմաստն ու նշանակությունը, նա խաբում է ժողովրդին այդ լոզունգը գործածելով, ավելի ճիշտ կլինի ասել՝ այդ լոզունգն իզուր գործ գնելով։



Ի՞նչ է «Համաժողովրդական Հիմնադիր Ժողովը»։ Այդ այնպիսի ժողով է, որը, նախ, իրոք արտահայտում է ժողովրդի կամքը.— դրա համար պետք է ընդհանուր և այլն ընտրական իրավունք և նախընտրական ագիտացիայի ազատության լիակատար յերաշխիք։ Այդ այնպիսի ժողով է, որը, յերկրորդ, **իրոք ուժ յեվ իշխանություն ունի** «հիմնադրելու» ժողովրդի ինքնակալությունն ապահովող պետական կարգ։ Արևի լույսի պես պարզ է, որ առանց այս յերկու պայմանի ժողովը չի կարող ոչ իրոք համաժողովրդական, ոչ իրոք հիմնադիր լինել։ Մինչդեռ մեր լիբերալ բուրժուաները, մեր սահմանադրական-միապետականները (որոնք ժողովրդի վրա ծիծաղելու համար իրենց դեմոկրատ են անվանում) չեն ցանկանում այս պայմաններից և **ոչ մեկի** ռեալ ապահովումը։ Նրանք ոչ միայն ոչնչով չեն ապահովում ոչ նախընտրական ագիտացիայի լիակատար ազատությունը, ոչ էլ իրական ուժի և իշխանության անցումը Հիմնադիր Ժողովին,— նրանք, ընդհակառակը, **ապահովում են** մեկի և մյուսի **անհնարինությունը**, որովհետև նրանք ապահովում են միապետությունը։ Ռեալ իշխանությունը և ուժը մնում են Նիկոլայ Արյունոտի ձեռքում. այս նշանակում է, որ ժողովրդի ամենագլխավոր թշնամին ժողով գումարելով «կապահովի» ընտրությունների համաժողովրդական և ազատ բնույթը։ Ճիշտ է, չէ՞, թե ինչքան դեմոկրատական է այս։ Այս նշանակում է, որ Հիմնադիր Ժողովը յերբեք չի ունենա և յերբեք էլ չպետք է ունենա (ըստ լիբերալ բուրժուաների մտադրության) ամբողջ ուժն ու իշխանությունը. Նա պետք է մնա բոլորովին առանց ուժի և բոլորովին առանց իշխանության։ Նա պետք է լոկ **հաշտվի, համաձայնվի, պայմանավորվի, սակարկի** Նիկոլայ II-ի հետ, որ նա շնորհի իրեն, ժողովին իր ցարական իշխանության մասնիկները։ Ընդհանուր ձայնտվությամբ ընտրված Հիմնադիր Ժողովը ոչնչով չի զանազանվում ներքին պալատից։ Նշանակում է ժողովրդի կամքն արտահայտելու և անցկացնելու համար գումարվող Հիմնադիր Ժողովը լիբերալ բուրժուազիայի կողմից նշանակվում է նրա համար, որպեսզի «հիմնադրի» **ժողովրդի կամքի վրա** վերին պալատի կամքը և պլյուս դարձյալ միապետության կամքը, Նիկոլայի կամքը։

Մի՞թե ակնհայտ չէ, որ խոսելով, ճառելով, աղաղակելով Համաժողովրդական Հիմնադիր Ժողովի մասին, պարոնայք լիբերալ բուրժուաները, ասվաբաժդենիանականներն իրոք պատրաստում են **հակաժողովրդական խորհրդակցական** ժողով։ Փոխանակ ժողովրդին ազատելու, նրանք ցանկանում են սահմանադրական ճանապարհով ժողովրդին յենթարկել, առաջին, ցարի իշխանությանը (միապետական սկզբունք) և, յերկրորդ, կազմակերպված խոշոր բուրժուազիայի իշխանությանը (վերին պալատ)։

Ով ցանկանում է ժխտել այս յեզրակացությունը, նա թող փորձի հաստատել, 1) վոր ընտրությունների մեջ հնարավոր է ժողովրդի կամքի իրական արտահայտությունը առանց ագիտացիայի լիակատար ազատության և ամեն մի արտոնության փաստական վոչնչացման, արտոնության, վոր կարող կլինի ունենալ ցարական կառավարությունը այդ ագիտացիայում, 1) վոր իր ձեռքում ռեալ ուժ և իշխանություն չունեցող ներկայացուցիչների ժողովը, յերբ ուժն ու իշխանությունը մնում են ցարի ձեռքում, իրոք միայն խորհրդակցական ժողով չե։ Մեկը կամ մյուսը կարող են պնդել միայն փորձված շառլատանները կամ անհույս հիմարները։ Պատմությունը անհերքելիորեն ապացուցում է, վոր միապետական իշխանության կողքին գոյություն ունեցող ներկայացուցչական ժողովը, քանի դեռ իշխանությունը մնում է միապետի ձեռքում, իրոք հանդիսանում է խորհրդակցական ժողով, վորը վոչ թե միապետի կամքը յենթարկում է ժողովրդի կամքին, այլ միայն **համաձայնեցնում** է ժողովրդի կամքը միապետի կամքի հետ, այսինքն բաժանում է իշխանությունը միապետի ու ժողովրդի միջև, սակարկելով ձեռք է բերում նոր կարգ, բայց չի հիմնադրում այն։ Պատմությունն անհերքելիորեն ապացուցում է, վոր իրոք ազատ ընտրությունների մասին, ամբողջ ժողովրդին նրանց նշանակության ու բնույթի հետ քիչ-շատ լրիվ կերպով ծանոթացնելու մասին խոսք անգամ լինել չի կարող առանց հեղափոխության դեմ կռվող կառավարությունը ժամանակավոր հեղափոխական կառավարությամբ փոխելու։ Յեթե մենք նույնիսկ մի րոպե ընդունենք անհավատալին ու անկարելին, այսինքն այն, վոր ցարական կառավարությունը վճռելով «Հիմնադիր» (կարդա՝ խորհրդակցական) ժողով գումարել, ապահովե ագիտացիայի **ձեվական** ազատությունը, ապա, այնուամենայնիվ, նրա ձեռքում կմնան ագիտացիայի այն հսկայական ոգուտներն ու առավելությունները, վոր տալիս է կազմակերպված պետական իշխանությունը. առաջին ժողովրդական ժողովի ընտրություններին ագիտացիայի այդ ոգուտներից ու առավելություններից կոգտվի նա, ով բոլոր միջոցներով ճնշել է ժողովրդին, և ումից ժողովուրդը զոռով սկսել է ազատություն կորզել։

Մի խոսքով՝ մենք նորից միևնույն յեզրակացությանն ենք գալիս, ինչ յեզրակացության վոր յեկել եյինք անցյալ անգամ («Пролетарий» № 3), յերբ քննում եյինք այս հարցը ուրիշ կողմից։ Համաժողովրդական Հիմնադիր Ժողովի լոզունգն ինքնըստինքյան, առանձին վերցրած, ներկայումս միապետական բուրժուազիայի լոզունգն է, բուրժուազիայի և ցարական կառավարության միջև գործարքի մի լոզունգ։ Հեղափոխական կռվի լոզունգ կարող է միայն լինել ցարական կառավարության տապալումը և նրա փոխարինումը ժամանա-



կավոր հեղափոխական կառավարությամբ, վորը պետք է գումարի Համաժողովրդական Հիմնադիր Ժողով։ Թող Ռուսաստանի պրոլետարիատն այս առթիվ իլլյուզիաներ չստեղծի իր համար. նրան խաբում են՝ ոգտվելով ընդհանուր վրդովմունքից՝ իր իսկ սեփական լոզունգների գործադրման միջոցով։

Յեթե մենք ուժ չունենանք կառավարության զինված ուժին հակադրելու ժողովրդի զինված ուժը, յեթե ցարական կառավարությունը գլխովին չջարդվի և ժամանակավոր հեղափոխական կառավարությամբ փոխարինվի, այն ժամանակ ամեն մի ներկայացուցչական ժողով, ինչքան ել վոր նրան համաժողովրդական և հիմնադիր տիտղոսները տան, իրոք խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչների ժողով կլինի՝ ցարի հետ գործարքի մտնելու իշխանությունը իրենց միջև բաժանելու համար։

Ինչքան վոր ավելի յե մոտենում ժողովրդի կռիվը ցարի դեմ իր վճռական յելքին, ինչքան ավելի հավանական է ժողովրդական ներկայացուցիչների գումարման պահանջի արագ իրագործումը, այնքան ավելի խիստ կերպով պետք է հետևի հեղափոխական պրոլետարիատը «դեմոկրատական» բուրժուազիային։ Ինչքան ավելի շուտ նվաճենք մենք ազատությունը, այնքան ավելի շուտ պրոլետարիատի այս դաշնակիցը նրա թշնամին կդառնա։ Յեվ այս դարձը մթագնելուն կծառայի, նախ, բուրժուազիայի իբր թե դեմոկրատական լոզունգների մթությունը, կիսատությունը և անորոշությունը, իսկ յերկրորդ, պրոլետարիատի լոզունգները ֆրազ դարձնելու ձգտումը, ազատության և հեղափոխության ռեալ յերաշխիքները բանավոր խոստումներով փոխարինելը։ Այժմ պահանջվում է, վոր բանվորները տասնապատիկ ուշադրությամբ և աչալրջությամբ հսկեն «դեմոկրատների» վրա։ «Համաժողորդական Հիմնադիր Ժողով» բառերը դատարկ բառեր դուրս կգան, յեթե այդ Ժողովը չկարողանա ընտրությունների և ընտրական ագիտացիայի ռեալ պայմանների շնորհիվ ժողովրդի կամքը արտահայտել, յեթե նա հնար չի ունենա ինքնուրույն կերպով նոր կարգ հիմնադրել։ Ծանրության կենտրոնն այժմ Համաժողովրդական Հիմնադիր Ժողով գումարելու հարցից փոխվում է նրա գումարման **յեղանակների** հարցի վրա։ Մենք կանգնած ենք վճռական անցքերի նախորյակին։ Զվստահելով ընդհանուր դեմոկրատական լոզունգներին, պրոլետարիատը պետք է հակադրի նրանց իր սեփական պրոլետարական-դեմոկրատական լոզունգներն իրենց ամբողջ լիակատարությամբ։ Միայն այդ լոզունգներով ղեկավարվող ուժը կարող է իրոք ապահովել հեղափոխության լիակատար հաղթանակը։

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ [31].

Յերկուշաբթի ուշ յերեկոյան հեռագիրը Յեվրոպային լուր բերեց ցարի հոկտեմբերի տասնյոթի [32] մանիֆեստի մասին։ «Ժողովուրդը հաղթեց։ Ցարն անձնատուր յեղավ։ Ինքնակալությունը դադարեց գոյություն ունենալուց»—հաղորդում եր «Times»-ի[33] թղթակիցը։ Այլ կերպ արտահայտվեցին ռուսական հեղափոխության հեռավոր բարեկամները, վորոնք Բալտիմորից (Հյուսիսային Ամերիկա) հեռագիր ուղարկեցին «Пролегарий»-ին [24]. «Շնորհավորում ենք ռուսական հեղափոխության առաջին մեծ հաղթանակը»։

Անցքերի այս վերջին գնահատությունն անկասկած շատ ավելի ճիշտ ե։ Մենք լիակատար իրավունք ունենք ցնծալու։ Ցարի զիջումը իրոք հեղափոխության մեծագույն հաղթանակն ե, բայց այդ հաղթանակը դեռ ամենևին չի վճռում ազատության ամբողջ գործի բախտը։ Ցարը դեռ ամենևին անձնատուր չի յեղել։ Ինքնակալությունը դեռ ամենևին չի դադարել գոյություն ունենալուց։ Նա միայն նահանջել ե, թողնելով թշնամուն ճակատամարտի դաշտը, նահանջել և չափազանց լուրջ կռվում, բայց նա դեռ ամենևին ջարդված չե, նա դեռ հավաքում ե իր ուժերը, և հեղափոխական ժողովրդին դեռ շատ լրջագույն մարտական խնդիր ե մնում վճռելու, վորպեսզի հեղափոխությունը հասցնի մինչև իրական ու լիակատար հաղթության։

Հոկտեմբերի 17-ի օրը կմնա պատմության մեջ իբրև ռուսական հեղափոխության մեծ օրերից մեկը։ Աշխարհում չտեսնված համաժողովրդական գործադուլն [35] իր գագաթնակետին հասավ։ Ռուսաստանի բոլոր ծայրերում հերոսական համերաշխության վողևորության մեջ վոտքի յելած պրոլետարիատի հզոր ձեռքը կանգնեցրեց ամբողջ արդյունաբերական, առևտրական և պետական կյանքը։ Յերկիրը փոթորկից առաջ խաղաղվեց։ Յերբեմն մեկ, յերբեմն մյուս խոշոր քաղաքից լուրեր եյին հասնում մեկը մյուսից ավելի անհանգստացնող։ Զորքը տատանվում եր։ Կառավարությունը ռեպրեսսիաններից հրաժարվում եր, հեղափոխականները չեյին սկսում բաց լուրջ հարձակումներ, բայց ապստամբությունը տարերային ուժով պոռթկում եր ամենուրեք։

Յեվ ցարական կառավարությունը վերջին րոպեյին զիջման դիմեց՝ գիտակցելով, վոր բռնկումն անխուսափելի յե, վոր լիակատար հաղթություն տանել նա վոչ մի դեպքում և անպայման արդեն ի վիճակի չե, իսկ լիակատար պարտություն կրել նրա համար շատ ու շատ հնարավոր ե։ «Սկզբում արյունհեղություն կլինի, իսկ հետո սահմանադրություն»,—հայտարարել ե, ինչպես պատմում են, Տրեպովը [36]։ Սահմանադրության անխուսափելիության մասին, նույնիսկ տվյալ ապստամ-



բության ճնշումից հետո, չեր կարող արդեն վոչ մի կասկած լինել։ Յեվ կառավարությունը հաշվեց, վոր ավելի լավ ե ռիսկ չանել լուրջ և ընդհանուր արյունհեղությամբ, վորովհետև ժողովրդի հաղթության դեպքում ցարական իշխանությունն իսպառ կջնջվեր։

Մեզ հայտնի յե միայն մի չնչին մասը այն տեղեկությունների, վորոնք կենտրոնացել եյին յերկուշաբթի, հոկտեմբերի 17-ին կառավարության ձեռքը և հարկադրեցին նրան խուսափել հուսահատ կռվից և զիջել։ Տեղական և կենտրոնական իշխանությունների ամբողջ ուշադրությունն ուղղված եր այն բանի վրա, վորպեսզի կանգնեցնեն ապստամբության ուժեղ աճման հաղորդագրությունները կամ կրճատեն այդ հաղորդագրությունները։ Բայց նույնիսկ հենց այն աղքատիկ, պատահական, կրճատված նյութը, վոր մուտք գործեց յեվրոպական մամուլը, վոչ մի կասկած չի թողնում, վոր դա իրոք ապստամբություն եր, վոր ընդունակ եր մահվան սարսափ ազդել ցարին և ցարական մինիստրներին։

Ցարիզմի և հեղափոխության ուժերը հավասարակշռվել են,—գրում եյինք մենք մեկ շաբաթ սրանից առաջ [37] համառուսական քաղաքական գործադուլի առաջին լուրի հիման վրա։ Ցարիզմն արդեն անզոր եր հեղափոխությունը ճնշել։ Հեղափոխությունը դեռ անզոր ե ջախջախել ցարիզմը։ Բայց ուժերի այսպիսի հավասարակշռության ժամանակ ամեն մի դանդաղում ցարիզմին մեծագույն վտանգ եր սպառնում, վորովհետև դանդաղումն անխուսափելիորեն տատանում եր մտցնում զորքի մեջ։

Ապստամբությունը բորբոքվեց։ Արյունն արդեն թափվում եր Ռուսաստանի բոլոր կողմերում։ Ժողովուրդը Ռևելից մինչև Օդեսսա, Լեհաստանից մինչև Սիբիր կռվում եր բարրիկադների վրա։ Զորքերն առանձին մանր ընդհարումների մեջ հաղթում եյին, բայց միևնույն ժամանակ սկսեցին լուրեր հասնել նոր, դեռ չտեսնված մի յերևույթի մասին, վոր պարզ կերպով վկայում ե ինքնակալության **զինվորական** անզորությունը։ Դրանք ապստամբած ժողովրդի հետ ցարական զորքի **բանակցությունների** լուրերն են (Խարկով), քաղաքներից զորքերի **հեռացման** լուրերը (Խարկով, Ռևել) իբրև հանգստությունը վերականգնելու միակ միջոց։ Ապստամբած ժողովրդի հետ բանակցություններ, զորքի հեռացում,—սա սկիզբն ե վախճանի։ Այս ամեն մի դատողությունից ավելի լավ ե ցույց տալիս, վոր զինվորական իշխանությունները իրենց դրությունը վերին աստիճանի խախուտ եյին համարում։ Այս ցույց ե տալիս, վոր զորքի անբավականությունն իսկապես վոր սարսափելի չափերի յեր հասել։ Առանձին լուրեր ու տեղեկություններ յերևում եյին արտասահմանյան մամուլում։ Կիևում ձերբակալում եյին կրակելուց հրաժարվող զինվորներին։ Լեհաստանում յեղել են նույնպիսի դեպքեր։ Օդեսսայում հետևակ զորքը կազար-

մաներում էյին պահում, վախենալով նրան փողոց դուրս բերել։ Պետերբուրգում սկսվել եր աշխույժ խմորում նավատորմի մեջ, և հաղորդում էյին գվարդիայի լիակատար անհուսալիության մասին։ Իսկ Սևծովյան նավատորմի մասին մինչև այժմ հնարավորություն չկա իսկական ճշմարտությունն իմանալու։ Արդեն հոկտեմբերի 17-ին հեռագրերը հաղորդեցին, վոր համառ լուրեր կան այդ նավատորմի նոր խռովության մասին, վոր բոլոր հեռագրերն իշխանությունները բռնում են, վորոնք ամեն միջոցի դիմել են, վորպեսզի թույլ չտան անցքերի մասին տեղեկություններ տարածվեն։

Բաղդատելով այս բոլոր թերի տեղեկությունները, չի կարելի այն յեզրակացության չգալ, վոր ինքնակալության դրությունը նույնիսկ զուտ զինվորական տեսակետից հուսահատական եր։ Նա դեռ ճնշում եր մասնակի բռնկումները, նրա զորքերը դեռ մեկ այստեղ, մեկ այնտեղ վերցնում էյին բարրիկադները, բայց այս մասնավոր ընդհարումները բոցավառում էյին կրծքերը, միայն ուժեղացնում էյին վրդովմունքը, միայն մոտեցնում էյին ավելի ուժեղ ընդհանուր բռնկումը, իսկ հենց նրանից էլ վախենում եր կառավարությունը, վոր զորքի վրա արդեն հույս չեր դնում։

Թշնամին լուրջ ճակատամարտը չընդունեց։ Թշնամին նահանջեց, թողնելով հեղափոխական ժողովրդին կռվի դաշտը, նահանջեց նոր դիրքը, վոր նրան ավելի լավ ամրացրած ե թվում, և վորտեղ նա հույս ունի ավելի հուսալի ուժեր հավաքել, նրանց համախմբել և խրախուսել, լավագույն մոմենտ ընտրել հարձակման համար։

Յեվրոպական բուրժուական մամուլի մի ամբողջ շարք համեմատաբար «անաչառ» վկայություններ հաստատում են մեծ որվա, հոկտեմբերի 17-ի այսպիսի գնահատությունը։

Այս տեսակետից յեվրոպական բուրժուազիան հանգիստ ե հառաչում։ Ցարական մանիֆեստն ուղիղ սահմանադրություն ե խոստանում.— Դուման որենսդրական իրավունքներ ե ստանում, վոչ մի որենք չի կարող ուժի մեջ մտնել առանց ժողովրդական ներկայացուցիչների հավանության, շնորհված ե մինիստրների պատասխանատվություն, շնորհված են քաղաքացիական ազատություններ, անձի անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների ու միությունների ազատություն։ Բորսան էլ ե շտապում մեծ վստահություն ցույց տալ ռուսական ֆինանսներին։ Վերջերս ընկած ռուսական թղթերի կուրսը բարձրանում ե։ Օտարերկրացի բանկիրները, վորոնք փախուստի դիմեցին հեղափոխական Պետերբուրգից[38], խոստանում են յերկու շաբաթ հետո վերադառնալ։ Սահմանադրությունը յեվրոպական բուրժուազիային «խաղաղ» մանր զիջումների գրավական ե թվում, վորոնք լիովին գոհացնում են ունևոր դասակարգերին, թույլ չտալով միևնույն ժա-



մանակ, վոր հեղափոխական պրոլետարիատը «չափազանց շատ» ազատություն ձեռք բերի։

Բայց մյուս կողմից նույնիսկ լիբերալ բուրժուաները չեն կարող չտեսնել, վոր ցարի մանիֆեստը պարունակում ե միայն բառեր, խոստումներ։ Իսկ ո՞վ այժմ կհավատա լոկ խոստումներին։ Արդյոք ծաղրը չե՞ն այդ բոլոր ֆրազները անձի անձեռնմխելիության և խոսքի ազատության մասին, յերբ բանտերը դեռևս լցված են այսպես կոչված քաղաքական հանցավորներով, յերբ ցենզուրան դեռ շարունակում ե պահվել։ Ի՞նչ մարդիկ կարող են իրականացնել ցարի խոստումները։ Մի՞թե Վիտտեյի[39] մինիստրությունը, վորի մեջ ըստ լուրերի մտնում են Կուզմին-Կարավայեը[40], Կոսիչը[41], Կոնին[42]։ Այդ նույնիսկ լիբերալ բուրժուազիայի մինիստրություն չի լինի։ Այդ դեռևս միայն լիբերալ **բյուրոկրատիայի** մինիստրություն ե, վորին այնքան անգամ արդեն հաղթել ե պալատական ռեակցիոն թայֆան։ Մի՞թե ժողովուրդն իր արյունը թափեց ազատության կռվում, վորպեսզի հույս դնի լիբերալ բյուրոկրատների վրա, վորոնք զլուխ են ազատում մենակ բառերով ու խոստումներով։

Վո՛չ, ցարիզմը դեռ ամենևին անձնատուր չի յեղել։ Ինքնակալությունը դեռ ամենևին չի ընկել։ Հեղափոխական պրոլետարիատին դեռ սպասում են մի շարք մեծ կռիվներ, և առաջին հաղթանակը նրան կոգնի համախմբել իր ուժերը և կռվում իր համար նոր դաշնակիցներ ընտրել։

«Հենց ազատության գործի հաջողությունը,—գրում եր մանիֆեստի հրատարակման որը «Թայմսի» թղթակիցը,—կդրդի ռեակցիոն տարրերին նոր գործունեյության, և քանի դեռ բանակը մնում ե իր հին պետերի իշխանության տակ, Ռուսաստանը չի կարող ապահոված լինել **պրոնունցիամենտոյից**[43]»։ «Դեռ հարց ե, թե արդյոք կառավարության հարկադրական զիջումը հեղափոխական վոգևորության ամենաթաք պահին չի՞ ծառայի իբրև ազդանշան հեղափոխության նոր ուժեղացման»։ «Անհայտ ե, արդյոք բյուրոկրատիան իր միջնաբերդից դո՞ւրս ե շպրտված, թե՞ նա միայն իր առաջավոր դիրքերից նահանջել ե»,—ասում են բուրժուական լավատեսները, չնայած փաստերն աշկարա ցույց են տալիս, վոր ինքնակալության «միջնաբերդը» դեռևս իր ամբողջ ուժով մնում ե։

Զիջումի հարկադրական բնույթն ամենից ավելի հուզում ե չափավոր բուրժուաներին։ Ֆրանսիական տիրապետող փողի տոպրակի որգան «Տանը» սարսափելի վրդովվում եր «անարխիայով» և հայհոյանք ու բամբասանք եր ժայթքում համառուսական քաղաքական գործադուլի կազմողների և մասնակցողների դեմ։ Այժմ այդ թերթն ինքնըստինքյան ցարի սահմանադրական խոստումներով բավարարված, անհան-

ճշտությամբ նկատում է. «Ցարը փոխանակ իր ձեռներեցությամբ գործելու, պարզապես ստորագրել է լիբերալ ոպպոզիցիայի «հրահանգները»։ Այս վատ ձև է, վոր հետևողական ռեֆորմներին հարկադրական բնույթ է տալիս, ինչ վոր հատվածական, հանկարծակի բնույթ։ Այս յեղանակը կառավարությունը հակասության մեջ է դնում ինքն իր հետ և մրցանակ տալիս բռնությանը։ Դժբախտաբար չափազանց պարզ է, վոր գործն իրոք խիստ հեռու չեր հասել, վոր այլ յելք չկար այն փակուղուց, ուր գցել եյին կառավարությանը։ Դե՛, մոռանանք շուտով այդ կապիտուլյացիայի բնույթը, կապիտուլյացիա վոչ միայն սահմանադրականների առաջ, չափավոր մարդկանց առաջ, վորոնց հարկ եր ամենից առաջ ականջ դնել, այլ կապիտուլյացիա գործադուլի առաջ, կապիտուլյացիա հեղափոխության առաջ»։

Վո՛չ, պարոնայք բուրժուաներ, բանվորները յերբեք չեն մոռանա ցարական կապիտուլյացիայի հարկադրական բնույթը։ Բանվորները յերբեք չեն մոռանա, վոր միայն ուժով, իրենց կազմակերպության, իրենց համերաշխության, իրենց մասսայական հերոսության ուժով նրանք ցարիզմից կորզեցին ազատության ճանաչումը թղթով, մանիֆեստով, նրանք ազատությունը կխլեն նաև գործով։

Մենք վերն ասացինք, վոր թշնամին նահանջեց, կռվի դաշտը թողնելով հեղափոխական պրոլետարիատին։ Մենք այժմ պիտի ավելացնենք՝ նահանջող թշնամուն շարունակում են յեռանդով հետամտել։ Յերկուշաբթի, հոկտեմբերի 17-ին լույս տեսավ ցարի մանիֆեստը։ Յերեքշաբթի, 18-ին, ըստ Վոլֆի[14] գործակալության հաղորդագրության, լույս տեսավ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մանիֆեստը, վոր հսկայական որինակներով հրատարակվեց Պետրոգրադում։ Մանիֆեստը հայտարարում է, վոր պրոլետարիատի կռիվը բոլորովին չի ընդհատվում ցարական մանիֆեստի հրատարակությամբ։ Պրոլետարիատի տակտիկան պիտի լինի — իր հարվածների տակ շնորհված իրավունքն ոգտագործել, բանվորների ժողովներ կազմել՝ գործադուլի շարունակման հարցը վճռելու համար, միլիցիա կազմակերպել՝ հեղափոխական իրավունքները պաշտպանելու համար, լիակատար ամնիստիայի (ներման) պահանջը ներկայացնել։ Ժողովրդական հավաքույթների սոցիալ-դեմոկրատ հռետորները պնդում են Հիմնադիր ժողովի գումարման վրա։ Գործադուլային կոմիտեն, ըստ հեռագրի, ամնիստիա յե պահանջում ու ընդհանուր և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա Հիմնադիր ժողովի անհապաղ գումարում։

Հեղափոխական բնազդը միանգամից թելադրել է Պետերբուրգի բանվորներին ճիշտ լոզունգ՝ կռվի յեռանդուն շարունակում, նոր գրաված դիրքերի ոգտագործում գրոհը շարունակելու ինքնակալության իսկական վոչնչացման համար։ Յեվ կռիվը շարունակվում է։ Ժողովները հաճախակի և բազմաթիվ են դառնում։ Առաջին հաղթությունից



առաջացած ուրախությունը և որինական հպարտությունը չի խանգարում, վոր նոր ուժեր կազմակերպեն հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար։ Նրա հաջողությունը կախված է այն բանից, վոր ազատության կողմը գրավեն ժողովրդի ել ավելի լայն շերտերը, վոր նրանք լուսավորվեն և կազմակերպվեն։ Բանվոր դասակարգը համառուսական քաղաքական գործադուլով ապացուցեց իր հսկայական ուժերը, բայց քաղաքային պրոլետարիատի հետամնաց շերտերում մենք դեռ շատ աշխատանք ունենք կատարելու։ Ստեղծելով բանվորական միլիցիա,—հեղափոխության այս միակ հուսալի պատվարը,—պատրաստվելով նոր և ել ավելի վճռական կռվի, պաշտպանելով մեր հին լոզունգները, մենք պետք է նույնպես առանձին ուշադրություն դարձնենք բանակին։ Նրա շարքերում ցարի հարկադրաբար արած զիջումն ամենից ավելի տատանում պետք է մտցներ, և այժմ զինվորներին գրավելով բանվորական ժողովները, ուժեղացնելով ագիտացիան կազարմաներում, ընդլայնելով կապերն սպաների հետ, մենք պետք է բանվորների հեղափոխական բանակի կողքին զորքի մեջ ել ստեղծենք գիտակից հեղափոխական կադրեր, զորքի, վորը դեռ յերեկ բացառապես ցարական զորք եր, վորն այժմ ժողովրդական զորք դառնալու նախորյակին է կանգնած։

Հեղափոխական պրոլետարիատը հասավ այն բանին, վոր զորքին չեզոքացրեց, անզոր դարձնելով նրան ընդհանուր գործադուլի մեծ որերին։ Նա այժմ պետք է ձգտի այն բանին, վոր զորքն ամբողջովին անցնի ժողովրդի կողմը։

Հեղափոխական պրոլետարիատը քաղաքային հեղափոխությունը առաջին մեծ հաղթությանը հասցրեց։ Նա պետք է այժմ հեղափոխության բազան լայնացնի և խորացնի, տարածելով այն գյուղում։ Գյուղացիությունը բարձրացնել, վոր գիտակից կերպով պաշտպանի ազատության գործը, ամենալուրջ միջոցներ պահանջել հոգուտ գյուղացիության, նախապատրաստել գյուղական շարժում, վորը քաղաքի առաջավոր պրոլետարիատի հետ կապված վերջնականորեն ջախջախի ինքնակալությունը, նվաճի լրիվ ու իսկական ազատություն—այս է այժմ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի հերթական խնդիրը։

Հեղափոխության հաջողությունը կախված է պրոլետարիատի և գյուղացիության մասսաների այն չափերից, վորոնք վոտքի կելնեն պաշտպանելու այն և իր վախճանին հասցնելու այն։ Հեղափոխական պատերազմը մյուս պատերազմներից նրանով է տարբերվում, վոր նա իր պահեստի գլխավոր ուժերը քաղում է իր թշնամու յերեկվա դաշնակիցներից, ցարիզմի յերեկվա կողմնակիցներից կամ այն մարդկանց միջից, վորոնք կուրորեն գնում եյին ցարիզմի յետևից։ Յեվ համառուսական քաղաքական գործադուլի հաջողությունն ավելի շատ բան

կասի գեղջուկի խելքին ու սրտին, քան վորևե մանիֆեստի ու օրենքի շփոթ խոսքերը։

Ռուսական հեղափոխությունը նոր-նոր սկսում եր զարգանալ, յերբ ամբողջ քաղաքական նախաբեմը բռնում եյին լիբերալ բուրժուաները, ինչպես մի տարի առաջ եր։

Հեղափոխությունը վոտքի կանգնեց, յերբ հանդես յեկավ հունվարի 9-ին քաղաքային բանվոր դասակարգը։

Հեղափոխությունը առաջին հաղթանակը տարավ, յերբ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների պրոլետարիատը մեկ մարդու նման վոտքի յելավ և ցնցեց ցարական գահը, վորից այնքան անհամար պատուհասներ եյին տեսել բոլոր ժողովուրդները և ամենից ավելի բոլոր ժողովուրդների աշխատավոր դասակարգերը։

Հեղափոխությունը մինչև վերջ կջարդի թշնամուն և կջնջի յերկրի յերեսից արյունոտ ցարի գահը, յերբ բանվորները մեկ ել վոտքի յելնեն և իրենց յետևից տանեն՝ գյուղացիությունը։

Իսկ հետո.—հետո ռուսական հեղափոխությունը ելի պահեստ ունի։ Անցել են այն ժամանակները, յերբ ժողովուրդները և պետությունները կարող եյին իրարից առանձնացած ապրել։ Նայեցեք, Յեվրոպան արդեն ալեկոծվում է։ Նրա բուրժուազիան շփոթված է և պատրաստ է միլիոններ ու միլիարդներ տալ, միայն թե կանգնեցնի Ռուսաստանի հրդեհը։ Յեվրոպական զինվորական պետությունների կառավարողները մտածում են ցարին զինվորական օգնություն հասցնելու մասին։ Վիլհելմ [49] արդեն միքանի կրեյսեր և յերկու դիվիզիա ականակիր է ուղարկել ուղիղ հարաբերություններ հաստատելու գերմանական սալդաֆոնների և Պետերհոֆի [46] միջև։ Յեվրոպական հակահեղափոխությունը ձեռք է մեկնում ռուսական՝հակահեղափոխությանը։

Ապա մի փորձեք, փորձեք, քաղաքացի Հոհենցոլլերն [47]։ Մենք ել ունենք ռուսական հեղափոխության յեվրոպական պահեստ։ Այդ պահեստը միջազգային սոցիալիստական պրոլետարիատն է, միջազգային հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։ Ամբողջ աշխարհի բանվորները հիացմունքի թրթիռով են վողջունում ռուս բանվորների հաղթանակը և գիտակցելով սոցիալիզմի միջազգային բանակի գնդերի սերտ կապը, իրենք ել են պատրաստվում մեծ և վճռական կռվի համար։

Դուք մենակ չեք, Ռուսաստանի բոլոր բանվորնե՛ր և գյուղացիք։ Յեվ յեթե ձեզ հաջողվի տապալել, մինչև վերջ ջախջախել ու վոչնչացնել ճորտատիրական, վոստիկանական, կալվածատիրական և ցարական Ռուսաստանի տիրաններին, այն ժամանակ ձեր հաղթանակը կապիտալի բռնակալության դեմ մղվող համաշխարհային կռվի ազդանշանը կլինի, կռիվ աշխատավորների լիակատար, վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ազատագրության համար, կռիվ մարդկությունը աղքատությունից ազատելու և սոցիալիզմի իրականացման համար։



## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՊԱԳԱ ԿՌԻՎԸ.

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիայի կողմից հրատարակվող յերգիծաբանական լրագրներից մեկը սրանից մեկ ու կես տարի առաջ տպել եր Նիկոլայ II-ի ծաղրանկարը։ Ցարը նկարված եր զինվորական տարազով, ծիծաղկոտ դեմքով։ Նա հացի մի կտորով չարացնում եր մի գզգզված գեղջուկի, մեկ այդ կտորը համարյա նրա բերանը կոխելով, մեկ այն յետ քաշելով։ Գզգզված գեղջուկի դեմքը մեկ պայծառանում եր բավականության ժպտով, մեկ գազազած կնճռոտվում եր, յերբ հացի կտորը, վոր համարյա նրան եր հասնում, յետ եյին քաշում։ Այդ կտորի վրա գրված եր «սահմանադրություն» [49]։ Իսկ վերջին «տեսարանը» պատկերացնում եր գեղջուկին բոլոր ուժերը լարած, վորպեսզի մի կտոր հաց պոկի, և պոկեց Նիկոլայ Ռոմանովի գլուխը։

Շեշտակի ծաղրանկար է։ Իրոք ինքնակալությունն ահա արդեն միքանի տարի յե, ինչ «չարացնում» է ռուս ժողովրդին սահմանադրությամբ. մեկ թվում է, վոր ահա կտան այն սահմանադրությունը «համարյա բոլորովին», հետո միանգամից հաստատում են ամբողջ հին կամայականությունը, ամբողջ վոստիկանական անկարգությունը և օրինազանցությունը կրկնակի դառը ձևով։ Արդյոք վաղո՞ւց է, վոր մենք ունեյինք աշխարհի համարյա թե ամենադեմոկրատական «պարլամենտը»։ Արդյոք վաղո՞ւց է, վոր ամբողջ մամուլը քննության եր առնում կադետական մինիստրության հարցը իբրև ամենամոտ և ռեալ հնարավորություն։ Դժվար է հավատալ, վոր այդ ընդամենը սրանից 2—3 ամիս առաջ եր։ Մի զույգ հրամաններ, մանիֆեստներ, կարգադրություններ,—և հին ինքնակալությունը թագավորում է, բոլորից դատապարտված, խայտառակված և հրապարակորեն արհամարհված. գանձագողների, դահիճների և ջարդարարների մի խումբ նորից ամեն կերպ ծիծաղում է ժողովրդի վրա, նորից ջարդում է, կողոպտում, ծեծում է, բերան խցկում և օդը թունավորում անտանելի կալվածատիրական գարշահոտությամբ։

Համաժողովրդական հեղափոխական կռվի զարգացման տեսակետից կարճատև «ազատության օրերի» այս արագ փոխվելը կատաղի ռեակցիայի յերկարատև ամիսների, ուժերի այն հավասարակշռությամբ է բացատրվում, վոր անցյալ տարվա աշնանից հաստատվել է կռվողների միջև։ Ինքնակալությունն արդեն անկարող է այլևս կառավարել ժողովրդին, ժողովուրդը դեռևս ուժ չունի իրոք տապալելու ջարդարարների կառավարությունը։ Յերկու պատերազմող կողմերը կանգնած են դեմ առ դեմ նման յերկու թշնամի բանակի, կռվից հետո մեկ ժամանակավորապես հանգստանում են և ուժեր հավաքում, մեկ ել նոր կռվի նետվում ատելի թշնամու դեմ։

Կադետական[50] և Նովո-վրեմյանական[51] մամուլի հրապարակախոսներն ըստ էության իրար հետ համաձայն են այդ տատանումներ **բարոյականը հանող** գնահատումների մեջ։ Թե սրանք և թե նրանք դատապարտում են, վողբում կառավարության տատանումները, անվճռականությունը, յերերումները, կոչ են անում նրան «ամուր» լինել, ըստ վոմանց՝ ամուր լինել ռեպրեսսիաների մեջ, ըստ մյուսների՝ ամուր լինել խոստացած սահմանադրությունը կենսագործելու մեջ։ Թե սրանց և թե նրանց համար խորթ է դասակարգային կռվի ըմբռնումը, վոր փոխում է հասարակական ուժերի իրական հարաբերությունը։

Իսկ այդ կռվի զարգացման ընթացքում անխուսափելի յե հեղափոխության և ռեակցիայի շարքերում գիտակցականության և համախմբումի աճումը, անխուսափելի յե կռվի շարունակ ավելի սուր և անխնա ձևերին անցնելը։ Արագ անցումներն «ազատության օրերից»[52] «գնդակահարությունների ամիսներին»[53] ավելի քան լավ հարմարեցված են այն բանին, վորպեսզի պակասեցնեն պասսիվների և անտարբերների թիվը, վորպեսզի կռվի մեջ քաշեն նորանոր շերտեր ու տարրեր, զարգացնեն մասսաների գիտակցությունը, զանազան համառուսական փորձերի օրինակով նրանց հատկապես ռելյեֆ կերպով ցույց տալով ինքնակալության յերբեմն մեկ, յերբեմն մյուս կողմը։ Ինչքան ավելի արագ ու կտրուկ են այդ անցումները, այնքան ավելի շուտ գործը կըհանգի այն վերջին գումարին, վորն անխուսափելիորեն վորոշվում է նրանով, վոր հասարակական ուժերի գերակշռությունը ազատության կողմն է։

Այս պատճառով էլ գիտակից բանվորները կարող են լիովին հանգիստ նայել ինքնակալության ռեպրեսսիաներ գործադրելու աղշեցնողարագ «պրոգրեսսի» վրա։ Շարունակեցե՛ք նույն ձևով, պարոնայք Ռոմանովներ[54], Տրեպովներ[55], Իգնատյևներ[56] և Ստոլիպիններ[57]։ Ինչքան ավելի յեռանդուն գնաք դուք այդ ճանապարհով, այնքան ավելի շուտ կսպառեք դուք մինչև վերջ ձեր վերջին պահեստները։ Դուք ամբողջ Ռուսաստանում զինվորական դիկտատուրայով, զինվորական դրությամբ եք սպառնում։ Բայց այդպիսի զինվորական դրությունից անպայման ամենից ավելի հեղափոխությունը կշահի։ Զինվորական դիկտատուրան և զինվորական դրությունը կհարկադրեն զորաժողովել նոր զորային մասսաներ, մինչդեռ արդեն այժմ ամենից «հուսալի» զորքերի, կազակների կրկնվող զորաժողովներն այնտեղ են հասցրել, վոր կազակների ավերված ստանիցաներում (գյուղերում) ուժեղ կերպով աճել է խմորումը, ուժեղացել է այդ զորքի «անհուսալիությունը»։ Զինվորական դրությունը փող է պահանջում, իսկ ինքնակալության ֆինանսներն այժմ էլ արդեն հուսահատ դրության մեջ են։ Զինվորական դրությունն ուժեղացնում է ագիտացիան զինվորների մեջ և բնակչու-



թյանը մոռացնել է տալիս այն սարսափը, վոր տածում էյին դեպի ռեպրեսսիաների ամենից «սարսափելի» այդ ձևերը։ Լեհաստանը և Մերձբալթյան յերկիրը պերճախոս վկայում են այդ։

Մենք ասացինք, վոր ռեակցիան «սպառնում է» զինվորական դիկտատուրայով։ Իսկապես ասած այս ճիշտ չէ, վորովհետև այժմ, զինվորա-դաշտային դատարաններ[58] մտցնելուց հետո բոլոր նահանգներում, «ծայրագավառների հետ միասին», այսինքն կայսրության 87 նահանգներից 82-ում, ծիծաղելի յե զինվորական դիկտատուրայի մասին խոսել իբրև ապագայի մասին։ Դա արդեն ներկա յե և անվան փոփոխությունը, ավելի «սարսափելի» բառի գործածությունը («դիկտատուրա» փոխանակ «արտակարգ պահպանություն»), մեկ դիկտատորի նշանակումն արդեն ամենևին վոչինչ **չեն կարող** ավելացնել մասսայական ձերբակալություններին, առանց դատարանի աքսորումներին, պատժիչ արշավախմբերին, փողոցային խուզարկություններին, սպաների դատավճռով գնդակահարություններին[59]։ Ռուսաստանում արդեն այժմ թագավորում է զինվորա-վոստիկանական դիկտատուրա։ Ռեպրեսսիաներն արդեն այժմ այնտեղ են հասել, վոր Պլևեյի[60] ժամանակից այդպիսի «վերաբերմունքի» սովորած հեղափոխականներն այդ ռեպրեսսիաներից համեմատական չափով քիչ են տուժում, իսկ ամբողջ ծանրությունը թափվում է «խաղաղ» բնակչության գլխին, վորին պ.պ. Ստոլիպինները «ագիտացիա յեն անում» ամեն հավանության արժանի հաջողությամբ։

Զեմստվային ռեպրեսսիաները հետևեցին իբրև հեղափոխական ապրստամբության, վորը լիբերալ-միապետական բուրժուազիան չէր համակրում ու, այնուամենայնիվ, այդ ռեպրեսսիաները նախապատրաստեցին անխտիր ոպպոզիցիան Դումա, վորից ամենից ավելի ոգուտ քաղեցին հեղափոխական տարրերը։ Աշնանային ռեպրեսսիաները հետևում են լեգալ «սահմանադրականության» շրջանին։ Չի կարող լինել, վոր նրանք նախապատրաստեն **միայն** Դումայի ավելի ձախ կազմ։

Զարդարարների շայկան ռեպրեսսիաների անզորությունն զգում է և գես ու դեն է ընկնում պաշտպանություն վորոնելու։ Մի կողմից հոկտեմբերյանների հետ համաձայնության գալու փորձերն անհաջող անցան։ Մյուս կողմից Պարեդանոսցեն[61] ու ընկ. պատրաստում են ամեն մի «սահմանադրության» լիակատար վերացումը։ Մի կողմից համալսարանները բացվում են, ծախու մամուլը սուտ ու շիվան է բարձրացնում ամուր լիբերալիզմի անհրաժեշտության մասին։ Մյուս կողմից արգելվում է նույնիսկ կադետական կուսակցության համագումարը (ա՜յ լավ են ոգնում այդ կադետներին Ստոլիպինները)։ Ցեվ մամուլը հալածվում եր այնպես, ինչպես չէր հալածվում Դուրնովոյից[62]։ Մի կողմից զինվորա-դաշտային դատարաններ։ Մյուս կողմից լայն ծավալով մտածված գործարքի փորձը գյուղական բուրժուազիայի հետ[63]։

Կառավարությունն զգում է, որ նրա միակ փրկությունը գեղջուկներից յելած գյուղական բուրժուազիայի ամրացնելն է համայնքի ներսում, վորպեսզի հենվի նրանց վրա ընդդեմ գյուղական մասսայի։ Բայց այն նպատակը, դեպի վորը Գուչկովները[64] կգային խելոք ու զգույշ կերպով, դեպի վորը կադետները սողոսկում են նրբությամբ ու ճարպկորեն, վոստիկանական դերժի-մորդաները գնում են այնքան կոպիտ, հիմար և անճոռնի կերպով, վոր նրանց ամբողջ «ընկերության» տապալումն ամենից ավելի հավանական է ներկայանում։ Գյուղացիական բուրժուազիայի տարրերը փոքրաթիվ են, բայց տնտեսապես գյուղում շատ ուժեղ են։ Կալվածատիրական և մյուս հողերի հետ-գնումը համաձայն կադետական ագրարային ռեֆորմի տիպի **բոլոր** գյուղացիության գլխին յուղ կքսեր և հիանալի կերպով կհասներ այն նպատակին, դեպի վորը արջի պես «զոռում է» ինքնակալությունը, այսինքն՝ խիստ կամրացներ գյուղացիական բուրժուազիային, նրան դարձնելով «կարգի» պատվար։

Բայց Ռոմանովները, Տրեպովները, Իգնատյեվները և Ստոլիպինները չափազանց հիմար են, վորպեսզի հասկանան այդ։ Նրանք Դումայում գյուղացիներին հողի խնդրում կոպիտ մերժումով պատասխանեցին, իսկ այժմ զինվորների միջոցով **վաճառքի** յեն հանում կայսերական տան ու արքունական հողերը։ Արդյոք դրանից իրոք այն կստացվի, վոր գյուղական բուրժուազիայի ազդեցիկ շերտերը **ներկա** կառավարության կողմն անցնեն, դա մեծ հարցական է, վորովհետև չինովնիկների վոհմակը գործը նույնպես կքաշքշի, կկողոպտի և կաշառքներ կվերցնի, ինչպես միշտ անում եյին Ռոմանովներն ու իրանց շայկան։ Իսկ վոր գյուղացիական մասսան էլ ավելի «կվառվի» կայսերական տան և արքունական հողերի հետ-գնման լուրից, այդ անկասկած է։ Նրանց վաճառքը բազմաթիվ դեպքերում կնշանակի գյուղացիների տված վարձի **բարձրացում** իբրև հետևանք այն բանի, վոր վարձավճարը փոխվելու յե հետ-գնման վճարի։ Իսկ գյուղացիների համար տված հողի վճարի բարձրացումը, այդ ամենալավ բանն է, ինչ վոր կարող եր մտածել կառավարությունը մեր ագիտացիան իր դեմ հեշտացնելու համար։ Այդ հիանալի միջոցը էլ ավելի կզազազեցնի գյուղացիներին և նրանց կգրավի **մեր** լոզունգի կողմը՝ լրիվ հրաժարումն ամեն հողավճարից, վորը (հողը) հեղափոխության հաղթանակի ժամանակ պետք է **ամբողջովին** անցնի գյուղացիներին։

Կառավարությունը գյուղացիական բուրժուազիայի հետ սարքած իր խաղերն այսպես հիմար դասավորեց մասամբ ամեն մի վոստիկանական կառավարության հատուկ հիմարության շնորհիվ, մասամբ փողի ծայրահեղ կարիքի հետևանքով։ Ֆինանսները չափազանց վատ են։ Կրախ է սպառնում։ Արտասահմանում փող չեն տալիս։ Ներքին փո-



խառությունը չի գործում։ Ստիպված են բռնի կերպով և **ծածուկ** զետեղել այն խնայողական գանձարկղների կապիտալի մեջ,—**ծածուկ**, վորովհետև խնայողական գանձարկղի ավանդատուներն ամենից ավելի քիչ տրամադիր կլինեյին այժմ պետական ռենտա գնել։ Վոսկե վալյուտայի անխուսափելի կրախը և կրկին թղթադրամների անսահման բաց թողնելուն անցնելու անհրաժեշտությունը ինքնակալության լաքեյներն արդեն սկսում են զգալ։

Այդ նույն վոգով շարունակեցե՛ք, պարոնայք Ստոլիպիններ։ Դուք լա՛վ եք աշխատում մեր օգտին։ Դուք բնակչությունն ավելի լավ եք գրգռում, քան մենք կկարողանանք այդ անել։ Դուք մինչև վերջ հասցրեք ռեպրեսսիաները և դրանով ակնառու ցույց տվեք բոլորին մարտական հեղափոխական յելույթի մինչև վերջ հասցնելու անհրաժեշտությունը։

# ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս զեկուցումը Լենինն արել է Ռ.Ս.-Դ. Բ. Կ. III համագումարում։ Այդ համագումարում մենշևիկները ներկա չեյին։ Նրանք առանձին գումարեցին իրենց «համառուսական կոնֆերենցիան» և այդպիսով կազմակերպչական պառակտման սկիզբը դրին։ Զեկուցումը լույս է տեսել Վ. Ի. Լենինի աշխատությունների ժողովածուի VI հատորում, եջ 168։

2. Ա. Մարտինով—900-ական թվականների սկզբի ռուս եկոնոմիստների առաջնորդը։ Եկոնոմիստները կողմնակից եյին բանվորների տնտեսական կռվին տնտեսատերերի դեմ մանր-կենսական կարիքների համար։ Քաղաքական կռիվը ինքնակալության դեմ նրանք լիբերալների գործն եյին համարում։ Կուսակցության յերկրորդ համագումարից հետո Մարտինովը աչքի ընկնող մենշևիկ եր։ Այժմ Ռ. Կ. Կ. անդամ է։

3. **1905 թ. հունվարի** 9-ը.—Լենինգրադի բանվորները նշանավոր պրովոկատոր-քահանա Գապոնի ագիտացիայի ազդեցության տակ, խնդրագրով (պետիցիա) գնացին Նիկոլայ ցարի մոտ։ Ցարական դահիճները խաղաղ ցուցարարներին փամփուշտներով դիմավորեցին։ Բանվորները շատ զոհեր տալով ակնհայտ կերպով համոզվեցին, վոր ցարից և նրա կառավարությունից բացի փամփուշտներից ու բանտերից,

բանվորները վոչինչ չեն կարող ստանալ։ Հունվարի 9-ը բանվորական շարժման զարգացման մեջ դարձակետ եր դեպի հեղափոխություն։

4. «Պոչականություն» հոսանք ռուս. սոցիալ-դեմոկրատիայի մեջ, վոր կարծում եր, թե բանվորական կուսակցությունը պետք ե մասսայական շարժման պոչից քարշ գա և վոչ թե ղեկավարի այն։

5. «Պրակտիկներ»—սոց.-դեմ.-պրոֆեսիոնալ-հեղափոխականները, վորոնք վարում եյին ամբողջ կուսակցական աշխատանքը Ռուսաստանում։

6. «**Գյուղացիական պատերազմը Գերմանիայում**» բրոշյուրից վերցրած այս կտորի լրիվ բնագիրն ասում ե. «Ամենից վատթարագույնը, վոր կարող ե կանգնել ծայրահեղ կուսակցության առաջնորդի առաջ, հանդիսանում ե իշխանությանը տիրանալու հարկադրված անհրաժեշտությունը այն ժամանակ, յերբ շարժումը դեռ բավականաչափ հասունացած չե նրա ներկայացրած դասակարգի տիրապետության և այդ տիրապետությունն ապահովող միջոցների կիրառման համար»։

7. Post factum—հետագայում, փաստերից հետո։

8. «Искра»—Վ. Ի. Լենինը տվյալ դեպքում նկատի ունի այսպես կոչված նոր «Искра»-ն, վորը Վ. Ի. Լենինի խմբագրության կազմից հեռանալուց հետո անցավ մենշևիկներին։

9. «Вперед»—բայլշևիկների որգանը, վոր լույս եր տեսնում արտասահմանում 1904 թ. դեկտեմբերից մինչև 1905 թ. մայիսը։

10. **Պարվուս**—սոցիալ-դեմոկրատ, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի անդամ, աշխատակցել ե ընկ. Տրոցկու «Начало» թերթին։

11. 1848—50 թ. թ. ամբողջ Արեմտյան Յեվրոպայով անցավ հեղափոխական ալիքը, վորի հետևանքը յեղավ ինքնակալ իշխանության սահմանափակումը։

12. Պլեխանով Գ. Վ.—ռուսական մարքսիզմի հիմնադիրներից մեկը։ 1883 թ. ժընևում «Աշխատանքի ազատագրություն» խմբակի ձեռներեցը։ Կուսակցության յերկրորդ համագումարում նա գնում եր Լենինի հետ, բայց հետո անցավ մենշևիկների կողմը։

13. Տես «Դիմումի» ռուսական հրատարակությունը «Կոմմունիստների Քյոլնի դատավարությունը» բրոշյուրում։

14. «**Նոր Հռենոսյան թերթը**» հրատարակվում եր Քյոլնում Կ. Մարքսի խմբագրությամբ (1/VII 48 թ.—19/V49 թ.)։ Նա վառ հեղափոխական որգան եր 1848 թ. գերմանական հեղափոխության որերում։

15. Բ. Կ. Բ. անդամներից մեկը, III համագումարի կազմակերպողն ու անդամը Ա. Ա. Բոգդանովն եր (համագումարում Մաքսիմով), վոր լեգալ գրականության մեջ փորձում եր զուգորդել Մարքսի փիլիսոփայությունը Ավենարիուսի և Մախի փիլիսոփայության հետ։ Պլեխանովը՝ բայլշևիկների դեմ վարած բանավեճի ժամանակ ոգտվում եր



այդ հանգամանքից այն նպատակով, վոր կասկած հարուցի բայլշևիկների ուղղափառության վրա։

16. **Տուրատի**—իտալական սոցիալիստական կուսակցության աջ թևի, կորուկ-ոպպորտյունիստական «ռեֆորմիստների» առաջնորդը, կողմնակից ե խաղաղ պարլամենտական աշխատանքի ու բանվոր դասակարգի դրության մասնակի բարելավման, կողմնակից ե արմատական բուրժուազիայի հետ գործակցելուն։

17. Խոսքը վերաբերում ե 1904-5 թ.թ. ռուս-յապոնական պատերազմին։

18. «Die Reichsverfassungs kampagne»։

19. «**Յակոբինյաններ**»—1879 թ. ֆրանսիական Մեծ հեղափոխության ժամանակ ֆրանսիական պարլամենտի ձախ թևը։ Յակոբինյանները հանդիսանում եյին Ֆրանսիայի XVIII դարի վերջի հեղափոխական մանր բուրժուազիայի ներկայացուցիչները։

20. **Բադեն**—գերմանական շրջան։

21. **Կարլսրուե**—գերմանական քաղաք։

22. **Պֆալց**—Գերմանիայի շրջաններից մեկը։

23. **Վիլլիխ**—հեղափոխական գեներալ, Գերմանիայի 1848-50 թ.թ. հեղափոխության ժամանակ քաղաքացիական կռվի գործոն մասնակից։

24. «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրներ» հոդվածը Վ. Ի. Լենինը գրել ե 1905 թ. հունիսին, տպված ե «Пролетарий» № 4։ Զետեղված ե աշխ. ժողովածուի հատոր VI, եջ 234։

25. «Союз Освобождения»—լիբերալ-բուրժուական ինտելլիգենցիայի միություն, վոր ծագել ե 1905. թ.։ Նրա կազմի մեջ եյին մտնում զեմստվային շարժման գործիչները (земцы)։ Շուտով քայքայվեց։ Միության աջ թևը կազմակերպեց «Ժողովրդական ազատության» կուսակցությունը, վոր ավելի հայտնի յե կադետական (սահմանադրական-ռամկավարական) կուսակցության անվամբ։

26. «Наша Жизнь»—ազատագրության միության պառակտված ձախ թևի որգան, վոր հրատարակվում եր պրոֆ. Խոդսկու խմբագրությամբ։

27. «Наши Дни»—ձախ լիբերալ թերթ, վոր լույս եր տեսնում Լենինգրադում «Наша Жизнь»-ի փակվելուց հետո։ Խմբագիրն եր պրոֆ. Խոդսկին։ Գլխավոր աշխատակիցները—Յե. Կուսկովա, Ս. Խ. Պրոկոպովիչ և ուրիշները։

28. «Сын Отечества»—եսերների լեգալ որգանը, վոր Յուրիցինի խմբագրությամբ 1905 թ. լույս եր տեսնում Պետերբուրգում։

29. «Русские Ведомости»—ռուսական լիբերալ բուրժուազիայի որգանը, վոր հիմնվել ե 1863 թ.։ Հրատարակվում եր Մասկվայի համալսարանի լիբերալ պրոֆեսորների ամենամոտիկ մասնակցությամբ։

30. Բոլոր բուրժուական հանրապետությունների մեջ գոյություն ունեն յերկու ընտրած պալատ։ Ռուսական լիբերալները պնդում եյին յերկպալատ սիստեմի վրա։ Վերին պալատը, վոր հաստատելու յե ներքինի բոլոր վորոշումները, ըստ նրանց նախագծի պետք է ընտրվի բարձր ստացվածքային ցենզ ունեցող անձերից և գիտության ներկայացուցիչներից։

31. **«Հեղափոխության առաջին հաղթանակը»** հոդվածը վերցրած է Լենինի աշխատությունների ժողովածուի VI հատորից, եջ 537։

32. Հեղափոխական շարժման ամենատաք ժամանակ ցարական կառավարությունը բաց թողեց 1905 թ. հոկտեմբերի 17-ի նշանավոր մանիֆեստը, ցանկանալով «պոչատ սահմանադրության» այդ զիջումով պառակտում առաջ բերել հեղափոխական շարժման մեջ։ Նա լիովին հասավ այդ նպատակին։ Ռուսական լիբերալները հոկտեմբերի 17-ից հետո հանդես եյին գալիս հեղափոխության զարգացման դեմ և առաջարկում եյին ինքնակալության դեմ «վեճը» վարել հրատարակված «սահմանադրական յերաշխիքների» բազայի վրա։

33. **«Թայմս»**—խոշոր անգլիական թերթ, անգլիական բուրժուազիայի որգան։

34. «Пролетарий»—ռուս բոլշեվիկների որգան։ Լույս եր տեսնում Ժընևում 1905 թ. մայիսի 14-ից մինչև սեպտեմբերի 12։

35. 1905 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցավ ընդհանուր գործադուլ։ Այդ գործադուլի հետևանքով կառավարությունն ստիպված եր զիջման գնալ։

36. **Տրեպով**—Մոսկվայի օբեր-վոստիկանապետ և Զուբատովի աշխատակից։ 1905 թ. հունվարից հետո նա նշանակվեց Պետրոգրադի գեներալ-նահանգապետ։ Նրան է պատկանում հոկտեմբերյան օրերին վոստիկանության տված հրամանի մեջ յեղած նշանավոր ֆրազան՝ «փամփուշտներ չխնայել, անգնդակ չկրակել»։

37. Խոսքը վերաբերում է «Համառուսական քաղաքական գործադուլը» հոդվածին («Пролетарий» № 23, 1905 թ. հոկտ. 18)։ Այդ հոդվածը տպված է Վ. Ի. Լենինի աշխատությունների ժողովածուի VI հատորի մեջ, եջ 522։

38. 1905 թ. հեղափոխական օրերին ռուսաբերկրացի կապիտալիստները մասսայորեն փախչում եյին Ռուսաստանից, գլուխ փրկելով հեղափոխությունից, վորի գլխավոր շարժիչ ուժը բանվորներն եյին։

39. **Վիտտե Յու. Ս.**—Մինիստրների խորհրդի նախագահ 1905 թ.։ Աչքի ընկնող ռուս դիպլոմատ։ Նրա ճնշման տակ Նիկոլայ Ռոմանովը ստորագրեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։

40. **Կուզմին-Կարավայեվ Վ. Դ.**—Առաջին Պետական Դումայի պատգամավոր։ Դեմոկրատական ռեֆորմների կուսակցության կազմա-



կերպողներից մեկը. այդ կուսակցությունը վոչ մի քաղաքական դեր չխաղաց։

41. **Կոսիչ**—լիբերալ գեներալ, վոր հրամանատարն եր Կազանի զինվորական շրջանի (округ) զորքերի։

42. **Կոնի Ա.**—նշանավոր իրավաբան և գրող, ռուսական լիբերալ ինտելլիգենցիայի ամենից աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկը։ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մնաց Ռուսաստանում և աշխատում է լուսավորության ասպարեզում։

43. **Պրոնունցիամենտո**—սպանական բառ է։ Նշանակում է մի բուռն զինվորականների ղեկավարությամբ կատարվող զինվորական դավադրություն և քաղաքական հեղաշրջում։

44. **Վոլֆի գործակալություն**—գերմանական հեռագրական գործակալություն, վոր թերթերին հեռագրական հաղորդագրություններ է մատակարարում։

45. **Վիլհելմ**—գերմանական վերջին կայսրը։

46. **Պետերհոֆ**—քաղաք Լենինգրադի նահանգում, Ֆիննական ծոցի ափին։

47. **Հոհենցոլլերն**—գերմանական կայսրների և պրուսական թագավորների հարստությունը։

48. **«Կառավարության քաղաքականությունը յեվ ապագա կռիվը»** հոդվածը վերցված է Լենինի աշխ. ժողովածուի VI հատորի յերկրորդ մասից, եջ 57։

49. **Սահմանադրություն**—պետության հիմնական օրենքը։ Մինչև 1905 թ. Ռուսաստանը սահմանադրություն չուներ։ Գոյություն ուներ ինքնակալի անսահման իշխանություն։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը թղթի վրա սահմանափակեց ցարի իշխանությունը, իսկ գործով ինքնակալությունն իր գոյությունը պահեց մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը։

50. **Կադետներ**—սահմանադրական-ռամկավար (կոնստիտուցիոն-դեմոկրատական) կուսակցության անդամներ։ Կադետները գլխավորապես հենվում եյին խոշոր բուրժուազիայի վրա։

51. **Նովովրեմյանական**—«Новое Время» թերթի անունից, վոր ռուս սև-հարյուրակայինների որգանն եր։

52. **«Ազատության օրեր»**—այսպես են կոչվում 1905 թ. հոկտեմբերյան մանիֆեստից մինչև Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությունն ընկած օրերը, յերբ ինքնակալությունն այնքան եր թուլացել, վոր հարկադրված եր ազատության գոյության հետ հաշտվել։

53. **Գնդակահարության ամիսներ**—ռեակցիայի հաղթանակի սկիզբը (1906 թ.), վոր նշանավոր դարձավ բանվորների մասսայական գնդակահարություններով։

54. **Ռոմանով**—*ռուսաց ցարերի ազգանունը։*

55. *Տես ծանոթություն 36։*

56. **Իգնատյեվ Ա. Ի.**—*նշանավոր ռեակցիոներ։ Ամեն մի ռեֆորմի հակառակորդ։ Սպանվեց 1906 թ. դեկտեմբերին էսէռների ձեռքով։*

57. **Ստոլիպին** *Կախող, առաջին Պետական Դումայի շրջանում ներքին գործերի մինիստր, ազնվական հակահեղափոխության առաջնորդ, զինվորական տերրորի կազմակերպողը։ Սպանվեց 1912 թ.։*

58. *1906 թ. օգոստոսի 24-ին կառավարական հաղորդագրության մեջ ասվում եր. «Հեղափոխական խմբակները վճռել են բարձր պաշտոնեյությունը վոչնչացնելու ճանապարհով յերկրում ազդեցություն թողնեն և կառավարությունը պանիկայի մեջ գցեն»։*

*«Սովորական դատավարությունը լիովին հարմարեցված չե ներկայիս հանգամանքներին»։ «Այդ պատճառով անհրաժեշտ և ճանաչված հրատարակել ժամանակավոր կանոններ զինվորա-դաշտային դատարանի մասին ամենածանր հանցագործությունների մեջ մեղադրվողներին դատապարտելու համար այն վայրերում, վորոնք հայտարարված են զինվորական դրության և արտակարգ պահպանության դրության մեջ»։*

59. *Առանց դատի կամ սպաների դատավճռով գնդակահարությունները Ստոլիպինի ռեժիմի ժամանակ սովորական յերևույթ եյին։*

60. **Պլեվե**—*ներքին գործերի մինիստր, ամենավառ ներկայացուցիչը XIX դարի վերջի և XX դարի սկզբի վոստիկանական ռեժիմի։ Սպանվեց 1904 թ. հուլիսի 15-ին Սազոնովի ձեռքով։*

61. **Պոբեդոնոսցեվ**—*սինոդի օբեր-պրոկուրոր։ Ալեքսանդր III-ի և Նիկոլայ II-ի ժամանակ սև-հարյուրակային ռեակցիայի սյուներից մեկը։*

62. **Դուրնովո**—*ներքին գործերի մինիստր Վիտտեյի կաբինետում, ղեկավարում եր հեղափոխական շարժման ճնշումը։*

63. *Խոսքը վերաբերում և Ստոլիպինի ձեռք առած միջոցներին հողային խնդրում, վորոնք վերջացան նրանով, վոր օրենք հրատարակվեց գյուղացիների շենից* (хутор) *դուրս գալու իրավունքի մասին։ Այդ օրենքով Ստոլիպինը շերտավորում մտցրեց գյուղ և նվաճեց գյուղի համփայական տարրերի պաշտպանությունը։*

64. **Գուչկով Ա.**—*«Հոկտեմբերի 17-ի միության» կազմակերպիչ, III Պետական Դումայի նախագահ։*

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՌՎԻ ՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՌՎԻ ՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ·

Վերը տպված հոդվածում Լ. Մարտովը չափազանց կարևոր հարց կամ, ավելի ճիշտ, մի շարք հարցեր է շոշափում, վորոնք վերաբերում են պրոլետարիատի և սոցիալ-դեմոկրատիայի կռվի նպատակին մեր հեղափոխության մեջ։ Շոշափված է այդ հարցերի պատմությունը մեր կուսակցության մեջ, շոշափված է նրանց ունեցած հարաբերությունը մարքսիզմի հիմունքների և նարոդնիկության հետ, շոշափված են այդ առթիվ արտահայտված հայացքների բոլոր յերանգները,— շոշափված են հարցի բոլոր կողմերը ու չի պարզաբանված վոչ մեկն ել։ Վորպեսզի ըստ եյության պատասխանենք, ստիպված ենք հարցի բոլոր կողմերի սխեմատիկ ուրվագիծը տալ։

## I

Սկսենք ռուսական սոցիալ-դեմոկրատիայի կողմից այս հարցը քննության առնելու պատմությունից։ Նա դրված է 1905 թ. սկզբին բոլշևիկների և մենշևիկների կողմից։ Առաջինները վճռում եյին այն պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա «ֆորմուլայով» (համմ. «Вперед», № 14, 1905 թ. ապրիլի 12) *։ Յերկրորդները վճռականորեն մերժում եյին հաղթական բուրժուական հեղափոխության դասակարգային բովանդակության այսպիսի վորոշումը։ 1905 թ. Լոնդոնի յերրորդ համագումարը (բոլշևիկներ) և Ժընևում մենշևիկների միաժամանակ գումարած կոնֆերենցիան պաշտոնական արտահայտություն տվին կուսակցության յերկու մասի հայացքներին։ Ընդ սմին համաձայն այն եպոխայի վոգուն, ռեզոլյուցիաների մեջ կուսակցության յերկու մասն ել թեորիական, ընդհանուր հարց չեյին դնում կռվի նպատակի և հաղթական հեղափոխական դասակարգային բովանդակության մասին ընդհանրապես, այլ ավելի նեղ հարց եյին դնում ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին։ Բոլշևիկների ռեզոլյուցիան ասում է. «... Ռուսաստանում դեմոկրատական հանրապետության իրականացումը հնարավոր է միայն հաղթական ժողովրդական ապստամբության հետևանքով, վորի որգանը կհանդիսանա ժամանակավոր հեղափոխական կառավարու-

---

* Տես Լենինի աշխ. ժողոված. ռուս. հրատարակ. VI հ., եջ 133—140։

թյունը... Ըստ ուժերի փոխհարաբերության և այլ գործոնների, վորոնք ճշգրիտ նախնական վորոշման չեն յենթարկվում, թույլատրելի յե ժամանակավոր Հեղ. կառավարության մեջ մեր կուսակցության լիազորների մասնակցությունը բոլոր հակահեղափոխական փորձերի դեմ անխնա կռվելու և բանվոր դասակարգի ինքնուրույն շահերը պաշտպանելու նպատակով»։ Մենշևիկների ռեզոլյուցիան. «...Սոցիալ-դեմոկրատիան իրեն նպատակ չպիտի դնի գրավել կամ բաժանել իշխանությունը ժամանակավոր կառավարության մեջ, այլ պետք ե մնա ծայրահեղ հեղափոխական ոպպոզիցիոն կուսակցություն»։

Այստեղից յերևում ե, վոր իրենց պաշտոնական ռեզոլյուցիայի մեջ իրենք բոլշևիկները զուտ բոլշևիկական համագումարում վոչինչ չեն **մտցնում**, վոր նման լիներ պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա «ֆորմուլային», այլ **միայն** խոսում են, վոր թույլատրելի յե մասնակցել ժամանակավոր կառավարության մեջ, և վոր պրոլետարիատի «կոչումն ե ղեկավար դեր խաղալ» (ռեզոլյուցիա զինված ապստամբության մասին)։ «Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա» «ֆորմուլան», վոր արտահայտված ե բոլշևիկների մամուլի մեջ մինչև III համագումարը, «Յերկու տակտիկա» բրոշյուրում կրկնվում ե այդ համագումարից հետո և վոչ մի մարդու մտքով չի անցել մեղադրելու բոլշևիկներին, թե նրանց մեկնաբանությունները անհամապատասխան են նրանց ռեզոլյուցիաներին։ Վոչ մի մարդու մտքով չի անցել պահանջելու, վոր քաղաքականապես կռվող մասսայական կուսակցության ռեզոլյուցիաները և հաղթական հեղափոխության դասակարգային բովանդակության մարքսիստական վորոշման ֆորմուլաները տառացի զուգադիպեն։

Մի ուրիշ կարևոր յեզրակացություն մեր պատմական տեղեկանքից.—1905 թ. գարնանը կուսակցության յերկու մասերը վիճելի հարցի **ծանրության կենտրոնը** համարում եյին պրոլետարիատի և հեղափոխական դասակարգերի կողմից իշխանության նվաճումն ընդհանրապես, բոլորովին չշոշափելով այն հարցը, թե ընդ սմին ինչպիսի հարաբերություններ կարող են լինել և պետք ե լինեն իշխանությունը նվաճող այս դասակարգերի միջև։ Մենշևիկները, ինչպես մենք տեսանք, միակերպ ժխտում են իշխանության նվաճման նպատակը և բաժանման նպատակը։ Բոլշևիկները խոսում են «հեղափոխության մեջ պրոլետարիատի ղեկավար դերի մասին» (ռեզոլյուցիա զինված ապստամբության մասին), այն մասին, վոր «թույլատրելի յե» ս.-դ. մասնակցությունը ժամանակավոր կառավարության մեջ, լիակատար սոցիալիստական հեղաշրջման ձգտող ս.-դ. անկախության անշեղ պահպանման մասին (ռեզոլյուցիա ժամանակավոր Հեղափոխական կառավարության մասին), գյուղացիների հեղափոխական շարժման «պաշտպանության» մասին,



«գյուղացիական շարժման հեղափոխական-դեմոկրատական բովանդակությունը ամեն մի ռեակցիոն խառնուրդներից զտելու» մասին, վորպեսզի «զարգացնեն գյուղացիների հեղափոխական ինքնագիտակցությունը և մինչև վերջ հասցնեն նրանց դեմոկրատական պահանջները» (ռեզոլյուցիա դեպի գյուղացիական շարժումն ունենալիք վերաբերմունքի մասին)։ Ուրիշ վոչ մի «ֆորմուլա» չկա պրոլետարիատի և գյուղացիության հարաբերությունների մասին 1905 թ. բոլշևիկյան համագումարի ռեզոլյուցիաներում։

Անցնենք այն ռեզոլյուցիաների նախագծերին, վոր մշակված են յերկու ֆրակցիաների կողմից մի տարի անց, Ստոկհոլմի համագումարից առաջ։ Այդ նախագծերը հատկապես հաճախ մոռացության են տրվում կամ անգիտացվում են մամուլում ընդհանրապես և մեր կուսակցության մեջ մասնավորապես, և այդ հատկապես ցավալի յե, վորովհետև նրանց նշանակությունը սոցիալ-դեմոկրատիայի տակտիկական իդեաների պատմության մեջ ահագին ե։ Ռեզոլյուցիաների հենց այդ նախագծերն են ցույց տալիս, թե կուսակցության յերկու մասը 1905 թ. հոկտեմբերյան և դեկտեմբերյան կռվի փորձերից ինչ դասեր առան։

Բոլշևիկները պրոլետարիատի դասակարգային խնդիրներին վերաբերող ռեզոլյուցիայի նախագծում գրում են. «...Դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնել ի վիճակի յե միայն պրոլետարիատը այն պայմանով, վոր նա, իբրև արդի հասարակության միակ մինչև վերջ հեղափոխական դասակարգ, իր յետևից կտանի գյուղացիության մասսային «քաղաքական գիտակցականություն տալով նրա տարերային կռվին ընդդեմ կալվածատիրական պետության և ճորտատիրական հողատիրության» (կրկնված ե Լոնդոնի համագումարի ռեզոլյուցիայի նախագծում, տես «Пролетарий» №14, 1907 թ. մարտի 4)*։

Այսպես, ուրեմն, այն «ֆորմուլան», վոր այստեղ իրենք բոլշևիկներն ընտրել եյին իրենց համար, ասում ե՝ պրոլետարիատը, վոր **իր յետևից տանում ե** գյուղացիությունը։ Բոլշևիկների ռեզոլյուցիաների մեջ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի գաղափարն արտահայտող վոչ մի ուրիշ ֆորմուլա չկա։ Այդ փաստը չի կարելի բավականաչափ ուժեղ կերպով ընդգծել, վորովհետև այն մոռանալու կամ այն լռության տալու վրա յե կառուցված ը. Մարտովի ամբողջ փորձը 1908 թ. դեկտեմբերյան կոնֆերենցիայում ընդունված ռեզոլյուցիայի նշանակությունը բոլորովին սխալ լուսաբանությամբ ներկայացնել։

Մենշևիկները ռեզոլյուցիայի իրենց նախագծում (արտատպված ե «Партийные Известия»-յից Լենինի «Զեկուցման» մեջ, եջ 68-70) պրոլետարիատի խնդիրն են համարում «բուրժուական հեղափոխության

* Տես Լենինի աշխ. ժողոված. ռուս հրատարակ. VIII հ., եջ 211։

շարժիչ լինելը»—նկատեցեք՝ վոչ «առաջնորդ», վոչ «ղեկավար»,—ինչպես ասված է բոլշևիկյան ռեզոլյուցիայում, այլ շարժի՛չ,—և նրա խնդիրների թվում մատնանշում են «մասսայական ճնշումով պաշտպանել բուրժուական դեմոկրատիայի այն ոպպոզիցիոն քայլերը, վորոնք չեն հակասում մեր ծրագրային պահանջներին, կարող են աջակցել նրանց հասնելուն և յելակետ դառնալ հեղափոխության հետագա զարգացմանը դեպ առաջ»։

Հետևաբար տարաձայնությունը հենց իրենք բոլշևիկների ու մենշևիկների ֆրակցիաները այդ են դուրս բերել, վոր հակադրվում են՝ գյուղացիությանն «իր յետևից տանող» հեղափոխության «առաջնորդ» և «ղեկավար» հասկացողությունը և «հեղափոխության շարժիչ», բուրժուական դեմոկրատիայի այս կամ այն քայլերը «պաշտպանող» հասկացողությունը։ Ավելացնենք, վոր Ստոկհոլմի համագումարում հաղթանակած մենշևիկներն այդ ռեզոլյուցիան **իրենք յետ վերցրին** հակառակ բոլշևիկների բողոքներին և պնդումներին։ Ինչու մենշևիկներն այդ արին,— այդ հարցին ընթերցողը կարող է պատասխան գտնել, յեթե նա մենշևիկների ռեզոլյուցիայի այդ միևնույն նախագծից իմանա հետևյալ կտորը. «Բուրժուական հեղափոխության շարժիչ լինելու խնդրի նպատակահարմար կատարումը պրոլետարիատի համար հնարավոր է միայն այնպիսի ճանապարհով, վոր ինքը կազմակերպվելով, պրոլետարիատն իր կռվով շարունակ քաղաքային բուրժուազիայի ու գյուղացիության նորանոր շերտեր է ներս քաշում հեղափոխական կռվի մեջ, դեմոկրատացնելով նրանց պահանջները, հրելով նրանց դեպի կազմակերպում և հենց դրանով պայմաններ ստեղծելով հեղափոխության հաղթանակի համար»։

Սա աշկարա կիսատ-պռատ գիջում է բոլշևիկներին, վորովհետև պրոլետարիատն այստեղ գծագրվում է վոչ միայն իբրև շարժիչ, այլ գոնե մասամբ իբրև ղեկավար, վորովհետև նա «ներս է քաշում» և «հրում» գյուղացիությանը և քաղաքային բուրժուազիայի նոր շերտերին։

Ապա։ Ժամանակավոր Կառավարության հարցի մասին մենշևիկյան ռեզոլյուցիայի նախագիծն ասում է. «Սոցիալ-դեմոկրատիան յերկրի ընդհանուր հեղափոխական բարձրացման պայմաններում պետք է ամենուրեք աջակցի բանվորների պատգամավորների խորհուրդներ կազմվելուն, դրդի հեղափոխական դեմոկրատիայի մյուս տարրերին ևս նույնպիսի օրգաններ կազմել, աջակցի, վոր այդ օրգանները միանալով կազմեն ժողովրդի հեղափոխական կռվի ընդհանուր անկուսակցական կազմակերպություններ, նրանց առաջ մղելով հեղափոխության այն համազգային խնդիրները, վորոնք պրոլետարիատի տեսակետից կարող են և պետք է լուծվեն հեղափոխության տվյալ մոմենտում» (եջ 91, նույն տեղում)։



Մենշևիկյան ռեզոլյուցիայի այս մոռացված նախագիծը պարզ ցույց է տալիս, վոր 1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի ազդեցության տակ մենշևիկները բոլորովին շփոթվել էյին և դիրքը հանձնել բոլշևիկներին։ Իրոք, միթե կապակցվում է մեջ բերած տեղը այդ միևնույն նախագծի հետևյալ կետի հետ. «Սոցիալ-դեմոկրատիան արդի բուրժուական հեղափոխության ժամանակ իրեն խնդիր չպիտի առաջադրի գրավել իշխանությունը և դիկտատուրան» (եջ 92)։ Այս վերջին պնդումը խիստ սկզբունքորեն ու լիովին (բացառությամբ «իշխանության բաժանման» մատնանշումի) կրկնությունն է 1905 թ. ռեզոլյուցիայի։ Բայց նա անհաշտելի հակասության մեջ է 1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի փորձի հետ, մի փորձ, վորի **հետեվանքն** իրենք մենշևիկները պրոլետարիատի **բոլոր օրգանների յեվ «հեղափոխական դեմոկրատիայի մյուս տարրերի» միացումն են համարում** «ժողովրդի հեղափոխական կռվի ընդհանուր անկուսակցական կազմակերպությունների մեջ»։ Վորովհետև յեթե բանվորների պատգամավորների խորհուրդները «միանում են» հեղափոխական դեմոկրատիայի նույնպիսի օրգանների հետ ժողովրդի հեղափոխական կռվի անկուսակցական կազմակերպությունների մեջ, այն ժամանակ պարզ է, վոր պրոլետարիատն իրեն խնդիր **է դնում** «իշխանության և դիկտատուրայի գրավումը», **մասնակցում է** այդ գրավման գործին։ Ռեզոլյուցիան ինքն ասում է, վոր հեղափոխության «գլխավորագույն խնդիրն» է «պետական իշխանությունը կորզել ռեակցիոն կառավարության ձեռքերից»։ Վախենալով բառից, խրտնելով «իշխանության գրավումից և դիկտատուրայից», հրաժարվելով այդ սարսափելի բաներից ամենավճռական կերպով, մենշևիկները 1905 թ. հետո **ստիպված էյին ընդունել**, վոր բանվորների պատգամավորների խորհուրդների «միացումը» հեղափոխական դեմոկրատիայի այլ «նույնպիսի» օրգանների հետ անխուսափելիորեն բղխում է իրերի ընթացքից և վոր այդպիսի **միացումը** տալիս է «ժողովրդի հեղափոխական կռվի ընդհանուր անկուսակցական (ճշգրիտ չէ՝ պետք էր ասել անկուսակցական կամ միջկուսակցական) կազմակերպություններ»։ Այդ ընդհանուր կազմակերպությունն էլ Ժամանակավոր Հեղափոխական Կառավարությունն է։ Մենշևիկները վախենում էյին ճշգրիտ և ուղիղ բառից, փոխելով այն **նկարագրությամբ**։ Դրանով բանը չի փոխվում։ «Ժողովրդի հեղափոխական կռվի օրգան», «վորը կորզում է պետական իշխանությունը» հին կառավարության ձեռքից, այդ էլ հենց կոչվում է Ժամանակավոր Հեղափոխախական Կառավարություն։

Յեվ յեթե մենշևիկներն ստիպված էյին հաշվի առնել 1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի փորձը շփոթվելով ու մոլորվելով, ապա բոլշևիկներն ուղղակի ու պարզ իրենց յեզրակացությունները հանեցին։ Ժամանակավոր Կառավարության մասին բոլշևիկների ռեզոլյուցիայի

նախագիծն ասում է. «...Այդ բաց կռվի մեջ» (1905 թ. վերջին) «տեղական բնակչության տարրերը, վորոնք ընդունակ եյին վճռականորեն հանդես գալու հին իշխանության դեմ (համարյա բացառապես պրոլետարիատը և մանր բուրժուազիայի առաջավոր շերտերը), այնպիսի կազմակերպություններ ստեղծելու անհրաժեշտության մղվեցին, վորոնք փաստորեն հանդիսանում եյին նոր հեղափոխական իշխանության սաղմեր—բանվորների պատգամավորների խորհուրդներ Պետերբուրգում, Մասկվայում և այլ քաղաքներում, զինվորների պատգամավորների խորհուրդներ Վլադիվաստոկում, Կրասնոյարսկում և այլն, յերկաթուղային կոմիտեներ Սիբիրում և հարավում, գյուղացիական կոմիտեներ Սարատովի նահանգում, քաղաքային հեղափոխական կոմիտեներ Նովառոսիյսկում և այլ քաղաքներում և վերջապես ընտրովի գյուղական օրգաններ Կովկասում և Մերձբալթյան յերկրում» (եջ 92): Այդ օրգանների բաժան-բաժան և սաղմային լինելը պայմանավորեց անհաջողությունը,—ասվում է շարունակության մեջ,—և ժամանակավոր Հեղափոխական Կառավարությունը վորոշվում է ինչպես «հաղթական ապստամբության օրգան»: «Պրոլետարիատի առաջ հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու շահերի տեսակետից,—շարունակում է ռեզոլյուցիան,—այժմ մի անհրաժեշտ խնդիր է կանգնում՝ հեղափոխական դեմոկրատիայի հետ միասին նպաստել, վոր ապստամբությունը միացվի և ստեղծվի այդ շարժման միացնող կենտրոն ժամանակավոր Հեղափոխական Կառավարության ձևով»: Ահա համարյա բառացի կրկնվում է 1905 թ. III համագումարի ռեզոլյուցիան:

Ստոկհոլմի համագումարից առաջ յերկու ֆրակցիաների ռեզոլյուցիաների նախագծերից բերած կտորները հնար են տալիս պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի հարցը կոնկրետ պատմական հողի վրա դնել: Ամեն վոք, ով ցանկանում է այդ հարցին ուղղակի և պարզ պատասխան տալ, պետք է հաշվի առնի 1905 թ. վերջի փորձը: Այդ փորձի ուղղակի քննությունից խուսափել, նշանակում է վոչ միայն անգիտանալ ամենագնահատելի նյութը ռուս մարքսիստի համար, այդ քիչ է. այդ նշանակում է նույնպես անխուսափելիորեն դատապարտել իրեն բանաձևերի «խորամանկ» մեկնաբանության, սկզբունքային տարաձայնությունների եյության «ծեփման» և «սոսնձման» (ըստ ընկ. Մարտովի հաջող արտահայտության), անխուսափելիորեն դատապարտել իրեն «դիկտատուրայի» թեորիայի ու պրակտիկայի «հարցերում» հենց այնպիսի անսկզբունք կաղալու, վորն ամենից ավելի լավ արտահայտվում է շարժումն՝ ամեն ինչ, նպատակը՝ վոչինչ ֆորմուլայով:

1905 թ. վերջի փորձն անվիճելիորեն հաստատեց, վոր «յերկրի ընդհանուր հեղափոխական բարձրացումն» ստեղծում է «ժողովրդի հե-



ղափոխական կռվի» հատուկ «կազմակերպություններ» (ըստ մենշևիկյան բանաձևման), «նոր հեղափոխական իշխանության սաղմային օրգաններ» (ըստ բոլշևիկյանի): Նույնպես անվիճելի յե այն, վոր այդ օրգանները ռուսական բուրժուական հեղափոխության պատմության մեջ ստեղծվեցին՝ առաջին, պրոլետարիատի, յերկրորդ, «հեղափոխական դեմոկրատիայի մյուս տարրերի» ձեռքով, ընդսմին հասարակ տեղեկանքը Ռուսաստանի բնակչության կազմի մասին ընդհանրապես և Վելիկառուսիայի մասնավորապես, ցույց է տալիս գյուղացիության ահագին գերակշռությունն այդ մյուս տարրերի թվում: Վերջապես ավելի պակաս անվիճելի չէ նաև այդ տեղական օրգանների կամ կազմակերպությունների միացման պատմական տենդենցը: Իսկ այս անվիճելի փաստերից անխուսափելի յե այն յեզրակացությունը, վոր արդի Ռուսաստանում հաղթական հեղափոխությունը չի կարող այլ բան լինել, քան պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա: Այս անխուսափելի յեզրակացությունից չի կարելի այլ կերպ պրծնել, քան «խորամանկության» և «սոսնձման» յեղանակով: Յեթե հարցի կտորներից չբռնեն, յեթե արվեստականորեն և քմահաճ կերպով քաղաքը գյուղից, մի վայր մյուսից չպոկեն, յեթե դասակարգերի դիկտատուրայի հարցը գաղտնի չփոխեն այս կամ այն կառավարության կազմի հարցով, յեթե քննության առնեն հարցն իրոք ամբողջությամբ, այն ժամանակ վոչ վոք 1905 թ. փորձի կոնկրետ օրինակների վրա չի կարողանա ցույց տալ, թե ինչպես կարող եր հաղթական հեղափոխությունը պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա չլինել:

Բայց նախ վերջացնենք քննության յենթակա «ֆորմուլայի» կուսակցական պատմության հարցը, ապա նոր առաջ գնանք: Մենք տեսանք, թե ինչպես եր յերկու ֆրակցիաների հայացքների ճշգրիտ շարադրանքն 1905 և 1906 թ.թ.: 1907 թ. Լոնդոնի համագումարի նախօրյակին մենշևիկներն սկզբում դեպի բուրժուական կուսակցությունները ունենալիք վերաբերմունքի մասին առաջ քաշեցին ռեզոլյուցիայի մեկ նախագիծ («Народная Дума» 1907, №12, 1907 թ. մարտի 24-ին), հետո հենց համագումարում մի ուրիշը մտցրին: Առաջին նախագծում խոսվում է պրոլետարիատի գործողությունները մյուս դասակարգերի գործողությունների հետ «համակարգելու» մասին, յերկրորդում՝ մյուս դասակարգերի շարժումը պրոլետարիատի «նպատակների համար» «օգտագործելու» մասին և այն մասին, վոր պրոլետարիատը «պաշտպանի» մյուս դասակարգերի վորոշ «օպպոզիցիոն» հեղափոխական քայլերը, այն մասին, վոր սոցիալ-դեմոկրատներն «առանձին վորոշ դեպքերում» «համաձայնության» գան լիբերալ և դեմոկրատական դասակարգերի հետ:

Բոլշևիկյան նախագծում, ինչպես և Լոնդոնի համագումարի ըն-

դունած ռեզոլյուցիայի մեջ*, խոսվում ե այն մասին, վորպեսզի ս.-դ. «հարկադրի նրանց (նարոդնիկական կամ աշխատավորական կուսակցություններին, վորոնք «ավելի կամ պակաս մոտիկությամբ արտահայտում են գյուղացիական և քաղաքային մանր բուրժուազիայի լայն մասսաների շահերը և տեսակետը») անցնել ս.-դ. կողմը ընդդեմ սևհարյուրակայինների և կադետների» և «այստեղից բղխող միատեղ գործողությունների» մասին, վորոնք պետք ե «միայն ծառայեն ընդհանուր գրոհի նպատակներին»: Համագումարի ռեզոլյուցիայում, ի զանազանություն բոլշևիկների նախագծի, մի լեհի նախաձեռնությամբ մտցրած են նաև «հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու կռվում» բառերը: Այստեղ ել պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի գաղափարի ամենապարզ հաստատությունն ստացվեց, վորովհետև այդպիսի դիկտատուրա հենց այդ դասակարգերի «միատեղ գործողությունն» ե, վորոնք «**հասցրել են** կամ հասցնում են հեղափոխությունը մինչև վերջ»:

II

Բավական ե պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի հարցի մասին ընդհանուր հայացք ձգենք կուսակցության կարծիքների պատմության վրա, վորպեսզի տեսնենք, թե ինչ աստիճան իմաստ իր ե խոսել ը. Մարտովը խորամանկության և առանց նպատակի շարժման մասին: Իրոք այդ պատմության առաջին յեզրակացությունն այն ե, վոր իրենք բոլշևիկները **վոչ մի անգամ** վոչ իրենց ռեզոլյուցիաների նախագծերում, վոչ ել իրենց ռեզոլյուցիաներում չեն մտցրել պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա արտահայտությունը կամ «ֆորմուլան»: Ու, այնուամենայնիվ, մինչ այժմ **վոչ մի մարդու** մտքով չի անցել ժխտելու, վոր 1905-1907 թ. թ. **բոլոր** բոլշևիկյան նախագծերն ու ռեզոլյուցիաներն **ամբողջովին** կառուցված են պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի գաղափարի վրա: Ծիծաղելի յե այդ ժխտել: Այդ ժխտել, նշանակում ե հենց խորամանկել, խոսքի պոչից բռնելով հարցի **եյությունը** ծածկել: Պրոլետարիատը, «**վոր միացնում ե իր հետ**» գյուղացիության մասսային,—ասում եր Լենինը «Յերկու տակտիկայում» («12 տարի հետո», եջ 445**), պրոլետարիատը, «**վոր տանում ե իր յետևից**» գյուղացիության մասսային,—ասում ե բոլշևիկների 1906 թ.*** ռեզոլյուցիայի նախագիծը. պրոլետարիատի և գյուղացիության «միատեղ գործողությունները» «դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու կռվում»,—ասում ե Լոնդոնի համագումարի* ռեզոլյուցիան: Միթե ակնհայտ չե, վոր այս բոլոր ֆորմուլաների միտքը միևնույնն ե, վոր այդ միտքը հենց արտահայտում ե պրոլետարիատի **յեվ** գյուղացիության դիկտատուրան, վոր գյուղացիության վրա հենվող պրոլետարիատի «ֆորմուլան» **ամբողջովին մնում ե** հենց միևնույն պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի **սահմաններում**:

* Տես Լենինի աշխ. ժողոված. ռուս. հրատարակ. VIII հ., եջ 530—532 և 534-535:

** Տես VI հ. եջ 342:

*** Տես VII հ. մաս 2, եջ 173:



Ընկեր Մարտովը կաշուց դուրս ե գալիս, վորպեսզի հերքի վերջինս: Վեճ ե սկսվում «և»-ի առթիվ: «Յեվ» չկա, մերժել ենք «և»-ով ֆորմուլան,—բացականչում ե ը. Մարտովը,—մի համարձակվեք այժմ մտցնել այդ «և»-ը կենտրոնական օրգանի անստորագիր հոդվածների մեջ: Ուշացել եք, ուշացել, սիրալիր ընկեր Մարտով. այդպիսի հավակնությամբ դուք պետք եր դիմեյիք ամբողջ հեղափոխական դարաշրջանի **բոլոր** բոլշևիկյան օրգաններին, վորովհետև այդ բոլոր օրգանները շարունակ խոսում եյին պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի մասին և խոսում եյին այն ռեզոլյուցիաների հիման վրա, վորոնց մեջ **այդ** «և»-ը չկար: Ընկեր Մարտովը տանուլ տվեց իր հարուցած սկզբունքային կամպանիան «և»-ի առթիվ, տանուլ տվեց վոչ միայն այն պատճառով, վոր վաղեմության ժամանակն անցել ե, այլև այն պատճառով, վոր նույնիսկ մեծության տրամաբանությունը անշեղ կերպով չարաբախտ «և»-ի տակ ե մտցնում **յեվ** «միացումը» **յեվ** «ներմուծումը հոգուտ» **յեվ** «միատեղ գործողությունը» **յեվ** «վոր հենվում ե» **յեվ** «օգնությամբը» (այս վերջին արտահայտությունը կա լեհական ս.-դ. VI համագումարի ռեզոլյուցիայի մեջ):

Բայց չե՞ վոր բոլշևիկները վիճում եյին «վոր հենվում ե»-յի դեմ,—շարունակում ե իր սկզբունքային դիսկուսիան ընկ. Մարտովը: Այո՛, վիճում եյին, բայց վոչ այն պատճառով, վոր այստեղ մերժվում եր պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան, այլ այն պատճառով, վոր այդ «ֆորմուլան» ռուսերեն շատ հաջող չե: Սովորաբար հենվում ե ավելի թույլը ավելի ուժեղի վրա: Լեհական ֆորմուլայի բառացի կրկնումը «պրոլետարիատը գյուղացիության **օգնությամբ**» բոլշևիկների համար լիովին ընդունելի յե, չնայած ել ավելի լավ կլիներ, դուցե, ասել՝ «պրոլետարիատը, վոր տանում ե իր յետևից»: Կարելի յե՞ վիճել այս բոլոր ֆորմուլաների առթիվ, բայց այդպիսի վեճից «սկզբունքային դիսկուսիա սարքելն ուղղակի կուրյոզ ե: Ժխտել, ինչպես փորձում ե ընկ. Մարտովը, թե «վոր հենվում ե» մտնում ե **միատեղ** գործողության հասկացողության մեջ, նշանակում ե խորամանկության

*) Տես VIII հ., եջ 535:

նմուշ տալ։ Ասել, որ իշխանության նվաճումը «պրոլետարիատի կողմից, որ հենվում է գյուղացիության վրա» իշխանության նվաճում է «**մենակ** պրոլետարիատի կողմից», ինչպես ասում են ը. ը. Դանը, Աքսելրոդը և Սեմյոնովը, որոնցից ցիտատներ է բերում ընկ. Մարտովը, նշանակում է ընթերցողի ծիծաղը բերել։ Յեթե մենք ասենք՝ Մարտովը և Պոտրեսովը, որ հենվում էյին Չերևանինի, Պրոկոպովիչի և ընկ. վրա, լիկվիդացիայի յենթարկեցին հեղափոխության մեջ պրոլետարիատի գերիշխանության իդեան, արդյոք մեկը մեզ կհավատա՞, որ Մարտովն ու Պոտրեսովը **մենակ** լիկվիդացիայի յենթարկեցին այդ իդեան, առանց Չերևանինի, Պրոկոպովիչի և ընկերության։

Վոչ, ընկերներ, կենտրոնական որգանի դիսկուսիան հարկավոր չե խորամանկության վերածել։ Չի կարելի նման միջոցներով խուսափել ու չընդունել այն հիմնական ու անկասկածելի փաստը, վորն այն է, թե Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մեծամասնությունը, դրանց թվում լեհերն ու բոլշևիկները, վճռականորեն կողմնակից են. 1) պրոլետարիատի ղեկավար դերի, առաջնորդի դերի ճանաչմանը հեղափոխության մեջ, 2) մյուս հեղափոխական դասակարգերի ոգնությամբ պրոլետարիատի կողմից իշխանության նվաճումը կռվի նպատակ ճանաչելուն, 3) այն բանին, վոր առաջին և, դուցե, նույնիսկ միակ տեղը այդ «ոգնականների» թվում բռնում է գյուղացիությունը։ Ով ըստ հարցի եյության դիսկուսիա յե ուզում, նա պետք է փորձի գոնե այս յերեք դրություններից մեկը ժխտել։ Ընկեր Մարտովը նրանցից վոչ մեկն ըստ եյության չի քննել։Ընկեր Մարտովը մոռացել է ընթերցողին ասել, վոր այս յերեք դրություններից **ամեն մեկի վերաբերմամբ** մենշևիկները կանգնած են կուսակցության կողմից **ժխտված** տեսակետի վրա, վոր **կուսակցության կողմից ժխտված** մոլորություններին է պատկանում հենց մենշևիզմը և միայն մենշևիզմը։ Մենշևիկների քաղաքականությունը հեղափոխության մեջ հենց առանց նպատակի շարժում եր և այդ պատճառով կադետների կուսակցության տատանումներից **կախված** շարժում,—այդպիսին եր հենց այն պատճառով, վոր մենշևիկները չգիտեյին, թե արդյոք պրոլետարիատը պե՞տք է առաջնորդի դերին ձգտի, արդյոք նա պե՞տք է իշխանությունը նվաճելուն ձգտի, արդյոք նա ընդ սմին պե՞տք է վորևե վորոշ դասակարգի ոգնություն նկատի ունենա։ Այս չիմանալն անխուսափելի ու անշեղ կերպով դատապարտում է սոցիալ-դեմոկրատների քաղաքականությունը յերերումների, սխալների, անսկզբունքային լինելու, լիբերալներից կախում ունենալու։

Կոնֆերենցիան չթողեց «պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան և մուրհակ չտվեց, վոր նա հեռացվի կուսակցական անցուդարձից, այլ, ընդհակառակը, **հաստատեց** այն, մի քայլ **ել** արեց դեպի նրա



ավելի լրիվ ճանաչումը։ Լոնդոնի համագումարը ճանաչեց. 1) պրոլետարիատի դերն իբրև «առաջնորդ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ», և 2) պրոլետարիատի և գյուղացիության «միատեղ գործողությունները», «վորոնք ծառայում են միայն ընդհանուր դրոհի նպատակներին, գործողություններ, իմիջի այլոց, նաև «հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու» համար։ Մնում եր միայն ճանաչել, վոր տվյալ հեղափոխության մեջ կռվի նպատակը պրոլետարիատի և գյուղացիության կողմից իշխանության նվաճումն է։ Այդ արված է կոնֆերենցիայի կողմից «իշխանության նվաճումը պրոլետարիատի կողմից, վորը հենվում է գյուղացիության վրա» ֆորմուլայով։

Այս ասելով մենք ամենևին չենք ժխտում և չենք մթագնում բոլշևիկների և լեհերի միջև յեղած տարաձայնությունները։ Լեհական ս.-դ. լիակատար հնարավորություն ունեն այդ տարաձայնությունները շարադրելու թե իրենց ռուսերեն լեզվով առանձին հրատարակությունների մեջ, թե բոլշևիկյան թերթերի եջերում և թե կենտրոնական որգանում։ Յեվ լեհական ս.-դ. արդեն սկսել են այդ հնարավորությունից ոգտվել։ Յեթե ընկ. Մարտովը հասնի այն նպատակին, վորին նա հետամուտ է, այսինքն, լեհական ս.-դ. միջամտեն մեր վեճին, այն ժամանակ բոլորը և ամեն վոք կտեսնեն վողջ հիմնականում մեր համերաշխությունը Լեհաստանի ս.-դ. հետ ընդդեմ մենշևիկների, կտեսնեն, վոր մենք տարաձայնություն ունենք միայն մասնակի խնդիրներում։

## III

Ինչ վերաբերում է ընկ. Տրոցկուն, վորին ընկ. Մարտովը հարկադրեց մասնակցել իր սարքած յերրորդ անձերի դիսկուսիային, բոլորի դիսկուսիային, բացի դիսկուտանտից, մենք այստեղ վճռականապես չենք կարող նրա հայացքների լիակատար քննության մեջ մտնել։ Այդ կպահանջեր հատուկ մեծ հոդված։ Շոշափելով ընկ. Տրոցկու սխալ հայացքները, մեջ բերելով այդ հայացքների կտորները, ընկ. Մարտովն ընթերցողներին մի ամբողջ շարք թյուրիմացություններ է ներշնչում, վորովհետև ցիտատների կտորները վոչ թե պարզաբանում, այլ խճճում են գործը։ Ընկ. Տրոցկու հիմնական սխալը հեղափոխության բուրժուական բնույթի անգիտանալն է, այդ հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցման հարցի մասին պարզ մտքի բացակայությունը։ Այս հիմնական սխալից բխում են այն մասնակի սխալները, վոր **կրկնում է** ընկ. Մարտովը, համակրանքով և հավանությամբ մի զույգ ցիտատ բերելով։ Վորպեսզի գործերն այդպիսի խճճված վիճակում չթողնենք, ինչպես այն շարադրում է ընկ. Մարտովը, գոնե ցույց տանք ընկ. Մարտովի հավանությանն արժա-

նացած ընկ. Տրոցկու այդ պատողությունների անճշտությունը: Պրոլետարիատի ու գյուղացիության կոալիցիան «յենթադրում է, վոր կամ գոյություն ունեցող բուրժուական կուսակցություններից մեկը տիրապետում է գյուղացիությանը, կամ գյուղացիությունն ստեղծում է ինքնուրույն հզոր կուսակցություն»: Այս ակնհայտ կերպով ճիշտ չէ վոչ ընդհանուր-թեորիական տեսակետից, վոչ էլ ռուսական հեղափոխության փորձի տեսակետից: Դասակարգերի «կոալիցիան» ամենևին չի յենթադրում վոչ այս կամ այն հզոր կուսակցության գոյությունը, վոչ էլ կուսակցությունն ընդհանրապես: Սա դասակարգերի հարցի շփոթումն է կուսակցությունների հարցի հետ: Մատնանշած դասակարգերի «կոալիցիան» ամենևին չի յենթադրում վոչ այն, վոր գոյություն ունեցող բուրժուական կուսակցություններից մեկը տիրապետի գյուղացիությանը, վոչ էլ այն, վոր գյուղացիությունն ստեղծի հզոր ինքնուրույն կուսակցություն: Թեորիապես այս պարզ է այն բանից, վոր, առաջին, գյուղացիությունը հատկապես դժվար է յենթարկվում կուսակցական կազմակերպության, յերկրորդ, գյուղացիական կուսակցությունների ստեղծումը հատկապես դժվար և յերկարատև պրոցես է բուրժուական հեղափոխության մեջ, այնպես վոր «հզոր ինքնուրույն» կուսակցությունը կարող է յերևան գալ, որինակ, միայն հեղափոխության վերջանալու ժամանակները: Ռուսական հեղափոխության փորձից նույնպես պարզ է, վոր պրոլետարիատի և գյուղացիության «կոալիցիան» ամենազանազան ձևերով **տասնյակ հարյուրավոր անգամ** իրականացել է առանց գյուղացիության վորևէ «հզոր ինքնուրույն կուսակցության»: Այդ կոալիցիան իրականացավ, յերբ «միատեղ գործողություն» ունեյին, ասենք, բանվորների պատգամավորների խորհուրդը և զինվորների պատգամավորների խորհուրդը կամ յերկաթուղային գործադուլային կոմիտեն և կամ գյուղացիների կոմիտեները և այլն: Բոլոր նման կազմակերպություններն առավելապես **անկուսակցական էյին** ու, այնուամենայնիվ, այդպիսի կազմակերպությունների ամեն մի միատեղ գործողության մեջ **դասակարգերի** «կոալիցիա» անպայման տեղի ուներ: Ընդ սմին գյուղացիական կուսակցությունը նշվում էր, ծնվում, ծագում—1905 թ. «Գյուղացիական միություն» կամ 1906 թ. Աշխատավորական խմբակի ձևով—և այդպիսի կուսակցության աճման, զարգացման, ինքնորոշման **հետ միասին դասակարգերի** կոալիցիան զանազան ձևեր էր ընդունում, սկսած անորոշներից ու չձևավորվածներից և վերջացրած լիովին վորոշ և ձևավորված քաղաքական համաձայնություններով: Որինակ՝ առաջին Դումայի ցրումից հետո հրատարակվեցին ապստամբության հետևյալ յերեք կոչը. 1) բանակին և նավատորմին [1], 2) Ռուսաստանի ամբողջ գյուղացիության [2], 3) ամբողջ ժողովրդին [3]: Առաջին կոչն ստորա-



գրեցին Դումայի ս.-դ. ֆրակցիան և Աշխատավորական խմբակի կոմիտեն: Արդյոք յերևան յեկավ այս «միատեղ գործողության» մեջ **յերկու դասակարգի կոալիցիա**: Իհարկե այո: Ժխտել այս, նշանակում է հենց խորամանկել կամ «դասակարգերի կոալիցիա» լայն գիտական հասկացողությունը դարձնել նեղ իրավաբանական, յես կասեյի, համարյա նոտարական հասկացողություն:

Ապա կարելի՞ յե արդյոք ժխտել, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության Դումայի պատգամավորների ստորագրած ապստամբության այս միատեղ **կոչին** հետևեցին յերկու դասակարգի ներկայացուցիչների միատեղ **գործողություններ** մասնավոր տեղական ապստամբություններում: Կարելի՞ յե արդյոք ժխտել, վոր ընդհանուր ապստամբության միատեղ կոչը և միատեղ մասնակցությունը տեղական ու մասնավոր ապստամբություններում, պարտավորեցնում էին յեզրակացնել միատեղ ժամանակավոր Հեղափոխական Կառավարություն կազմելը: Ժխտել այս, կնշանակեր՝ խորամանկել, «կառավարության» հասկացողությունը դիտել իբրև բացառապես ավարտված, ձևավորված յերևույթ, մոռանալ այն, վոր ավարտված և ձևավորված լինելը բխում է չավարտված և չձևավորված լինելուց:

Ապա ապստամբության յերկրորդ կոչն ստորագրված է Ռ. Ս.-Դ. Բ. Կ. կենտրոնական կոմիտեյի (մենշևիկյան) կողմից, նույնը սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կողմից, Համառուսական Գյուղացիական Միության կողմից, Համառուսական Յերկաթուղային և Համառուսական Ուսուցչական Միությունների կողմից, բացի Աշխատավորական խմբակի կոմիտեյից և Ս.-Դ. ֆրակցիայից, իսկ յերրորդ կոչի տակ կա Լեհաստանի Սոցիալիստական կուսակցության (П. П. С.) և Բունդի ստորագրությունը, պլյուս բոլոր նախորդ ստորագրությունները, բացի յերեք միություններինը:

Ահա ձեզ կուսակցությունների և անկուսակցական կազմակերպությունների ձևավորված քաղաքական կոալիցիա: Ահա ձեզ «պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա», վոր **հայտարարված է** ցարիզմին ուղղված սպառնալիքի ձևով, ամբողջ ժողովրդին ուղղված կոչի ձևով, բայց դեռ չիրականացած: Յեվ ներկայումս հազիվ թե շատ ս.-դ. գտնվեն, վորոնք համաձայնվեյին մենշևիկյան «Սոցիալ-դեմոկրատի» հետ, 1906 թ. № 6, վորտեղ այդ կոչերի մասին ասվում էր. «Մատնանշած դեպքում մեր կուսակցությունը մյուս հեղափոխական կուսակցությունների և խմբերի հետ վոչ թե քաղաքական բլոկ է կընքել, այլ մարտական համաձայնություն, վոր մենք միշտ նպատակահարմար և անհրաժեշտ ենք համարել» (համեմատիր «Пролетарий» № 1, 1906 թ. ոգոստոսի 11 և № 8, 1906 թ. նոյեմբերի 23)[4]:

Մարտական համաձայնությունը չի կարելի հակադրել քաղաքական

բլոկին, վորովհետև նա մտնում ե այդ վերջին հասկացողության մեջ։ Քաղաքական բլոկը զանազան պատմական մոմենտներում իրականացվում ե յերբեմն «մարտական համաձայնությամբ» ապստամբության գործում, յերբեմն պարլամենտական համաձայնությամբ «սև-հարյուրակայինների և կադետների դեմ միասին գործողությունների» վերաբերմամբ և այլն։ Պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի իդեան հեղափոխության ամբողջ ընթացքում իր գործնական արտահայտությունը գտավ հազարավոր ձևերով, սկսած հարկերը չվճարելու և ավանդների յետ վերցնելու մանիֆեստի ստորագրությունից (1905 թ. դեկտեմբեր)՝ կամ ապստամբության կոչերի ստորագրությունից (1906 թ. հուլիս) և վերջացրած 1908 թ. II և III Դումաների քվեարկություններով։ Ճիշտ այդպես էլ սխալ ե ը. Տրոցկու յերկրորդ հայտարարությունը, վոր բերում ե ը. Մարտովը։ Ճիշտ չե, վոր «ամբողջ հարցն այն ե, թե ով բովանդակություն կտա կառավարական քաղաքականությանը, ով նրա մեջ միատարր մեծամասնություն կըհամախմբի» և այլն։ Այս հատկապես ճիշտ չե, յերբ ընկեր Մարտովն այս իբրև ապացույց ե բերում ընդդեմ պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի։ Ընկ. Տրոցկին այդ դատողության մեջ ինքն էլ թույլատրելի յե գտնում «դեմոկրատական բնակչության ներկայացուցիչների մասնակցությունը» «բանվորական կառավարության մեջ», այսինքն թույլատրելի յե գտնում կառավարություն պրոլետարիատի և գյուղացիության ներկայացուցիչներից։ Ինչ պայմաններով թույլատրել պրոլետարիատի մասնակցությունը հեղափոխության կառավարության մեջ,—այդ հատուկ հարց ե և այդ հարցում, շատ կարելի յե, վոր բոլշևիկները չեն համաձայնվի վոչ միայն Տրոցկու, այլև լեհական ս.-դ. հետ։ Բայց հեղափոխական դասակարգերի դիկտատուրայի հարցը վոչ մի ձևով չի հանգում այս կամ այն հեղափոխական կառավարության մեջ «մեծամասնություն» լինելու հարցին, այս կամ այն կառավարության մեջ ս.-դ. մասնակցության թույլատրելի լինելու պայմաններին։

Վերջապես, ամենից ավելի սխալ ե ը. Մարտովի բերած ը. Տրոցկու կարծիքներից յերրորդը, վոր ը. Մարտովին «արդարացի» յե թվում. «Թող նույնիսկ նա (գյուղացիությունը) այդ անի («միանա բանվորական դեմոկրատիայի ռեժիմին») վոչ մեծ գիտակցականությամբ, քան նա սովորաբար միանում ե բուրժուական ռեժիմին»։ Պրոլետարիատը չի կարող վոչ հույս դնել գյուղացիության անգիտակցության և նախապաշարումների վրա, ինչպես դրանց վրա հույս են դնում ու հենվում բուրժուական ռեժիմի տերերը, վոչ էլ յենթադրել հեղափոխական շրջանում գյուղացիության թեկուզ սովորական անգիտակցականության և պասսիվության պահպանումը։ Ռուսական



հեղափոխության պատմության փաստերը ցույց են տալիս, վոր 1905 թ. վերջերում բարձրացած առաջին ալիքն իսկ միանգամից հրում ե գյուղացիությունը այնպիսի քաղաքական կազմակերպության (Համառուսական Գյուղացիական Միություն), վորն անկասկած հատուկ գյուղացիական կուսակցության սաղմն եր հանդիսանում։ Առաջին և յերկրորդ Դումաներում, չնայած հակահեղափոխությունը վոչնչացրել եր առաջավոր գյուղացիների առաջին փոխը (смена), գյուղացիությունը—առաջին անգամ համազգային մասշտաբով, համառուսական մասշտաբով—միանգամից հիմնում ե «Աշխատավորական խմբակը», հատուկ գյուղացիական կուսակցության անկասկածելի սաղմը։ Այդ սաղմերում ու սկզբնավորություններում շատ անկայուն, անորոշ, խախուտ բան կա, այդ անկասկած ե, բայց յեթե հեղափոխության սկիզբն այդպիսի քաղաքական խմբավորումներ ստեղծեց, ապա միանգամայն անկասկած ե, վոր այդպիսի «վախճանի» հասցրած կամ, ավելի ճիշտ, այդպիսի բարձր աստիճանի զարգացման հասցրած հեղափոխությունը, ինչպիսին հեղափոխական դիկտատուրան ե, կստեղծի ավելի ձևավորված և ավելի ուժեղ հեղափոխական-գյուղացիական կուսակցություն։ Այլ կերպ դատել, նշանակում ե յենթադրել, վոր հասուն մարդու միքանի եյական որգանները կարող են մանկական մնալ ըստ մեծության, ըստ ձևի, ըստ զարգացման աստիճանի։

Համենայն դեպս ը. Մարտովի յեզրակացությունը, թե կոնֆերենցիան համաձայնվեց հենց Տրոցկու հետ իշխանության համար մըրցվող կռվում պրոլետարիատի և գյուղացիության միջև լինելիք փոխհարաբերությունների հարցում, ապշեցուցիչ կերպով անհամապատասխան ե փաստերի հետ, իսկապես մի փորձ ե բառից «ծծելով հանել» այն, ինչ վոր կոնֆերենցիայում ամենևին քննության չի առնվել, չի անցկացվել, նկատի չի ունեցվել։

Դիպչելով Կաուցկուն, ը. Մարտովը դարձյալ միքանի բառում կենտրոնացնում ե այնքան առատ անճշտություններ, վոր ըստ եյության նրան պատասխանելու համար անխուսափելիորեն ստիպված ենք պատմել ընթերցողին համարյա թե ամբողջն սկզբից։

Բոլորովին սխալ ե, վոր «շատերը, նրանց թվում և Լենինը Կաուցկու «Հեռանկարներ» հոդվածի առաջաբանում, վճռականապես ժըխտում եյին մեր հեղափոխության բուրժուական բնույթը», ճիշտ նույնպես սխալ ե նաև, վոր Կաուցկին «հայտարարել ե ռուսական հեղափոխությունը վոչ-բուրժուական»։ Բանը բոլորովին այլ կերպ եր։

Պլեխանովը հարցերով դիմեց միջազգային սոցիալ-դեմոկրատիայի շատ ներկայացուցիչների, ըստ վորում առաջինում հարցնում եր ռուսական հեղափոխության «ընդհանուր բնույթի» մասին, իսկ յերկրորդում «ս.-դ. կուսակցության դիրքի մասին բուրժուական դեմոկրատի-

այի վերաբերմամբ, վորն իր ձեռվ կռվում է հանուն քաղաքական ազատության»: Հարցերի այսպիսի ձեւակերպման մեջ արդեն պարունակվում եր ընկեր Պլեխանովի յերկու սխալը ընդդեմ մարքսիզմի. առաջին սխալ—հեղափոխության—**նրա հասարակական-տնտեսական բովանդակության իմաստով**—«ընդհանուր բնույթի» շփոթումը հեղափոխության շարժիչ ուժերի հարցի հետ: Մարքսիստները չեն կարող այդ հարցերը շփոթել, չեն կարող նույնիսկ առաջին հարցի պատասխանից **անմիջականորեն** յերկրորդ հարցի պատասխանը յեզրակացնել առանց հատուկ կոնկրետ անալիզի: Յերկրորդ սխալ—մեր հեղափոխության մեջ գյուղացիության դերի հարցի շփոթությունը բուրժուական դեմոկրատիայի դերի հետ ընդհանրապես: Իրապես և գյուղացիությունը և լիբերալները համապատասխանում են «բուրժուական դեմոկրատիա» գիտական հասկացողությանը, բայց պրոլետարիատի վերաբերմունքը «բուրժուական դեմոկրատիայի այդ յերկու տարբեր տեսակների հանդեպ անխուսափելիորեն պետք է եյապես զանազան լինի:

Կաուցկին իսկույն նկատել է ընկ. Պլեխանովի սխալները և իր պատասխանի մեջ **ուղղել է** այն: Հեղափոխության հասարակական-տնտեսական բովանդակության իմաստով Կաուցկին վոչ միայն չի մտածել ժխտել նրա բուրժուական բնույթը, այլ, ընդհակառակը, վըճռականապես ընդունել է այդ:

Ահա սրան վերաբերող Կաուցկու հայտարարությունները հենց նույն «Հեռանկարներում», վորոնք նույնպես սխալ կերպով շարադրում է ը. Մարտովը.

«Այժմյան հեղափոխությունը (Ռուսաստանում) կարող է միայն հասցնել այն բանին, վոր գյուղում կստեղծվի ամուր գյուղացիություն հողի մասնավոր սեփականության հիման վրա և դրանով պրոլետարիատի ու գյուղական բնակչության ունևոր մասի միջև հենց այնպիսի անդունդ կփորվի, ինչպիսին գոյություն ունի արդեն Արևմտյան Յեվրոպայում: Այս պատճառով չի կարելի յերևակայել, վոր այժմյան ռուսական հեղափոխությունը կտանի արդեն դեպի արտադրության սոցիալիստական յեղանակի մուծումը, նույնիսկ յեթե նա ժամանակավորապես կառավարության ղեկը սոցիալ-դեմոկրատներին հասցներ» (եջ 31, Ն. Լենինի խմբագրությամբ լույս տեսած թարգմանությունը): Լենինի առաջաբանում հենց այս տեղն է նկատի առնվում, յերբ ասվում է (եջ 6, նույն տեղում). «Հարկ ել չկա ասելու, վոր **բոլոր** ռուսական ս.-դ. հիմնական սկզբունքները գյուղացիական շարժման **վոչ-սոցիալիստական** բնույթի մասին, մանր գյուղացիական արտադրությունից սոցիալիզմի ծագման անհնարին լինելու մասին և այլն Կաուցկին **ամբողջովին** (շեղագիրը Լենինինն է առաջաբանում) ընդունում է»*:

* Տես VIII հ., եջ 84:



Ընկ. Մարտովի պնդումը, թե Լենինը վճռականորեն ժխտում եր մեր հեղափոխության բուրժուական բնույթը, վճռականորեն հակասում է ճշմարտությանը:

Լենինը հենց հակառակն է ասում: Կաուցկին վճռականորեն մեր հեղափոխությունը բուրժուական ճանաչեց ըստ իր ընդհանուր բնույթի հեղափոխության հասարակական-տնտեսական բովանդակության իմաստով:

«Պլեխանովի առաջին հարցին»,—գրում է նույն տեղում Կաուցկին,—ինձ թվում է, չի կարելի այս կամ այն իմաստով պարզ պատասխան տալ: Բուրժուական հեղափոխությունների, այսինքն հեղափոխությունների, վորոնց շարժիչ ուժը բուրժուազիան հանդիսանար, ժամանակը անցել է, անցել է նաև Ռուսաստանի համար... Բուրժուազիան Ռուսաստանի արդի հեղափոխական շարժման շարժիչ ուժերին չի պատկանում, և այդ չափով ել այդ շարժումը չի կարելի բուրժուական անվանել» (եջ 29): Ընթերցողը տեսնում է, վոր այստեղ Կաուցկին ամենալիակատար պարզությամբ վորոշում է, թե ինչի մասին է խոսքը,—ամենալիակատար պարզությամբ խոսում է բուրժուական հեղափոխության մասին վոչ թե հասարակական-տնտեսական բովանդակության իմաստով, այլ հեղափոխության մասին այն իմաստով, «վորի շարժիչ ուժը հանդիսանում է բուրժուազիան»:

Ապա: Պլեխանովի յերկրորդ սխալը Կաուցկին նրանով ուղղեց, վոր պարզ ու վորոշ բաժանեց «լիբերալ» և գյուղացիական բուրժուական դեմոկրատիան:

Կաուցկին ընդունեց, վոր «արդյունաբերական պրոլետարիատի և գյուղացիության շահերի ընդհանրության մեջ է պարունակվում ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական ուժը», վոր «առանց գյուղացիների մենք այժմ չենք կարող Ռուսաստանում հաղթանակ տանել» (եջ 31): Հետաքրքրական է նշել—«**յեվ**»-ի այն անհետաքրքրական հարցի առթիվ, վորով լցված է ը. Մարտովի սկզբունքային դիսկուսիան,—վոր Կաուցկին հենց նույն հոդվածում, այսինքն 1906 թ., **մի եջում** գործ է ածում նաև «հենվել» արտահայտությունը («վորի դասակարգի վրա կարող է հենվել ռուսական պրոլետարիատը») ու «հեղափոխական կռվի մեջ **պրոլետարիատի միությունը մյուս դասակարգերի հետ** պետք է ամենից առաջ հիմնվի տնտեսական շահերի ընդհանրության վրա» արտահայտությունը (եջ 30):

Արդյոք ընկ. Մարտովը Կ. Կաուցկուն չի մեղադրի այն բանում, վոր նա 1906 թ. նախատեսնելով Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 1908 թ. դեկտեմբերյան կոնֆերենցիան, նպատակ է դրել «շփոթեցնել ընթերցողներին», «սվաղել ու սոսնձել» բոլշևիկների ու լեհական ս.-դ. միջև յեղած տարաձայնությունները, «խորամանկել», և այլն:

Նկատենք, վոր ռուսական բուրժուական հեղափոխության մեջ պրոլետարիատի ու գյուղացիության միության իդեան պաշտպանելով՝ Կաուցկին նույնպես վոչ մի «նոր» իդեա առաջ չի քաշում, այլ ամբողջովին գնում է Մարքսի ու Էնգելսի հետքով։ Մարքսը 1848 թ. «Նոր Հռենոսյան Թերթում» գրում էր. «Խոշոր բուրժուազիան,—խոսքը վերաբերում է 1848 թ. մարտի 18-ի գերմանական բուրժուազիային,— վոր հենց գլխից հակահեղափոխական է, պաշտպանողական ու հարձակողական դաշն է կնքել ռեակցիայի հետ ժողովրդի, այսինքն բանվորների ու դեմոկրատական բուրժուազիայի վախից» (տես Մերինգի հրատարակած Մարքսի աշխատությունների յերրորդ հատորը. ռուսերեն լույս են տեսել առայժմ միայն յերկու հատորը)։ «1848 թ. գերմանական հեղափոխությունը,—գրում էր Մարքսը 1848 թ. հուլիսին,— միայն 1789 թ. ֆրանսիական հեղափոխության ծաղրական նմանությունն է։ 1789 թ. ֆրանսիական բուրժուազիան վոչ մի րոպե չլքեց իր դաշնակիցներին, գյուղացիներին... 1848 թ. գերմանական բուրժուազիան առանց վորևե խղճահարության մատնում է գյուղացիներին»...

Մարքսն այստեղ պարզորեն **բուրժուական** հեղափոխության վերաբերմամբ ռեակցիայի հետ դաշնակցած հակահեղափոխական բուրժուազիային հակադրում է բանվոր դասակարգին, պլյուս դեմոկրատական բուրժուազիան, այսինքն գլխավորապես գյուղացիությունը։ Յեվ չի կարելի մոռանալ, թե այս հայացքը բացատրվում է Մարքսի այդ ժամանակվա սոցիալիստական աշխարհահայացքի անավարտությամբ։ 44 տարի անց, 1892 թ. Էնգելսն իր «Պատմական մատերիալիզմի մասին» հոդվածում գրում էր (Neue Zeit», XI հ. I, ռուսերեն՝ «Исторический материализм» ժողովածուի մեջ). «...Բոլոր յերեք մեծ բուրժուական հեղափոխությունների մեջ» (XVI դարի ռեֆորմացիան և գյուղացիական պատերազմը Գերմանիայում, XVII դարի անգլիական հեղափոխությունը և Ֆրանսիականը—XVIII) «մարտական բանակը կազմում են գյուղացիները... Բացառապես գյուղացիության» (յոմեններն անգլիական հեղափոխության մեջ) և «քաղաքների պլեբեյական տարրերի միջամտության շնորհիվ կռիվը հասցվեց մինչև վերջին վճռական վախճանին, և Կարլ I եշաֆոտի արժանացավ։

Հետևաբար ռուսական բուրժուական հեղափոխության առանձնահատկությունը միայն նրա մեջն է, վոր XVI, XVII և XVIII դարերում քաղաքների յերկրորդ տեղում յեղած պլեբեյական տարրերի փոխարեն XX դ. առաջին տեղում հանդես է գալիս պրոլետարիատը։

V

Յեզրափակում ենք։ Ընկ. Մարտովը շոշափել է չափազանց կարևոր մի հարց, վոր արժանի յե ամենահանգամանորեն դիսկուսիայի



կուսակցության կենտրոնական որգանի էջերում։ Բայց հարցը չի կարելի «շոշափել», այն պետք է քննել ըստ էության, հենվելով վոչ միայն Մարքսի ու Էնգելսի ուսմունքի վրա, այլև 1905—1907 թ. թ. ռուսական հեղափոխության փորձի վրա։

Այն միտքը, թե պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական դիկտատուրան ս.-դ.-ների նարոդնիկական գերությունն է, միայն ժպիտ է հարուցանում։ Իբրթե-մարքսիստների նման դատողները պետք է առաջին հերթին Կաուցկուն, Մարքսին և Էնգելսին մեղադրեյին նարոդնիկական գերության մեջ։ Բոլոր բուրժուական մեծ հեղափոխությունների մեջ վճռական հաղթանակ կարող է տանել միայն պրոլետարիատը (ավելի կամ պակաս զարգացած) գյուղացիության հետ դաշնակցած, այդպես է նաև Ռուսաստանի բուրժուական հեղափոխության հաղթանակի պայմանը։ 1905—1907 թ. թ. փորձը անցքերի **յուրաքանչյուր** խոշոր շրջապտույտով այս ճշմարտությունը **գործնականապես** հաստատում էր, վորովհետև իրոք բոլոր վճռական յելույթները, և՛ «մարտական», և՛ պարլամենտական, հենց պրոլետարիատի և գյուղացիության «միատեղ գործողությունները» եյին։

Մեր կուսակցությունը ամուր կանգնած է այն տեսակետին, վոր պրոլետարիատի դերը բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ **առաջնորդի դեր** է, վոր այն մինչև վերջ հասցնելու համար անհրաժեշտ են պրոլետարիատի ու գյուղացիության **միատեղ գործողությունները**, վոր առանց հեղափոխական դասակարգերի կողմից **քաղաքական իշխանության նվաճման** չի կարող հաղթանակ լինել։ Այս ճշմարտություններից հրաժարումը դատապարտում է սոցիալ-դեմոկրատներին անխուսափելի տատանումների, «առանց նպատակ շարժման», դեպքից դեպք անսկզբունք համաձայնությունների քարոզի, իսկ իրոք հենց այդ նշանակում է կադետական գերություն, այսինքն բանվոր դասակարգի կախումը լիբերալ-միապետական, հակահեղափոխական բուրժուազիայից։

«Սոցիալ—դեմոկրատ» №№ 3 և 4,
1909 թ. մարտի 9 (22) և մարտի 21
(3 ապրիլի)։

---

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ՄԱՆԻՖԵՍՏ ԲԱՆԱԿԻՆ ՅԵՎ ՆԱՎԱՏՈՐՄԻՆ. ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻՑ ՈՒ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻՑ.

Զինվորներ և նավաստիներ։ Կառավարությունը ցարական հրամանով ցրեց Պետական Դուման և ամեն կողմից զորք հավաքեց, վոր-

պեսզի զենքի ուժով ճնշի ժողովրդին: Ժողովրդական ներկայացուցիչները ձեր հայրերի ու յեղբայրների կողմից նրա համար եյին ընտրըված, վորպեսզի ցարին հայտնեն ամբողջ ժողովրդի կրած վիրավորանքների մասին ու ժողովրդի համար հող և ազատություն ձեռք բերեն՝ Նա լսեց իր հին խորհրդականներին՝ մեծ իշխաններին, մինիստրներին, գեներալներին և կալվածատերերին, վորոնք չեն ուզում իրենց ձեռքից բաց թողնել իրենց կալվածները, իրենց բազմահազար կոպարները (ОКЛАД) և անպատասխանատու իշխանությունը:

Ամբողջ Ռուսաստանը յերկու մասի յե բաժանվել: Մի կողմը հըսկայական մեծամասնությունն է, ամբողջ գյուղացիությունը և բանվորները, բոլոր աղքատները և ճնշվածները, գիտնական և կրթված մարդկանցից լավագույնները, գիտակից զինվորները, լավագույն սպաները և այն բոլոր նահատակները, վորոնք բանտերում են, ու նրանց թվում հազարավոր զինվորներ ու նավաստիներ: Մյուս կողմը՝ մի բուռն բռնաբարներն են, մեծ իշխանները, մինիստրները, Տրեպովը, Պոբեդանոսցևը, մանջուրական գեներալները, վորոնք փախան յապոնացիներից, բայց կրակի կալեցին Մոսկվան, Ադեսսան, Ջիտան, տեղական ինքնավարության պետերը, վոստիկանությունը, լրտեսները և ամբողջ սև հարյուրյակը: Նրանք հույս եյին դնում ձեր ուժի վրա նրա համար, վոր ճնշեն ամբողջ ռուս ժողովրդին: Արդյոք դուք կկրակեք ժողովրդի վրա, կթափեք ժողովրդի արյունը, կպատռեք ժողովրդի կուրծքը: Հիշեք, վոր դուք գյուղացիների տղաներ եք, ռուս ժողովրդի զավակներ:

Հենց այս ժամանակ այն գյուղում, վորտեղ դուք ծնվել եք, ձեր սեփական յեղբայրները նույնպես հուզվում են, պահանջում են հող և ազատություն, իսկ կառավարությունը ուղարկում է այնտեղ ուրիշ զինվորներ, վորպեսզի գնդակահարի ու կոտորի նրանց: Ինչու՞ պիտի պաշտպանեք կառավարությունը: Միթե դուք ինքներդ ճնշված չեք: Ձեզ ավելի վատթար են ճնշում, քան մյուս բոլորին, ստրկային աշխատանքի յեն դնում ձեզ իբրև սպասավոր (ДЕНЩИК) աշխատելու սպաների մոտ, տանջում են տուգանքի բատալիոններում, ամեն մի համարձակ բառի համար աքսոր են ուղարկում, գնդակահարում: Մենք, ժողովրդի ներկայացուցիչներս, ցանկանում եյինք լավացնել ձեր դրությունը, մենք ցանկանում եյինք որենք հրատարակել զինվորական ծառայության մասին, կրճատելով այն մինչև 2 տարի, դենշչիկային ծառայության վերացման մասին, զինվորականների կողմից զինվորներին վորևե վիրավորանք հասցնելն արգելելու մասին և զինվորներին ամսական դրամական ռոճիկ նշանակելու մասին:

Մենք ցանկանում եյինք բարելավել զինվորների կյանքը, ինչպես նաև ընդհանրապես բարելավել ամբողջ աշխատավոր ժողովրդի վիճակը: Կառավարությունն շտապեց ցրել Պետական Դուման:



Զինվորներ և նավաստիներ: Մենք, գյուղացիության և բանվորների կողմից որինական կերպով ընտրված ներկայացուցիչներս հայտարարում ենք ձեզ. 1) այժմ առանց Պետական Դումայի կառավարությունը որինական չէ: Նրա հրամանները որինական ուժ չունեն: Մենք կոչ ենք անում ձեզ դադարել ապորինի կառավարությանը հնազանդվելուց և դուրս գալ նրա դեմ մեզ հետ միասին ու ամբողջ ռուս ժողովրդի հետ միասին: Մենք յերդվել ենք պաշտպանել հայրենիքը: Ձեր հայրենիքը—ձեր ռուսական քաղաքները և գյուղերը ու ամբողջ ռուս ժողովրդին: Ուրեմն պաշտպանեցեք այն: Պաշտպանեցեք նրա հետ միասին հողն ու ազատությունը:

Ամեն վոք, ով կկրակի ժողովրդի վրա, վոճրագործ է, դավաճան և ժողովրդի թշնամի: Նրանց, ովքեր կկրակեն ժողովրդի վրա, մենք իրենց յեղբայրների ու հայրերի անունից հայտարարում ենք, վոր նրանց դարձ չի լինի հայրենի գյուղերը, և նրանց անունների վրա կըծանրանա ժողովրդի հավիտենական անեծքը: Կառավարությունը բանակցությունների մեջ է մտել ավստրիական և գերմանական կայսրների հետ. գերմանական զորքերը պատրաստ կլինեն ներխուժել մեր յերկիրը, պաշտպանել ժողովրդին զզվեցրած կառավարությունը օտարյերկրյա զենքի ուժով: Այդպիսի բանակցությունների համար մենք կառավարությունը, իբրև պետական դավաճանության մեջ հանցավոր, որենքից դուրս ենք հայտարարում:

Զինվորներ և նավաստիներ: Ձեր սրբազան պարտականությունն է փրկել ռուս ժողովրդին դավաճան կառավարությունից և պաշտպանել ժողովրդական ընտրովի ներկայացուցիչներին:

Ամեն վոք, ով վոր իր գլուխը կդնի այս սրբազան պատերազմում, կպսակի իրեն անթառամ փառքով, և ռուս ժողովուրդը կորհնի նրա անունը:

Ուրեմն համարձակ հանուն հայրենիքի ու հանուն ժողովրդի, հանուն հողի ու ազատության ընդդեմ վոճրագործ կառավարության:

Այդ կռվի մեջ ժողովրդի ընտրյալները ձեզ հետ կլինեն:

## 2. ՄԱՆԻՖԵՍՏ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ.

Ընկեր գյուղացիներ: Սրանից յերկու և կես ամիս առաջ դուք ամբողջ ռուս յերկրում տանջալի կերպով փնտռում եյիք հավատարիմ, սիրած մարդկանց Պետական Դումա ուղարկելու համար: Դուք Պետական Դումայի վրա եյիք դնում ձեր բոլոր հույսերը: Այն ժամանակ էլ մարդիկ կային, վորոնք դաժան վճռականությամբ ասում եյին ձեզ, վոր խաղաղ ճանապարհով չի կարելի վոչ մի բանի հասնել, վոր բարությամբ կառավարության հետ վոչ մի բան անել չի լինի, վոր միայն ուժով կարելի յե կոտրել նրա չարամիտ համառությունը: Բայց

ծանր էր ձեզ համար հավատալ, վոր ժողովրդի ազատագրությանը ստիպված ենք շատ թանգ գին վճարել, մարդկային արյուն։ Յեվ ձեր սրտերում կամացուկ ջերմանում էր վերջին հույսը. ինչպես սրբապատկերի առաջ մեղրամոմը, թե գուցե ամբողջ ռուս յերկրի ընտրյալները հավաքվելով ցարական գահի շուրջը և համբերաշխ, միաձայն պատմելով ժողովրդի թշվառությունների մասին, ձեռք կբերեն արդարացի որենքներ և կարգեր, ձեռք կբերեն հող և ազատություն։

Ծանր փորձության յենթարկվեցին ձեր հույսերը։ Ձեր ներկայացուցիչները ցարի շուրջը գտան մեծ իշխանների, ցարական ընտանիքի անդամների, պալատականների, ամենահարուստ կալվածատերերի, մինիստրների, բարձր պաշտոնեյության վոսկեզարդ ամբոխը։ Նրանք բոլորը ամուր կառչել եյին ժողովրդի վրա ունեցած իրենց իշխանությանը, իրենց բազմահազար ռոճկին, գանձատունը կողոպտելու ազատությանը, միլիոնանոց կալվածներին ու կապիտալներին։ Նրանք շրջապատել եյին ցարական գահը և տոգորել այն իրենց չարության թույնով, և ամբողջ կառավարությունից, ցարի գլխավորությամբ, ժողովրդական ներկայացուցիչները կարճ պատասխան լսեցին—վոչ հող, վոչ ազատություն։ Իրենց՝ ժողովրդական ներկայացուցիչներին, իրեն՝ Պետական Դումային ցարը և մինիստրները համաձայնվում եյին տանել միայն այն դեպքում, յեթե նրանք հնազանդությամբ կհամաձայնեին ժողովրդական փողերը գանձագողների տրամադրության տակ դնել և խրախուսել արտասահմանյան նոր փոխառությունները, վորոնցով ռուս ժողովրդին կգցեին անվճարելի պարտքի մեջ և կտրկացնեին վոչ միայն ձեզ, ընկեր գյուղացիներ, այլ և ձեր զավակներին ու թոռներին։ Հակառակ դեպքում կառավարությունը վճռեց ձեր ընտրյալների հետ վարվել իր ձևով։

Պետական Դումայի ավելի թույլ ու զիջող անդամներից շատերի սիրտը քիչ էր մնում դողար և ամուր կամքը սասանվեր։ Բայց դուք, ընկեր գյուղացիներ, ձեր հազարավոր վճիռներով, նամակներով ու հեռագրերով և ուղարկած սուրհանդակներով, պահպանեցիք Դումայի արիությունը, դուք պահանջեցիք, վորպեսզի ձեր ընտրյալներն ամուր կանգնեյին իրենց ասածի վրա և չվերադառնային առանց հողի ու ազատության։ Դուք պահանջեցիք, վորպեսզի նրանք չխնայելով իրենց, հայտնեյին ժողովրդի ամուր կամքը և նրա անդրդվելի պահանջները, դուք խոստացաք կարիքի դեպքում ձեր ընտրյալներին ձեր հզոր պաշտպանությունը։ Ձեր ընտրյալները կատարել են իրենց պարտքը, և ահա այժմ նրանց ցրել են, հետամտում են ավելի համարձակներին, բանտարկելով ու աքսորելով նրանց։ Իսկ նրանք չդավաճանեցին ժողովրդական գործին, դուք ևս չեք կարող դավաճանել նրան ու հենց դրանով դավաճանել ինքներդ ձեզ։



Կառավարությունը ժողովրդին պատերազմ հայտարարեց։ Դուման ընտրված էր ժողովրդի կողմից, և միայն ինքը ժողովուրդը կարող էր նրան զրկել իր վստահությունից։ Ցարական հրամաններով կառավարությունը ցրեց Դուման։ Այդ կառավարությունն ասաց, վոր չի վստահում հենց նրանց, ում վստահում է ժողովուրդը։ Նա վոտնատակ տվավ Դումայի իրավունքները և ժողովրդական իրավունքները։

Հաշտության բանակցությունները ժողովրդի ու կառավարության միջև վերջացած են։ Նոր ուժով սկսվում է մեծ կռիվ, վորի մեջ գուցե արյան հեղեղներ կթափվեն։ Յեվ այս բոլոր արյունը կընկնի վոճրագործ կառավարության գլխին։ Նա չի խնայի ժողովրդին, ժողովուրդն էլ կմերժի նրան խնայել, և կառավարությունն այս գիտե։ Նա միայն հույս է դնում զորքի ծառայության վրա։ Զորքի մեջ անհանգստություն կա։ Զինվորներն սկսում են զգալ իրենց արենակցական կապը ժողովրդի հետ։

Յեվ ահա մեր կառավարությունը հասնում է այն բանին, վոր ավստրիական և գերմանական կայսրները համաձայնության են գալիս իրենց (ոտարերկրյա) զորքը ցարական կառավարության տրամադրության տակ դնելու ռուս ժողովրդի դեմ պատերազմելու համար։ Այս ուղղակի դավաճանություն է հայրենիքի դեմ ոտարերկրացիների հետ, այս կառավարության պետական դավաճանություն է, այս հայրենիքի մատնություն է։ Կորչի՛ ապորինի կառավարությունը, վոչ վոք իրավունք չունի հնազանդվելու նրան. Նրա կարգադրությունները կատարելը վոճրագործություն է։ Ամենուրեք ժողովուրդը պետք է տապալի տեղական իշխանությունները և նրանց փոխարեն դնի իր ընտրովիներին, ժողովրդականներին։ Ամենուրեք պետք է խլել և հանձնել այս որինական ժողովրդական ընտրովի իշխանությունների ձեռքը բոլոր կառավարական գումարները և կապիտալները։ Նրանց տրամադրության տակ պետք է անցնի նաև զորքը։ Նրա պարտականությունն է վոտքի յելնել դավաճան կառավարությունից պաշտպանելու ժողովուրդը և հայրենիքը։

Նրանց հետ, քաղաքի բանվորների հետ միասին և բոլոր մյուս աշխատավորների հետ և ժողովրդին անձնվեր բոլոր մարդկանց հետ, աշխատավոր գյուղացիությունը պետք է իր գործերն իր ձեռքն առնի։ Նրան հող և ազատություն չտվին։ Նա ինքը պետք է վերցնի ազատությունը, տապալելով բոլոր կառավարական իշխանությունները և նրանց փոխարինելով իր ընտրովիներով։ Նա ինքը պետք է անհապաղ վերցնի ամբողջ հողը, բայց վոչ թե այն անկարգ կերպով զավթելով այլ հանձնելով այն իր ընտրովիների, գավառակային և գավառային իշխանությունների տնորինությանը, մինչև հողային նոր որենքի մշակումը համաժողովրդական ընտրյալների կողմից, վորոնք հավասար,

ուղղակի և գաղտնի ձայնավորության հիման վրա կկազմեն Հիմնադիր ժողովը։

Հասել է ժամանակը, որ ամբողջ երկիրը ինչպես մի մարդ ոտքի ելնի, հայրենիքը կորստից և հրդեհից փրկելու համար, համաժողովրդական սարսափելի դատի համար ժողովրդի դավաճանների և թշնամիների դեմ։ Վա՛յ, ժողովրդի թշնամիների արյունոտ մտադրությունները չեն հաջողվի, ժողովուրդը հնազանդությամբ չի հանձնվի իր ճընշողների ձեռքը։ Նա այլևս չի ցանկանում ապրել հալից ընկած աշխատող ստրուկի կյանքով։ Նա ցանկանում է մարդկային ազատ և պայծառ կյանք։ Ավելի լավ է մահը, քան դարձը դեպի զզվեցրած հին կարգերը. չխնայենք մեզ, այլ փրկենք մեր ամբողջ հայրենիքը, մեր զավակներին ու թոռներին մեր կառավարության չարագործություններից։ Ուրեմն ոտքի ելնենք միանգամից, համերաշխությամբ և ուժեղ, ամեն մեկը բոլորի համար և բոլորը ամեն մեկի համար։ Չի կարելի դանդաղել—հայրենիքը վտանգի մեջ է։ Փրկե՛ք հայրենիքը։

Ազատությո՛ւն և հո՛ղ ամբողջ ժողովրդին։—Կորչե՛ն ժողովրդի թշնամիները, դավաճանները, բռնաբարները, չարագործները։—Կորչի՛ ամբողջ ցարական կառավարությունը։—Ճանապա՛րհ ազատ ռուս ժողովըրդին։

**Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիայի կոմիտե։**

**Պետական Դումայի Աշխատավորական խմբակի կոմիտե։**

**Համառուսական Գյուղացիական Միություն։**

**Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե։**

**Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կենտրոնական կոմիտե։**

**Համառուսական Երկաթուղային Միություն։**

**Համառուսական Ուսուցչական Միություն։**

### 3. ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՐԴԻՆ.

Ամբողջ Ռուսաստանում, ծայրից ծայր, պատերազմ է։ Նրա վերջը չի երևում, շարունակ ավելի վատ ու ավելի շատ է բորբոքվում։ Շտապ կերպով մեր վողորմած ցարի կառավարությունը պատրաստում է թնդանոթներ ու գնդացիրներ, տեղափոխում է զենք և ռազմամթերք. պատժիչ գնացքները գնդացիրներով զինված սև ոձերի նման սողում, վազում են ռելսերով. քաղաքի մայթերի քարերը և գյուղական դաշտերը բանվորների, գյուղացիների և զինվորների արյունով ողողվում են. հրդեհների ցոլքը կախված է այրված քաղաքների և գյուղերի վրա։ Ցարական կառավարությունը նոր



մարտի, նոր կռիվ է պատրաստվում, նա այս տարի զինվորական ծառայության է կոչում 480,000 նորակոչ։ Նշանակում է՝ պակաս է քաջ զինվորությունը, քիչ է ցարի և նրա ծառաների ուժը։ Ո՞ւմ դեմ ուղղելու համար է ցարին պետք այդ ուժը։ Ինչո՞ւ, ո՞ւմ դեմ է ցարը պատրաստվում պատերազմ վարել։ Գուցե կալվածատերերի՞ դեմ, որոնք ամբողջ հողը գրավել են։ Գուցե գործարանատերերի՞ դեմ, չինովնիկների և մինիստրների՞ դեմ, որոնք ավերել ու կողոպտել են ամբողջ Ռուսաստանը։

Ռուս ժողովրդի աչքերը բացվել են, այժմ նա լավ է հասկանում, որ այդ այդպես չէ։ Իրավազուրկ, սոված, ամբողջովին կողոպտված բանվորը մի ժամանակ հավատում էր ցարի կառավարությանը. նա հավատով գնում էր ցարի մոտ և սպասում էր, որ ցարը կփրկի նրան տանջանքներից։ 1905 թ. հունվարի 9-ին բանվորի այդ հավատը ցարական այդ զորքերը գնդակահարեցին։ Իր տաք արյունով բանվորը ողողեց ցարի պալատի առաջի հրապարակը և դրանով վճարեց իր հավատի համար։

Բայց դեռ ամբողջ ժողովրդի մեջ չէ մեռել խաղաղ ելքի հնարավորության հավատը։ Նա իր պատգամավորներին ուղարկեց Պետական Դումա, որպեսզի նրանք այդտեղ ձեռք բերեն նրա համար հող և ազատություն, որպեսզի նրանք սահմանեն ավելի լավ և ավելի արդարացի կարգեր։

Եվ երբ այդ մասին պատգամավորները խոսեցին այնպես, որ նրանց ճառերը դուր չեկան ցարին, ցարը ցրեց պատգամավորներին, ցարը խորտակեց այդ հավատը։

Այժմ ցարը զորակոչում է ձեր զավակներին և եղբայրներին—480,000 նորակոչ։ Երբ պատերազմ էյին վարում Յապոնիայի դեմ, այսքան մեծ զինվորագրություն չկար։

Ո՛, այժմ թշնամին ավելի սարսափելի է,—ռուս ժողովրդի, բանվորների և գյուղացիների դեմ, սեփական զինվորների և նավաստիների դեմ է պատերազմ մղում ցարը և նրա կառավարությունը։ Եվ չկա հաշտություն նրանց միջև և չի կարող հաշտություն լինել։ Մտածեցեք, թե ինչ է նշանակում այս ուժգին նորակոչային զինվորագրությունը։ Ցարը և նրա պաշտպաններն ասում են.—Մենք ժողովրդին հող չենք տա։ Բայց մենք քիչ զինվորներ ունենք։ Դրա համար էլ տվեք մեզ զինվորներ, տվեք մեզ կես միլիոն ձեր լավագույն, ամենաուժեղ, ամենաառողջ զավակներին ու եղբայրներին—և մենք կսպանենք ձեզ։ Ահա թե ինչ է նշանակում այս տարվա նոր ուժգին նորակոչային զինվորագրությունը։ Իսկ ինչպես պետք է պատասխանի ամբողջ ժողովուրդն այս զինվորագրությանը. միակ պատասխանը, որ արժանի է ժողովրդին, կարող է լինել միայն այս.—**Ոչ մի նորակոչ**

**ցարական կառավարությանը,** վոչ մի զինվոր այն կառավարությանը, վոր պատերազմ է վարում ժողովրդի դեմ։ Պատերազմ է, դե թող պատերազմ լինի։ Յեթե ժողովուրդը կռվող կողմ է, նա չի կարող, չպետք է զինվոր տա կառավարությանը, վորովհետև այդ կնշանակեր հակառակորդին ոգնական զորք ուղարկել, թշնամուն ոգնություն ցույց տալ։ Այս հասկացել են, այս պետք է այժմ հասկանան բոլորը։ Յերբ Պետական Դումայի ցարի կողմից հալածած պատգամավորները հավաքվեցին Ֆինլանդիայում, նրանք կոչ գրեցին ամբողջ ժողովրդին և այդ կոչի մեջ նրանք ասում են. «Վոչ մի նորակոչ կառավարությանը, վոչ մի կոպեկ հարկ»։ Շուտով ժամկետը կգա ամեն մի գյուղի, ամեն մի շենի, ամեն մի գյուղացու իր խոսքն ասելու։ Յերեք-չորս շաբաթ հետո արդեն պետք կլինի պատասխան տալ ցարին և նրա կառավարությանը, թե արդյոք ցանկանում է ժողովուրդը իր յեղբայրներին և զավակներին տալ իր թշնամիների ձեռքը։ Այդ պատճառով մենք ձեզ ասում ենք՝ մի սպասեք, ժամանակ մի կորցնեք, վորովհետև ժամանակը չի սպասում։ Ամենուրեք հենց այժմ, անհապաղ կազմեք գյուղական և գավառային ժողովներ։ Ամենուրեք ֆաբրիկաներում և զավոդներում, քաղաքներում կազմեք գյուղացիների, բանվորների և քաղաքացիների ժողովներ։ Այդ ժողովներում լրջորեն քննության առեք, թե ինչու յե ցարական կառավարությունը ձեզանից վերցնում ձեր զավակներին և յեղբայրներին։ Աչքներդ մի փակեք, մի մոռանաք, վոր պատերազմը ժողովրդի և կառավարության միջև չի վերջացել, այլ ել ավելի յե բորբոքվում։ Այդ ժողովներում կազմեք և վճիռներ հանեք՝ վոչ մի նորակոչ չտալ ցարական կառավարությանը։

Թող այդ ամբողջ ժողովրդի գործը լինի, թող դրա մեջ մեկ կամք լինի, և ամեն վոք, ով կտա իր զավակներին, ամեն վոք, ով ժողովրդի վճռի դեմ կերթա, ձեր հակառակորդների ծառան կլինի, վորոնց դեմ ժողովուրդը պատերազմ է վարում։ Թող այդ մասին համաձայնություն գան գավառակներով ու գավառներով և համերաշխորեն անցկացնեն այդ մերժումը։ Կառավարությունը, իհարկե, չի լռի։ Նրա պատժիչ ձեռքը կբարձրանա անհնազանդների վրա։ Նա չի խնայի մահապատիժներ և արյուն,—ինչ արժի նրա համար ժողովրդի արյունը։ Կառավարությունը գյուղերը և շեները կուղարկի պատժիչ ջոկատներ։ Անհրաժեշտ է ամեն ինչ անել, ինչ կարելի յե, վորպեսզի համոզենք զինվորներին ժողովրդի դեմ չգնալ։

Սրա համար ժողովվեցեք նրանց հետ, աշխատեցեք խաթրով համոզել նրանց՝ յեղբայրների արյունը չթափել, անցնել ժողովրդի կողմը և տալ նրան զենքը, ոգնել նրան կռվելու կառավարության դեմ։ Սրա համար ամենուրեք ժողովներում վորոշեցեք և վճիռներ հանեք՝ ընդմիշտ վոչնչացնել զինվորությունը, վոչնչացնել մշտական զոր-



քը։ Թող ամեն մի նորակոչ զինվորական պարհակն իր գյուղում կատարի։ Թող նրան այդ ժամանակ չպոկեն տնից և տնտեսությունից, թող չփակեն կազարմայի մեջ։

Ահա հենց այդ վճիռներն եք դուք հայտարարում այն զինվորներին, վորոնց կուղարկեն ձեզ խաղաղացնելու համար և նրանց, վորոնք ծառայում են քաղաքներում։ Զինվորը պետք է տեսնի, վոր բանվորի և գյուղացու հաղթանակը իր սեփական հաղթանակն է. նրանց պարտությունը՝ իր պարտությունը։ Վճիռներ հանեք և հայտարարեք բոլոր զինվորներին՝ այն զինվորները, վորոնք կկրակեն ժողովրդի վրա, կհեռացվեն հասարակությունից, և նրանց կզրեն հողաբաժնից։ Հենց այժմ սուրհանդակներ ուղարկեցեք ձեր զինվոր զավակների և յեղբայրների մոտ և համոզեք նրանց անցնել ժողովրդի կողմը։ Նրանց հայրենակիցների և ազգականների միջոցով նամակ ուղարկեք, բացատրեք այդ նամակներում, թե ինչպես այժմ ծանր է ձեր կյանքը, ինչի յեք ձգտում հասնել, և ինչպես ցարական կառավարությունը ծիծաղում է ձեր պահանջների վրա, թե ինչ չեղած ավերածության եք հասել դուք։ Չթողնեք, վոր ձեր զավակներն ու յեղբայրները մեկ-մեկ գնան գավառակ, յերբ նրանց կպահանջեն վիճակ հանելու համար։ Ամբողջ գյուղով թագցրեք նրանց, պաշտպանեցեք նրանց, մի հանձնեք։ Ուրյադնիկներին և ստրաժնիկներին (վերակացուներին և պահապաններին) զինված ընդդիմադրություն ցույց տվեք, կազմեցեք յերիտասարդներից և ծերերից մարտական ջոկատներ և ուժով պաշտպանվեցեք կառավարական ծառաներից։ Իմացեք՝ ամեն տեղ և ամեն ժամանակ չեն ոգնի ձեր հորդորները, ձեր խրատները. բաշիբոզուկների հարբած, գազանացած հորդաները կանցնեն քաղաքները և գյուղերը, վորպեսզի արյունով, կրակով և յերկաթով հարկադրեն ձեզ լռել, նրանք ուժով կխլեն ձեր յերեխաներին, հոգատար թագավորը և նրա կառավարությունը ձեզ կհանձնեն նրանց ի խայտառակություն և անպատվություն։

Պատերազմում պետք է պատերազմական կարգ։ Մի խնայեք, մի խղճաք թշնամուն։ Վնասեք նրան ամենուրեք, վորտեղ կարող եք։ Անխնա, անողոք պիտի լինի ձեր կռիվը։ Պատժիչ ջոկատներին դուք պետք է պատերազմով պատասխանեք։ Յեվ թող այդ պատերազմը գյուղից գյուղ, գավառակից գավառակ, գավառից գավառ նետվելով ամբողջ Ռուսաստանը բռնի աշկարա ապստամբության հրդեհով։

**Այո, համառուսական, համաժողովրդական զինված ապստամբություն:**

Ամբողջ քաղցած իրավազուրկ Ռուսաստանը, վոր հանձնված է ռազմական որենքների և դատարանների իշխանության, ամբողջ Ռուսաստանը, վոր հայտարարված է ռազմական դրության մեջ, արտա-

կարգ և սաստիկ պահպանության դրության մեջ,—չի հանգստանա, չի ընդհատի պատերազմը, մինչև վոր վոչնչացնի ցարական ինքնակալ կառավարությունը:

Ժողովուրդը դեռ հույս ուներ Դումայի վրա, բայց Դուման և նրա ցրումը ցույց տվին, վոր նա վոչինչ անել չի կարող, մինչև վոր ժողովուրդն իշխանությունն իր ձեռքը չվերցնի: Մի սպասեք, թե ցարն ինքը իշխանությունը կտա ժողովրդին: Ամուր կպած է նա նրանից, ամուր կպած են նրանից ժողովրդի բոլոր թշնամիները: Պատերազմով, կռվով, ապստամբությամբ, բաց ճակատամարտում կխլի ժողովուրդը այդ իշխանությունը: Ճակատամարտում կնվաճի ժողովուրդը հող և ազատություն ամբողջ Ռուսաստանի համար. յեթե ուզում եք ոգնել ցարին և ժողովրդի թշնամիներին, տվեք նրան ձեր զավակներին և յեղբայրներին. յեթե ուզում եք ոգնել ձեզ—**վոչ մի նորակոչ ցարական ինքնակալ կառավարությանը:**

4. Խոսքը վերաբերում է Վ. Ի. «Пролетарий»-ի № 1-ի հետևյալ հոդվածներին. 1) «Բոյկոտի մասին», 2) «Քաղաքական կրիզիսը և ոպորտյունիստական տակտիկայի տապալումը» և № 8-ի հետևյալներին. 1) «Կադետների հետ բլոկ կնքելու մասին», 2) «Կռիվ կադետությանն անող ս.-դ. դեմ և կուսակցական դիսցիպլինա», 3) «Հատուկ կարծիք. մտցրած Ռ. Ս.-Դ. Բ. Կ. I. Համառուսական կոնֆերենցիա» բոլշևիկ. լատիշ և լեհ 14 պատգամավորի անունից:

5. **«Բ. Պ. Խ. Մանիֆեստը Ռուսաստանի ամբողջ բնակչությանը»** (ընդունված Գործ. Կոմ. նիստում 29/XI, խմբագրված 1/XII Գործ. Կոմ., Գյուղացիական Միության և սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչների հանձնաժողովի կողմից).

Կառավարությունը սնանկության շեմքին է: Նա յերկիրը դարձրել է ավերակներ և այն լցրել դիակներով: Տանջված և սովալլուկ գյուղացիները իվիճակի չեն հարկեր վճարել: Կառավարությունը ժողովրդական փողերով վարկ է բաց արել կալվածատերերին: Այժմ նա չգիտե ինչ անի գրավ դրած կալվածատիրական դաստակերտները: Ֆաբրիկաներն ու գործարաններն անգործ կանգնած են: Աշխատանք չկա: Ընդհանուր առևտրային անշարժություն է: Կառավարությունը ոտարերկրյա փոխառությունների կապիտալով շինում էր յերկաթուղիներ, նավատորմիղ, ամրոցներ, զենքի պաշար էր տեսնում: Ցամաքեցին ոտարերկրյա աղբյուրները, չքացան արքունական պատվերները: Առևտրական, մատակարար (ПОСТАВЩИК), կապալառու, գործարանատեր, վորոնք սովոր եյին արքունի հաշվով հարստանալու, առանց դադումի յեն մնում և փակում են իրենց գրասենյակները և գործարանները: Մեկ սնանկություն հետևում է մյուսին: Բանկերը խորտակվում են: Առևտրային բոլոր պտույտները մինչև վերջին ծայր կրճատված են:



Կառավարության կռիվը հեղափոխության դեմ ստեղծում է անընդհատ հուզումներ:

Վոչ վոք վստահ չե վաղվա որվա համար:

Ոտարերկրյա կապիտալը յետ է գնում արտասահման: Արտասահմանյան բանկերն է հոսում նաև «զուտ ռուսական» կապիտալը: Հարուստները ծախում են իրենց ստացվածքը և փրկություն են գտնում արտասահմանում: Գիշատիչները յերկրից դուրս են փախչում և իրենց հետ տանում ժողովրդական կայքը:

Կառավարությունը վաղուց իվեր պետության բոլոր յեկամուտները ծախսում էր բանակի և նավատորմի վրա: Դպրոցներ չկան: Ճանապարհներն անխնամ են: Չնայած այս բանին, միջոցներ չկան նույնիսկ զինվորների պարենային պահպանման համար: Պատերազմը տանուլ տվինք մասամբ այն պատճառով, վոր բավականաչափ ռազմական պաշարներ չկային: Ամբողջ յերկրում բռնկվում է մուրացիկ և սոված բանակի ապստամբությունը:

Յերկաթուղային տնտեսությունը քայքայված է, բազմաթիվ յերկաթուղիներ ամայացված են կառավարության ձեռքով: Յերկաթուղային տնտեսությունը վերականգնելու համար անհրաժեշտ են հարյուրավոր միլիոններ:

Կառավարությունը կողոպտեց խնայողական գանձարկղները և ավանդները բաժանեց մասնավոր բանկերի և առևտրական ձեռնարկությունների պաշտպանման համար, վորոնք հաճախ բոլորովին փուչ էին (ДУТЫЙ): Մանր ավանդատերի կապիտալով նա բորսայում խաղում է, այն ամենորյա ռիսկի յենթարկելով:

Պետական բանկի վոսկու պահեստը չնչին է համեմատած պետական փոխառությունների պահանջների և առևտրային պտույտների պահանջների հետ: Նա հոդս կցնդի, յեթե բոլոր գործարքների ժամանակ պահանջեն վոսկե դրամով փոխարինում:

Ոգտվելով պետական ֆինանսների անհաշվետվությամբ, կառավարությունն արդեն վաղուց է փոխառություններ անում, վորոնք խիստ գերազանցում են յերկրի վճարողական միջոցներին: Նա նոր փոխառություններով ծածկում է հին տոկոսները:

Կառավարությունը տարեցտարի կազմում է յեկամուտների և ծախքերի կեղծ նախահաշիվ, ընդմին թե մեկը և թե մյուսներն իրականներից ավելի պակաս է ցույց տալիս, կողոպտելով կամայականությամբ, հանում է մնացորդը, ամենամյա պակասորդի փոխարեն: Անվերահսկիչ չինովնիկները կողոպտում են առանց այն էլ ուժասպառ գանձատունը:

Այս ֆինանսական ավերումը կարող է կանգնեցնել միայն Հիմնադիր ժողովը ինքնակալության տապալումից հետո: Նա կզբաղվի պե-

տական ֆինանսների խիստ քննությամբ և կսահմանի պետական յեկամուտների և ծախքերի (բյուջե) մանրամասն, պարզ, ճշգրիտ և ստուգված նախահաշիվ:

Ժողովրդական վերահսկողությունից ունեցած վախը, վերահսկողության, վոր ամբողջ աշխարհի առաջ բաց կանի կառավարության ֆինանսական սնանկությունը, նրան հարկադրում է քաշքշել ժողովրդական ներկայացուցչության գումարումը:

Պետության ֆինանսական սնանկությունը ես ինքնակալությունն է ստեղծել, ինչպես և նրա ռազմական սնանկությունը: Ժողովրդական ներկայացուցչության առաջ կանգնած է միայն մեկ խնդիր՝ ըստ հնարավորին շուտ պարտքերի հաշվեհարդար կատարել:

Պաշտպանելով վողջ գիշատչությունը, կառավարությունը հարկադրում է ժողովրդին նրա դեմ մահվան կռիվ մղել: Այդ կռվում կորչում են և ավերվում հարյուր-հազարավոր քաղաքացիներ, և իրենց հիմքում քանդվում են արտադրությունը, առևտուրը և հաղորդակցության միջոցները:

Մեկ յելք կա— տապալել կառավարությունը, խլել նրանից վերջին ուժերը: Պետք է կտրել նրա գոյության վերջին աղբյուրը՝ ֆինանսական յեկամուտները: Այդ անհրաժեշտ է վոչ միայն յերկրի քաղաքական և տնտեսական ազատագրության, այլև, մասնավորապես, պետության ֆինանսական տնտեսության կարգավորման համար:

Այդ պատճառով մենք վճռում ենք.

Հրաժարվել հետգնման և մյուս բոլոր արքունական վճարումներ մուծելուց: Պահանջել բոլոր գործարքների ժամանակ, աշխատավարձի և ռոճկի վճարման ժամանակ վոսկով վճար, իսկ հինգ ռուբլուց պակաս գումարների ժամանակ—լիակշիռ հնչուն դրամ:

Վերցնել ավանդները փոխատու-խնայողական գանձարկղից և պետական բանկից, պահանջելով բոլոր գումարի վճարումը վոսկով:

Ինքնակալությունը յերբեք չի ոգտվել ժողովրդի վստահությամբ և նրանից լիազորություններ չի ունեցել:

Ներկայումս կառավարությունը սեփական պետության սահմաններում այնպես է տնորինություն անում, ինչպես նվաճած յերկրում:

Այս պատճառով մենք վճռում ենք չթույլատրել պարտքերի վճարումը այն բոլոր փոխառությունների համար, վորոնք ցարական կառավարությունը կնքել է, յերբ պարզ ու աշկարա պատերազմ եր վարում ամբողջ ժողովրդի դեմ:

**Բանվորների Պատգամավորների Խորհուրդ:**

**Համառուսական գյուղացիական Միության Գլխավոր Կոմիտե:**

**Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Կենտրոնական Կոմիտե յեվ Կազմակերպչական Հանձնաժողով:**

**Սոցիալիստ-հեղափոխականների կուսակց. Կենտր. Կոմիտե:**

**Լեհական Սոցիալիստական Կուսակցության Կենտր. Կոմիտե:**

---

# ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆԸ

# ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆԸ.

Յերիտասարդ բարեկամներ և ընկերներ,

Մենք այսօր տոնում ենք տասներկուերորդ տարեդարձն «Արյունոտ կիրակիի», վորն ամենայն իրավամբ նկատվում է իբրև սկիզբ ռուսական հեղափոխության։

Հազարավոր բանվորներ,—և այն էլ վոչ սոցիալ-դեմոկրատ, այլ հավատացյալ, հավատարիմ հպատակ մարդիկ,—քահանա Գապոնի առաջնորդությամբ հավաքվում են քաղաքի բոլոր մասերից մայրաքաղաքի կենտրոնը, Ձմեռային պալատի առաջի հրապարակը, վորպեսզի հանձնեն ցարին իրենց խնդրագիրը։ Բանվորները գնում են սրբի պատկերներով, և նրանց այն ժամանակվա առաջնորդ Գապոնը գրավոր հավատացնում էր ցարին, վոր ինքը յերաշխավորում է նրա անձնական ապահովությունը և խնդրում էր նրան դուրս գալ ժողովրդի առաջ։

Կանչվում են զորքերը։ Ուլաններն ու կազակները սառ զենքով հարձակվում են ամբոխի վրա, կրակում են անզեն բանվորների վրա, վորոնք ծնկաչոք աղերսում են կազակներին, վոր իրենց թողնեն ցարի մոտ գնալու։ Վոստիկանական զեկուցումների տվյալներով այն ժամանակ հազարից ավելի սպանված և յերկու հազարից ավելի վիրավոր կար։ Բանվորների վրդովմունքն աննկարագրելի յեր։

Ահա 1905 թ. հունվարի 22-ի—«Արյունոտ կիրակիի» ամենաընդհանուր պատկերը։

Վորպեսզի ձեզ համար ավելի հասկանալի դարձնեմ այդ դեպքի նշանակությունը, կկարդամ բանվորների խնդրագրից միքանի կտոր։ Խնդրագիրն սկսվում է հետևյալ ձևով.

«Մենք, բանվորներս, Պետերբուրգի բնակիչներս յեկել ենք քեզ մոտ։ Մենք դժբախտ, անարգված ստրուկներ ենք, մենք ճնշված ենք բռնակալությունից և կամայականությունից։ Յերբ համբերության բաժակը լցվեց, մենք դադարեցրինք աշխատանքը և խնդրեցինք մեր գործատերերին տալ մեզ գոնե միայն այն, առանց վորի կյանքը տանջանք է հանդիսանում։ Բայց այդ բոլորը մերժվեց. գործարանատերերին ամեն ինչ ապորինի յեր թվում։ Մենք այստեղ, հազար հազարներս, ինչպես և ամբողջ ռուս ժողովուրդը, վոչ մի մարդկային իրավունք չունենք։ Քո աստիճանավորների շնորհիվ մենք ստրուկ ենք դարձել»։

Խնդրագիրը թվում է հետևյալ պահանջները.—ամնիստիա, հասարակական ազատություններ, նորմալ աշխատավարձ, հողի աստիճանաբար հանձնում ժողովրդին, Հիմնադիր Ժողովի գումարում ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, և վերջանում է այս բառերով.

«Թագավո՛ր: Մի մերժի՛ր ոգնել քո ժողովրդին: Խորտակի՛ր քո և քո ժողովրդի միջև պատը: Հրամայի՛ր և յերդվի՛ր, վորպեսզի կատարվեն մեր խնդիրները, և դու կերջանկացնես Ռուսաստանը, յեթե վոչ մենք պատրաստ ենք մեռնելու հենց այստեղ: Մեզ մնում է յերկու ճանապարհ՝ ազատություն և յերջանկություն կամ գերեզման»:

Տարորինակ տպավորություն ես ստանում, յերբ **այժմ** կարդում ես նահապետական քահանայից առաջնորդված անկիրթ և անգրագետ բանվորների այս խնդրագիրը: Ակամա զուգահեռ անցկացնելու ցանկություն է առաջ գալիս այս միամիտ խնդրագրի և ժամանակակից սոցիալ-պացիֆիստների (խաղաղասերների) խաղաղ բանաձևերի միջև, այսինքն այն մարդկանց, վորոնք ցանկանում են սոցիալիստ լինել, բայց գործով հանդիսանում են միայն բուրժուական ֆրազյորներ: Հակահեղափոխական Ռուսաստանի անգիտակից բանվորները չգիտեյին, վոր ցարն **իշխող դասակարգի** գլուխն է, այսինքն խոշոր հողատերերի դասակարգի, վորոնք արդեն հազարավոր թելերով կապված են խոշոր բուրժուազիայի հետ և պատրաստ են բռնության բոլոր միջոցներով պաշտպանելու իրենց մենաշնորհը, արտոնությունները և շահերը: Ժամանակակից սոցիալ-պացիֆիստները, վորոնք,—կատակը մի կողմ,—ցանկանում են «մեծ կրթությամբ» մարդիկ յերևալ, չգիտեն, վոր իմպերիալիստական գիշատիչ պատերազմը վարող բուրժուական կառավարություններից «դեմոկրատական» հաշտություն սպասելը նույնքան հիմարություն է, վորքան հիմարություն է այն միտքը, վոր իբր կարելի յե խնդրագրերով արյունոտ ցարին դրդել ռեֆորմներ մտցնելու:

Բայց այդ բոլորի հետ միասին նրանց միջև յեղած խոշոր տարբերությունն այն է, վոր ժամանակակից սոցիալ-պացիֆիստները մեծ մասամբ կեղծավորներ են, վորոնք հեզ ներշնչումներով ձգտում են ժողովրդին հեռու պահել հեղափոխական կռվից, մինչդեռ նախահեղափոխական Ռուսաստանի անկիրթ ռուս բանվորները գործով ապացուցեցին, վոր իրենք շիտակ մարդիկ են, վոր նոր միայն արթնացել են քաղաքական գիտակցության:

Յեվ ահա ժողովրդական հսկայական մասսաների քաղաքական գիտակցության ու հեղափոխական կռվի համար այդ արթնանալու մեջն է հենց 1905 թ. հունվարի 22-ի պատմական նշանակությունը:

«Ռուսաստանում դեռևս հեղափոխական ժողովուրդ չկա»,—այս-



պես եր գրում «Արյունոտ կիրակիից» յերկու որ առաջ պարոն Պյոտր Ստրուվեն, ռուս լիբերալների այն ժամանակվա առաջնորդը, վորն այն ժամանակ հրատարակում եր մի անլեգալ ազատ, արտասահմանյան որգան: Այնպիսի աբսուրդ եր թվում բուրժուական ռեֆորմիստների այդ «բարձրակիրթ», միամիտ և խիստ-հիմար առաջնորդին այն իդեան, վոր անգրագետ գյուղացիական յերկիրը կարող է հեղափոխական ժողովուրդ ծնել: Ինչպես խորն եր այն ժամանակվա,—այնպես, ինչպես և այժմյան,—ռեֆորմիստների համոզմունքը իսկական հեղափոխության անկարելիության մասին:

Մինչև 1905 թ. հունվարի 22-ը (հին տոմարով 9-ը) Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունը կազմված եր մի բուռն մարդկանցից—այն ժամանակվա ռեֆորմիստները (կես առ կես՝ ինչպես այժմյանները), ծաղրելով, մեզ «աղանդ» եյին անվանում: Միքանի հարյուր կազմակերպիչ, տեղական կազմակերպությունների միքանի հազար անդամ, կես դյուժին ամիսը վոչ-հաճախ քան մեկ անգամ լույս տեսնող հեղափոխական թերթիկներ, վորոնք գլխավորապես հրատարակվում եյին արտասահմանում մաքսանենգությամբ, անհավատալի դժվարություններով և շատ զոհերի գնով ուղարկվում եյին Ռուսաստան,—այսպես եյին մինչև 1905 թ. հունվարի 22-ը հեղափոխական կուսակցությունները Ռուսաստանում և առաջին հերթին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան: Այդ հանգամանքը ձևականապես սահմանափակ և գոռոզ ռեֆորմիստներին իրավունք եր տալիս պնդելու, վոր Ռուսաստանում դեռևս հեղափոխական ժողովուրդ չկա:

Սակայն միքանի ամսվա ընթացքում պատկերը բոլորովին փոխվեց: Հարյուրավոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատները «հանկարծակի» աճեցին դարձան հազարավոր, հազարավորները յերկուսից մինչև յերեք միլիոն պրոլետարների առաջնորդ դարձան: Պրոլետարական կռիվը մեծ խմորում, մասամբ և հեղափոխական շարժում առաջ բերեց հիսունից—հարյուր միլիոնանոց գյուղացիական մասսայի խորքերում, գյուղացիական շարժումն արձագանք գտավ բանակում և զինվորների ապստամբության հասցրեց, բանակի մեկ մասի զինված ընդհարման մյուսի հետ: Այդպիսով հսկայական յերկիրն իր 130 միլիոն բնակչով մտավ հեղափոխության մեջ, այդպիսով նիրհող Ռուսաստանը վերափոխվեց հեղափոխական պրոլետարիատի և հեղափոխական ժողովրդի Ռուսաստանի:

Անհրաժեշտ է ուսումնասիրել այդ անցումը, հասկանալ նրա հնարավորությունը, նրա, այսպես ասած, մեթոդները և ուղիները:

Այդ անցման ամենագլխավոր միջոցը **մասսայական գործադուլն**
առանձնահատկությունը հենց այն ե-
եր: Ռուսական հեղափոխության բովանդակությամբ **բուրժուա-դեմոկրատա**,
վոր նա իր սոցիալական

կան էր, իսկ կռվի միջոցներով՝ **պրոլետարական**: Նա բուրժուա-դեմո-
կրատական էր, որովհետև այն նպատակը, որին նա անմիջապես
ձգտում էր և որին նա կարող էր անմիջապես հասնել իր սեփական
ուժերով, դեմոկրատական հանրապետությունն էր, 8-ժամյա բանվորա-
կան օրը, հսկայական խոշոր ազնվական հողատիրության կոնֆիսկա-
ցիան էր,—այն բոլոր միջոցները, որոնք համարյա լիակատար ծա-
վալով իրագործել է բուրժուական հեղափոխությունը Ֆրանսիայում
1792 և 1793 թ. թ.:

Ռուսական հեղափոխությունը դրա հետ միասին նաև պրոլետա-
րական էր, ոչ միայն այն մտքով, որ պրոլետարիատը շարժման ղե-
կավար ուժը, ավանգարդն էր, այլև այն մտքով, որ կռվի հատուկ
պրոլետարական միջոցը, այսինքն գործադուլը էր մի միջոց, մասսա-
ներին թափահարելու գլխավոր միջոցը և վճռական դեպքերի ալիքաձև
աճման ամենաբնորոշ յերևույթը:

Ռուսական հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ
հանդիսանում է առաջինը, բայց նա, անկասկած, չի լինի վերջին մեծ
հեղափոխությունը, որի մեջ մասսայական քաղաքական գործա-
դուլն անսովոր մեծ դեր է խաղացել: Կարելի յե նույնիսկ պնդել, որ
չի կարելի հասկանալ ռուսական հեղափոխության դեպքերը և նրա քա-
ղաքական ձևերի փոփոխումը, յեթե չուսումնասիրվեն **գործադուլների
վիճակագրությամբ** այդ դեպքերի **հիմքերը** և այդ ձևերի փոփո-
խումը:

Յես շատ լավ գիտեմ, թե որքան անհարմար են բանավոր դե-
կուցման ժամանակ չոր վիճակագրական թվերը, թե որքան նրանք
ընդունակ են խրտնեցնել ունկնդրին: Բայց, այնուամենայնիվ, չեմ կա-
րող միքանի կլորացրած թվեր չբերել, որպեսզի դուք հնարավորու-
թյուն ունենաք գնահատելու ամբողջ շարժման իրական օբյեկտիվ հիմքը:
Մինչև հեղափոխություն 10 տարվա ընթացքում Ռուսաստանի գործա-
դուլավորների տարեկան միջին թիվը հավասար էր 43 հազարի: Հե-
տևաբար, մինչև հեղափոխություն ամբողջ տասնամյակի գործադուլա-
վորների ընդհանուր քանակը 430 հազար էր: 1905 թ. հունվարին,
հեղափոխության առաջին ամսին, գործադուլների թիվը 440 հազարի
հասավ: Նշանակում է, միայն **մեկ** ամսում **ավելի**, քան նախորդ ամ-
բողջ տասնամյակում:

Աշխարհի ոչ մի կապիտալիստական յերկրում, նույնիսկ ամենա-
առաջավոր յերկրներում, ինչպես Անգլիայում, Ամերիկայի Միացյալ
Նահանգներում, Գերմանիայում, աշխարհը չի տեսել այնպիսի հոյակապ
գործադուլային շարժում, ինչպես Ռուսաստանի 1905 թվականինն էր:
Գործադուլների ընդհանուր քանակը հավասար էր 2 միլիոն 800 հա-
զարի, գործարանային բանվորների ընդհանուր թվից յերկու անգամ



որ Ռուսաստանի քաղաքային
ավելի: Այս, իհարկե, չի ապացուցում, կամ ավելի ուժեղ եյին
գործարանային բանվորներն ավելի կրթված կամ ավելի ուժեղ եյին
Արևմտյան Յեվրոպայի իրենց յեղբայրներից: Ճիշտը հենց հակառակն է:
Բայց այդ ցույց է տալիս, թե ինչքան մեծ կարող է լինել պրո-
լետարիատի նիրհող յեռանդը: Այդ ասում է այն, որ հեղափոխական
դարաշրջանում,—յես այս պնդում եմ առանց որևէ չափազանցության,
ռուսական պատմության ամենաճշգրիտ տվյալների հիման վրա,—պրո-
լետարիատը **կարող է հարյուր անգամ ավելի** կռվի մեծ յեռանդ զար-
գացնել, քան սովորական խաղաղ ժամանակ: Այդ ասում է այն, որ
մարդկությունը մինչև 1905 թ. դեռ չգիտեր, թե ինչքան մեծ, ինչքան
հոյակապ կարող է լինել և կլինի պրոլետարիատի ուժերի լարումը,
յեթե գործը վերաբերում է նրան, որ պետք է կռվել իրոք մեծ նպա-
տակի համար, պետք է կռվել իրոք հեղափոխականորեն:
Ռուսական հեղափոխության պատմությունը մեզ ցույց է տալիս,
որ հենց ավանգարդը, վարձու զինվորների ընտիր տարրերն եյին
մեծագույն համառությամբ և մեծագույն ինքնազոհությամբ կռիվ
մղում: Ինչքան ավելի եյին գործարանները, այնքան ավելի գործադու-
ները համառ ընթացք եյին ընդունում, այնքան ավելի հաճախ եյին
կրկնվում նրանք միևնույն տարվա ընթացքում: Ինչքան ավելի մեծ
էր քաղաքը, այնքան ավելի նշանակալի յեր կռվի մեջ պրոլետարիատի
դերը: Յերեք խոշոր քաղաքները, որտեղ ապրում են ամենագիտակից
և ամենաբազմաթիվ բանվորները—Պետերբուրգը, Ռիգան և Վարշա-
վան—բանվորների ընդհանուր թվի համեմատությամբ գործադուլա-
վորների անհամեմատ ավելի մեծ քանակ են տալիս, քան բոլոր մյուս
քաղաքները, էլ չենք խոսում գյուղի մասին:
Մետալագործները Ռուսաստանում,—հավանականաբար այնպես,
ինչպես մյուս կապիտալիստական յերկրներում,—հանդիսանում են
պրոլետարիատի առաջավոր վաշտը: Յեվ այդտեղ մենք նկատում ենք
հետևյալ ուսանելի փաստը. Ռուսաստանի գործարանային բանվորների
յուրաքանչյուր հարյուրյակը 1905 թ. ընդհանրապես տալիս էր 160
գործադուլ: Մինչդեռ միևնույն թվին **մետալագործների** յուրաքանչյուր
հարյուրյակը տվեց 320 գործադուլ: Ըստ կատարած հաշիվների, 1905 թ.
յուրաքանչյուր ռուսական գործարանային բանվոր գործադուլի հետե-
վանքով կորցնում էր միջին հաշվով 10 ռուբլի,—մոտ 26 ֆրանկ ըստ
նախապատերազմական կուրսի,—այսպես ասած զոհաբերում էր այն
կռվի համար: Իսկ յեթե վերցնենք սոսկ միայն մետալագործներին,
կստանանք **յերեք անգամ ավելի մեծ** գումար: Առաջից գնում եյին
բանվոր դասակարգի ամենալավ տարրերը, իրենց յետևից գրավելով
տատանվողներին, արթնացնելով քնածներին և խրախուսելով թույլե-
րին:

Բացառակի յուրահատուկ էր հեղափոխության ժամանակ տնտեսական և քաղաքական գործադուլների իրար հյուսվելը։

Կասկածից դուրս է, վոր միայն գործադուլի այս յերկու ձևերի սերտ կապն էր յերաշխիք ծառայում շարժման մեծ ուժին։ Շահագործվողների լայն մասսաներին վոչ մի կերպ չէր կարելի գրավել հեղափոխական շարժման մեջ, յեթե այդ մասսաները չտեսնեյին իրենց առաջ որինակներ, ինչպես արդյունաբերության զանազան ճյուղերի վարձու բանվորները հարկադրում եյին կապիտալիստներին իրենց դրությունն անհապաղ բարելավել։ Այդ կռվի շնորհիվ նոր վոգին թափանցեց ռուս ժողովրդի վողջ մասսայի մեջ։ Միայն այժմ ճորտատիրական, արջային, նահապետական, բարեպաշտ և հնազանդ Ռուսաստանը թոթափեց հին Ադամի փոշին. միայն այժմ ռուս ժողովուրդն ստացավ իսկական դեմոկրատական, իսկական հեղափոխական դաստիարակություն։

Ցեթե բուրժուական պարոնները և քննադատական ունակությունից զուրկ նրանց ձայնակիցները, սոցիալիստական ռեֆորմիստները, այնպիսի պարծենկոտությամբ խոսում են մասսաների «դաստիարակության մասին», նրանք սովորաբար դաստիարակության տակ հասկանում են ինչ-վոր դպրոցական, բծախնդրական բան, վոր բարոյալքում է մասսաներին, պատվաստում նրանց բուրժուական նախապաշարմունքներ։

Մասսաների իրական դաստիարակությունը յերբեք չի կարելի բաժանել հենց մասսայի ինքնուրույն քաղաքական և հատկապես հեղափոխական կռվից։ Միայն կռիվն է դաստիարակում շահագործվող դասակարգին, միայն կռիվն է բաց անում նրա առաջ իր ուժերի չափը, լայնացնում նրա հորիզոնը, բարձրացնում նրա ընդունակությունները, պայծառացնում նրա միտքը, կռում նրա կամքը։ Ցեվ այս պատճառով նույնիսկ հետադիմականներն ստիպված եյին խոստովանել, վոր 1905 թ., կռվի տարին, «խելագար տարին» վերջնականապես գերեզման դրեց նահապետական Ռուսաստանը։

Մոտիկից դիտենք 1905 թ. գործադուլային կռվի ժամանակ Ռուսաստանի մետալագործների և ջուլհակների փոխհարաբերությունը։ Մետալագործները լավագույն վարձատրվող, ամենագիտակից, ամենակուլտուրական պրոլետարներն եյին։ Մանվածային բանվորները, վորոնց քանակը Ռուսաստանում 1905 թ. ավելի քան յերկու և կես անգամ գերազանցում էր մետալագործների քանակին, ամենահետամնաց, ամենքից ավելի վատ վարձատրվող մասսան են հանդիսանում, վոր հաճախ դեռևս վերջնականապես իր կապերը չէր կտրել գյուղի իր գյուղական ազգականներից։ Ցեվ այստեղ մենք մեր առաջ ունենք հետևյալ շատ կարևոր հանգամանքը։

Մետալագործների գործադուլների մեջ ամբողջ 1905 թ. ընթաց-



քում գերակշռում են քաղաքական գործադուլները հանդեպ տնտեսականի, չնայած տարվա սկզբին այդ գերակշռությունը դեռ այնքան էլ մեծ չէ, ինչքան տարվա վերջին։ Ընդհակառակը, ջուլհակների մոտ մենք նկատում ենք 1905 թ. սկզբին տնտեսական գործադուլների հսկայական գերակշռություն, վոր միայն տարվա վերջին է փոխվում քաղաքական գործադուլների գերակշռումով։ Այստեղից լիակատար պարզությամբ բղխում է, վոր միայն տնտեսական կռիվը, միայն իր դրության անհապաղ, անմիջական լավացման կռիվն է ընդունակ թափահարելու շահագործվող մասսայի հետամնաց շերտերին, նրանց իսկական դաստիարակություն տալիս և հեղափոխական դարաշրջանում մի-քանի ամսվա ընթացքում դարձնում նրանց հեղափոխական մարտիկների բանակ։ Իհարկե, դրա համար անհրաժեշտ էր, վորպեսզի բանվորների առաջավոր վաշտը դասակարգային կռվի տակ չհասկանար կռիվ հանուն փոքրիկ վերին շերտի շահերի, ինչպես այդ չափազանց հաճախ աշխատում եյին ներշնչել բանվորներին ռեֆորմիստները, այլ վորպեսզի պրոլետարները հանդես գային իրոք իբրև ավանգարդ շահագործվողների մեծամասնության, կռվի մեջ քաշեյին այդ մեծամասնությունը, ինչպես այդ տեղի ունեցավ 1905 թ. Ռուսաստանում և ինչպես այդ պետք է տեղի ունենա ու, անկասկած, տեղի կունենա Յեվրոպայի ապագա պրոլետարական հեղափոխության ընթացքում։

1905 թ. սկիզբը վողջ յերկրում բերեց գործադուլային շարժման մեծ ալիքը։ Արդեն այդ տարվա գարնանը մենք նկատում ենք Ռուսաստանի գյուղացիական շարժման առաջին խոշոր, վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական արթնացումը։ Թե ինչքան կարևոր նշանակություն ունի պատմության ուղեպտույտի համար այդ փաստը, կարող է հասկանալ միայն նա, ով կհիշե, վոր Ռուսաստանում գյուղացիությունը միայն 1861 թ. է ազատագրվել ամենածանր ճորտատիրական կախումից, վոր գյուղացիները մեծ մասամբ անգրագետ են, ապրում են աննկարագրելի կարիքի մեջ, ճնշված են կալվածատերերից, բթացած տերտերներից, իրարից առանձնացած հսկայական տարածություններով և համարյա զուրկ հաղորդակցության ճանապարհներից։

1825 թ. Ռուսաստանն առաջին անգամ հեղափոխական շարժում տեսավ ցարիզմի դեմ, և այդ շարժումը համարյա բացառապես ազնվականների գործ էր։ Այդ ժամանակից ու մինչև 1881 թ., յերբ տերրորիստներն սպանեցին Ալեքսանդր II-ին, շարժման գլուխ եյին կանգնած միջին դասից յելած ինտելլիգենտները։ Նրանք մեծագույն ինքնազոհություն ցուցահանեցին և իրենց հերոսական տերրորիստական կռվի մեթոդով ամբողջ աշխարհին զարմանք պատճառեցին։ Անկասկած այդ զոհերն իզուր չընկան, անկասկած նրանք—ուղղակի կամ անուղղակի—նպաստեցին ռուս ժողովրդի հետագա հեղափոխական դաստիարակությանը։

Բայց իրենց անմիջական նպատակին, ժողովրդական հեղափոխության արթնացմանը, նրանք չհասան ու չէյին կարող հասնել։

Այդ միայն հաջողվեց պրոլետարիատի հեղափոխական կռվին։ Միայն ռուս-յապոնական իմպերիալիստական պատերազմի դաժան դասերի հետ կապված, ամբողջ յերկրում ծավալվող մասսայական գործադուլային ալիքները լեթարգիական քնից արթնացրին գյուղացիական լայն մասսաներին։ «Գործադուլ» բառը գյուղացիների մոտ նոր նշանակություն ստացավ. նա նշանակում եր ապստամբի, հեղափոխականի նման ինչ-վոր բան, ինչ վոր առաջներում «ուսանող» բառով եր արտահայտվում։ Բայց այնքան, ինչքան «ուսանողը» միջին դասին եր պատկանում, «գիտուններին», «պարոններին» դասին, նա խորթ եր ժողովրդին։ Ընդհակառակ, «գործադուլն» ինքը դուրս եր յեկել ժողովրդից, ինքն էլ պատկանում եր շահագործվողների թվին. Պետերբուրգից աքսորվելով, նա հաճախ գյուղ եր վերադառնում և պատմում եր իր գյուղական ընկերներին այն հրդեհի մասին, վոր բռնում եր քաղաքները և պիտի վոչնչացներ ինչպես կապիտալիստներին, այնպես էլ ազնվականներին։ Ռուս գյուղում յերևան յեկավ նոր տիպ—յերիտասարդ գիտակից գյուղացին։ Նա շփվում եր «գործադուլների» հետ, նա կարդում եր թերթեր, նա պատմում եր գյուղացիներին քաղաքի դեպքերի մասին. նա բացատրում եր իր գյուղական ընկերներին քաղաքական պահանջների նշանակությունը, նա կոչ եր անում նրանց կռվելու խոշոր հողատեր-ազնվականների դեմ, տերտերների և ատիճանավորների դեմ։

Գյուղացիները խումբ-խումբ հավաքվում էյին, քննության էյին առնում իրենց դրությունը և հետզհետե կռվի մեջ էյին մտնում. մեծ խմբերով նրանք գնում էյին խոշոր հողատերերի դեմ, այրում էյին նրանց պալատներն ու տները կամ խլում էյին նրանց պաշարները, գրավում հացը և մյուս կենսամթերքները, հալածում էյին վոստիկաններին, պահանջում էյին ժողովրդին հանձնել ազնվականների հսկայական կալվածքների հողը։

1905 թ. գարնանը գյուղացիական շարժումը դեռ միայն սաղմում եր՝ նա բռնկել եր միայն փոքրաթիվ գավառներում, մոտավորապես նրանց մեկ յոթերորդ մասում։

Բայց քաղաքի պրոլետարական մասսայական գործադուլի միացումը գյուղի գյուղացիական շարժման հետ, բավական եր ցարիզմի ամենից «հաստատուն» և վերջին հենարանը տատանելու համար։ Յես նկատի ունեմ զորքը։ Սկսվում է նավատորմիղի և բանակի զինվորական ապստամբությունների շարանը։ Գործադուլային և գյուղացիական շարժման ալիքի ամեն մի բարձրացում հեղափոխության ժամանակ զուգորդվում է զինվորների ապստամբություններով Ռուսաստանի բոլոր ծայրերում։ Նրանցից ամենահայտնին սև-ծովյան «Իշխան Պատյոմկին»



զրահակրի ապստամբությունն է. այդ զրահակիրն ապստամբների ձեռքն ընկնելով մասնակցեց Օդեսայի հեղափոխությանը և հեղափոխության ընկնելով մասնակցեց Օդեսայի հեղափոխությանը և հեղափոխության պարտությունից ու ուրիշ նավահանգիստների գրավման (օրինակ՝ Ղրիմում Թեոդոսիայի) անհաջող փորձերից հետո Կոնստանցում անձ-
նատուր յեղավ ռումինական իշխանության ձեռքը։

Թույլ տվեք մանրամասն պատմել ձեզ սև-ծովյան նավատորմիղի այդ ապստամբությունից մի փոքրիկ միջադեպ, վորպեսզի դուք դեպքերի մասին կոնկրետ պատկերացում ստանաք նրանց զարգացման բարձրագույն կետում։

Հեղափոխական բանվորների և նավաստիների ժողովներ էյին կազմվում. ժողովները շարունակ ավելի ու ավելի բազմանում էյին։ Վորովհետև զինվորականներին չէյին թողնում բանվորական միտինգներ գնալ, բանվորական մասսաներն սկսեցին հաճախել զինվորական միտինգները։ Հավաքվում էյին հազարներով։ Միատեղ յելույթի իդեան կենդանի արձագանք գտավ։ Ավելի գիտակից գնդերում ընտրվում էյին պատգամավորներ։

Այն ժամանակ զինվորական իշխանությունը վորոշեց միջոցներ ձեռք առնել։ Առանձին սպաների միտինգներում «հայրենասիրական» ճառեր արտասանելու փորձերն ամենավողբալի արդյունքներ տվին.— դիսկուսիայի սովորած նավաստիներն իրենց մեծավորներին խայտառակ փախուստի էյին մատնում։ Այդպիսի անհաջողությունների պատճառով վճռվեց ընդհանրապես արգելել միտինգները։ 1905 թ. նոյեմբերի 24-ի առավոտյան նավատորմիղի զորանոցների դարպասների մոտ կանգնած եր լիակատար սպառազինությամբ մի ռազմագունդ։ Կոնտր-ադմիրալ Պիսարևսկին ի լուր ամենքի հրաման տվեց. «Զորանոցներից վոչ վոքի դուրս չթողնել։ Չհնազանդվելու դեպքում կրակել»։ Այն գնդից, վորին տրվեց այս հրամանը, դուրս յեկավ նավաստի Պետրովը, բոլորի աչքի առաջ լցրեց իր հրացանը և մի զարկով սպանեց Բրեստ-Լիտովսկի գնդի փոխ-գնդապետ Շտայնին, իսկ յերկրորդ զարկով վիրավորեց կոնտր-ադմիրալ Պիսարևսկուն։ Լսվեց սպայի հրամանը. «Ձերբակալեցեք դրան»։ Վոչ վոք տեղից չշարժվեց։ Պետրովն իր հրացանը գետին գցեց։ «Ի՞նչ եք կանգնել։ Բռնեցեք ինձ»։ Նա ձերբակալվեց։ Ամեն կողմից հավաքվող նավաստիները հուզված պահանջում էյին նրան ազատել, հայտարարելով, վոր իրենք նրա համար յերաշխավորում են։ Հուզմունքը գագաթնակետին հասավ։

— Պետրով, ճիշտ է, չէ՞, վոր հրացանը պատահաբար տրաքվեց,—
հարցրեց սպան, վորպեսզի յելք գտնի ստեղծված դրությունից։

— Ինչո՞ւ պատահաբար։ Յես առաջ յեկա, լցրի հրացանս և նշանբռնեցի, միթե սա պատահաբար է։

— Նրանք պահանջում են քեզ ազատել...

Յեվ Պետրովն ազատվեց։ Բայց նավաստիները սրանով չբավականացան. բոլոր հերթապահ սպաները ձերբակալվեցին, զինաթափվեցին և գրասենյակ տարվեցին... Նավաստիների պատգամավորները» թվով մոտ 40 մարդ, ամբողջ գիշեր խորհրդակցում էին։ Վճռեցին սպաներին ազատել և նրանց այլևս զորանոցները չթողնել։

Այս փոքրիկ տեսարանը շոշափելի կերպով ցույց է տալիս ձեզ, թե ինչպես էին կատարվում դեպքերը զինվորական ապստամբությունների մեծ մասի ժամանակ։ Ժողովրդի հեղափոխական խմորումը չէր կարող չբռնել նաև զորքին։ Բնորոշ է, վոր շարժման ղեկավարները դուրս էին գալիս այն տարրերից, վորոնք զինվորագրվում էին գլխավորապես արդյունաբերական բանվորների միջից, և վորոնց համար պահանջվում էր ամենամեծ տեխնիկական նախապատրաստություն, որինակ՝ սապյորները։ Բայց լայն մասսաները դեռ չափազանց միամիտ, չափազանց խաղաղ, բարեհոգի, չափազանց քրիստոնեյաբար էին տրամադրված։ Նրանք բավական հեշտ բռնկվում էին. վորևէ անարդարության դեպք, սպաների չափազանց կոպիտ վերաբերմունք, վատ սնունդ և այլն,—կարող էր վրդովմունք առաջ բերել։ Բայց պակասում էր տոկունություն, բացակայում էր անելիքի պարզ գիտակցություն, պակասում էր բավականաչափ ըմբռնումն այն բանի, վոր հեղափոխության հաջողության միակ յերաշխիք է զինված կռվի ամենայեռանդուն շարունակումը, միայն բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանությունների վրա հաղթանակելը, միայն կառավարության տապալումն ու ամբողջ պետության մեջ իշխանության նվաճումը։

Նավաստիների և զինվորների լայն մասսաները հեշտ էին սկսում ապստամբել։ Բայց նաև հեշտությամբ անում էին այն հիմար միամիտ քայլը, վոր ազատում էին ձերբակալված սպաներին. նրանք թույլ էին տալիս, վոր իրենց հանգստացնեն խոստումներով և իշխանավորների հորդորներով. այդպիսով մեծավորները շահում էին թանկագին ժամանակը, օգնություն էին ստանում, բաժանում ապստամբների ուժը, և ապա հետևում էր ամենադաժան ճնշումը և առաջնորդների մահապատիժները։ Հետաքրքիր է համեմատել Ռուսաստանի 1905 թ. զինվորական ապստամբությունները 1825 թ. դեկաբրիստների զինվորական ապստամբության հետ։ Այն ժամանակ քաղաքական շարժման ղեկավարությունը պատկանում էր համարյա բացառապես սպաներին, հատկապես ազնվական-սպաներին. Նապոլեոնյան պատերազմի ժամանակ շփվելով Յեվրոպայի հետ՝ նրանք վարակվել էին դեմոկրատական գաղափարներով։ Զինվորների մասսան, վոր կազմված էր այն ժամանակ դեռ ճորտ գյուղացիներից, իրեն պասիվ էր պահում։

1905 թ. պատմությունը մեզ բոլորովին հակառակ պատկեր է տալիս։ Սպաները, չնչին բացառությամբ, այն ժամանակ բուրժուա-լիբե-



րալ, ռեֆորմիստական տրամադրություն ունեյին կամ թե չէ ուղղակի հակահեղափոխական էին։ Զինվորական տարազով բանվորներն ու գյուղացիներն ապստամբության հոգին էին. շարժումը ժողովրդական էր դարձել։ Առաջին անգամ Ռուսաստանի պատմության մեջ նա ընդգրկել էր շահագործվողների մեծամասնությունը։ Ի՞նչ էր նրան պակասում.—մասսաների տոկունություն, վճռականություն. Նրանք դյուրահավատության հիվանդությամբ չափազանց տառապում էին, մյուս կողմից զինվորական համազգեստով բանվորներին պակասում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն. Նրանք հմտություն չունեյին հեղափոխական զորքի գլուխ անցնել և հարձակման դիմել կառավարական իշխանության դեմ։

Տեղին է ասել,—գուցե ավելի դանդաղ, քան մեզ համար ցանկալի յեր, սակայն հաստատուն կերպով,—վոր այդ յերկու պակասությունը կոչնչանան վոչ միայն կապիտալիզմի ընդհանուր զարգացմամբ, այլև այժմյան պատերազմի ազդեցությամբ։

Համենայն դեպս, ռուսական հեղափոխության պատմությունը, ինչպես և 1871 թ. Պարիզի Կոմմունայի պատմությունը մեզ անխախտ դաս են տալիս, վոր միլիտարիզմը յերբեք և վոչ մի դեպքում չի կարելի հաղթել և վոչնչացնել վորևէ այլ յեղանակով, քան միայն ժողովրդական զորքի մեկ մասի հաղթական կռվով նրա մյուս մասի դեմ։ Բավական չէ միայն շանթահարել, անիծել, «ժխտել» միլիտարիզմը, քննադատել և ապացուցել նրա վնասը, հիմարաբար խաղաղ կերպով հրաժարվել զինվորական ծառայությունից.—խնդիրն այն է, վորպեսզի պրոլետարիատի հեղափոխական գիտակցությունը լարման մեջ պահվի և ընդ սմին վոչ միայն ընդհանրապես, այլ կոնկրետ կերպով նրա լավագույն տարրերը պատրաստվեն այն բանի համար, վորպեսզի ժողովրդի խորագույն խմորման մոմենտում նրանք հեղափոխական զորքի գլուխ անցնեն։

Այդ է սովորեցնում մեզ նաև ամեն մի կապիտալիստական պետության ամենօրյա փորձը։ Նման պետության ապրած յուրաքանչյուր «փոքրիկ» կրիզիսը բաց է անում մեր առաջ մինիատյուր կերպով տարրերն ու սաղմերը այն կռիվների, վորոնք մեծ կրիզիսի շրջանում անխուսափելիորեն պետք է կրկնվեն մեծ մասշտաբով։ Յեվ ուրիշ ի՞նչ է, որինակ, վորևէ գործադուլ, քան յեթե կապիտալիստական հասարակության մի փոքրիկ կրիզիս։ Միթե արդար չէ՞ր պրուսական ներքին գործերի մինիստր պ. ֆոն-Պուտտկամերը, յերբ արտասանեց հետևյալ նշանավոր դարձվածքը. «Ամեն մի գործադուլի յետևից յերևում է հեղափոխության հիդրան»։ Բոլոր, նույնիսկ—թող ներվի ասել—ամենախաղաղ, ամենից «դեմոկրատական» կապիտալիստական յերկրներում գործադուլի ժամանակ զինվորներ կանչելն արդյոք ցույց

չի տալիս մեզ, թե բանն **ինչպես** կլինի **իրոք մեծ** կրիզիսների ժամանակ։

Բայց վերադառնում եմ կրկին ռուսական հեղափոխության պատմությանը։

Յես փորձեցի ներկայացնել ձեզ, ինչպես բանվորական գործադուլները ցնցեցին ամբողջ յերկիրը և շահագործվողների ամենալայն հետամնաց շերտերը, ինչպես սկսվեց գյուղացիական շարժումը, ինչպես նա զուգորդվեց զինվորական ապստամբություններով։ 1905 թ. աշնանն ամբողջ շարժումը հասավ իր գագաթնակետին։ Օգոստոսի 19 (6)-ին դուրս յեկավ ցարական մանիֆեստը ժողովրդական ներկայացուցչություն ստեղծելու մասին։ Պիտի կազմվեր այսպես կոչված բուլիգինյան Դուման այնպիսի մի ընտրական օրենքի հիման վրա, վոր յենթադրում եր ընտրողների զարմանալի փոքր քանակ և այդ յուրատեսակ «պարլամենտին» վոչ մի օրենսդրական իրավունք չեր տալիս, այլ միայն **խորհրդակցական** իրավունքներ. բուրժուազիան, լիբերալները, օպպորտյունիստները պատրաստ եյին յերկու ձեռքով բռնել վախեցած թագավորի այդ «նվերը»։ Բոլոր ռեֆորմիստների նման, մեր ռեֆորմիստները 1905 թ. չեյին կարողանում հասկանալ, վոր լինում են պատմական սիտուացիաներ, յերբ ռեֆորմներն ու հատկապես ռեֆորմների խոստումները **բացառապես** մեկ նպատակի յեն հետամուտ—ժողովրդական խմորումը կանգնեցնել, հարկադրել հեղափոխական դասակարգին ընդհատելու կամ գոնե թուլացնելու կռիվը։

Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան լավ հասկացավ այդ գահակալի շնորհի, 1905 թ. օգոստոսի խաբուսիկ սահմանադրության այդ նվիրաբերության իսկական բնույթը։ Յեվ այդ պատճառով նա առանց մի րոպե դանդաղելու, նետեց այս լոզունգը.— Կորչի՛ խորհրդակցական Դուման, բոյկո՛տ Դումային, կորչի՛ ցարական կառավարությունը, հեղափոխական կռվի շարունակում այդ կառավարությունը տապալելու նպատակով, վոչ թե ցարը, այլ ժամանակավոր Հեղափոխական Կառավարությունը պետք է գումարի Ռուսաստանում առաջին իսկական ժողովրդական ներկայացուցչությունը։

Պատմությունն ապացուցեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արդարությունը նրանով, վոր **բուլիգինյան Դուման** յերբեք չգումարվեց։ Նրան սրբեց հեղափոխական փոթորիկը նախ քան նրա գումարումը. այդ փոթորիկը հարկադրեց ցարին նոր ընտրական իրավունք հրատարակել, վորը նշանավոր չափով մեծացրեց ընտրողների քանակը և ճանաչել տվավ Դումայի օրենսդրական բնույթը։ 1905 թ. հոկտեմբերն ու դեկտեմբերը նշում են ռուսական հեղափոխության բարձրացող գծի ամենավերին կետը։ Ժողովրդի հեղափոխական ուժի բոլոր աղբյուրները բացվեցին ել ավելի լայն, քան



առաջ։ Գործաթողների քանակը, վոր, ինչպես արդեն հաղորդեցի ձեզ, 1905 թ. հունվարին կազմում եր 440 հազար, 1905 թ. հոկտեմբերին կես միլիոնից անցնում եր (նկատեցեք, միայն մեկ ամսվա ընթացքում)։ Բայց այդ քանակին, վորն ընդգրկում է **միայն** գործարանային բանվորներին, պետք է ավելացնել միքանի հարյուր հազար յերկաթուղային բանվորներ, պոստ-հեռագրական ծառայողներ և այլն։

Ռուսաստանի ընդհանուր յերկաթուղային գործադուլը կանգնեցրեց յերկաթուղային շարժումը և ամենավճռական կերպով ջլատեց կառավարության ուժը։ Բացվեցին համալսարանների և լսարանների դռները, նրանք, վոր խաղաղ ժամանակ հատկացված եյին բացառապես միայն նրա համար, վորպեսզի շշմեցնեն յերիտասարդ գլուխները պրոֆեսորական, ամբիոնական իմաստությամբ և նրանց դարձնեն բուրժուազիայի և ցարիզմի հնազանդ ծառաներ. այդ համալսարաններն ու լսարաններն այժմ ծառայում եյին իբրև ժողովատեղի հազար-հազարավոր բանվորների, արհեստավորների, ծառայողների համար, վորոնք արձակ ու ազատ քննության եյին առնում քաղաքական հարցերը։

Նվաճվեց մամուլի ազատությունը։ Ցենզուրան պարզապես վերացվեց։ Վոչ մի հրատարակիչ չեր համարձակվում իշխանություններին ներկայացնել պարտադիր օրինակը, իսկ իշխանությունները չեյին համարձակվում դրա դեմ վորևե միջոց ձեռք առնել։ Առաջին անգամ ռուսաց պատմության մեջ Պետերբուրգում և ուրիշ քաղաքներում ազատորեն յերևացին հեղափոխական թերթեր։ Մենակ Պետերբուրգում լույս եյին տեսնում սոցիալ-դեմոկրատական ամենօրյա թերթ 50-ից մինչև 100 հազար օրինակ տիրաժով։

Պրոլետարիատն ընթանում եր շարժման գլուխ անցած։ Նա նպատակ եր դրել՝ նվաճել հեղափոխական յեղանակով 8-ժամյա բանվորական օր։ Այն ժամանակ Պետերբուրգի պրոլետարիատի մարտական լոզունգն եր՝ «**8-ժամյա բանվորական օր յեվ զենք**»։ Բանվորների շարունակ ավելի աճող մասսայի համար ակնհայտ եր դառնում, վոր հեղափոխության բախտը կարող է վճռել և կվճռի միայն զինված կռիվը։

Կռվի կրակում կազմվեց յուրահատուկ մասսայական կազմակերպություն՝ նշանավոր **բանվորների պատգամավորների խորհուրդները**, բոլոր գործարանների պատգամավորների ժողովները։ Ռուսաստանի միքանի քաղաքներում այդ **բանվորների պատգամավորների խորհուրդներն** սկսում եյին ժամանակավոր Հեղափոխական Կառավարության դեր խաղալ, ապստամբությունների օրգանների և ղեկավարների դեր։ Փորձեր արվեցին կազմակերպելու զինվորների և նավաստիների պատգամավորների խորհուրդներ և նրանց միացնելու բանվորների պատգամավորների խորհուրդներին։
ների պատգամավորների խորհուրդներին։

Ռուսաստանի միքանի քաղաքներ այդ որերում ապրեցին զանազան տեղական մանր «հանրապետությունների» շրջան, վորոնց մեջ կառավարական իշխանությունը հեռացվեց, և բանվորների պատգամավորների խորհուրդը գործում եր իբրև նոր պետական իշխանություն։ Դժբախտաբար այդ շրջանները չափազանց կարճ եյին, «հաղթանակները» չափազանց թույլ, չափազանց կղզիացած։

1905 թ. աշնանը գյուղացիական շարժումն արդեն էլ ավելի մեծ չափերի յեր հասել։ Ամբողջ յերկրի գավառների մեկ յերրորդից ավելին այդ ժամանակ բռնված եր «գյուղական անկարգություններով» և իսկական գյուղացիական ապստամբություններով։ Գյուղացիներն այրեցին մինչև անգամ 2 հազար ամարաթներ և իրենց մեջ բաշխեցին այն կենսական միջոցները, վոր ժողովրդից կողոպտել եյին ազնվական գիշատիչները։

Դժբախտաբար այդ աշխատանքը բավականաչափ հիմնական չեր։ Դժբախտաբար գյուղացիներն այն ժամանակ վոչնչացրին ազնվականների ամարաթների ընդհանուր քանակի մեկ տասնհինգերորդ բաժինը միայն, միայն մեկ տասնհինգերորդ մասը նրա, ինչ վոր նրանք **պետք է** վոչնչացնեյին, վորպեսզի մինչև վերջ ջնջեյին ռուս հողի յերեսից ֆեոդալական խոշոր հողատիրության խայտառակությունը։ Դժբախտաբար գյուղացիները չափազանց բաժան-բաժան, անկազմակերպ, վոչ բավականաչափ հարձակողական կերպով եյին գործում. և այս է հեղափոխության պարտության արմատական պատճառներից մեկը։

Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մեջ բռնկվեց ազգային ազատագրական շարժումը։ Ռուսաստանում ազգաբնակության **կեսից ավելին, համարյա յերեք հինգերորդականը** (ճիշտ 57%) յենթարկված է ազգային ճնշման, ազգային ճնշման տակ է, նրանք չեն ոգտվում նույնիսկ մայրենի լեզվի ազատությամբ, նրանց բռնի կերպով ռուսացնում են։ Որինակ՝ մուսուլմանները, վոր կազմում են Ռուսաստանի ազգաբնակության մեջ տասնյակ միլիոններ, ապշեցուցիչ արագությամբ այն ժամանակ կազմակերպեցին—դա ընդհանրապես զանազան կազմակերպությունների հսկայական աճման դարաշրջանն եր—մահմեդական միություն։

Վորպեսզի ժողովին, հատկապես յերիտասարդությանը մի նմուշ տամ, թե այն ժամանակվա Ռուսաստանում ազգային ազատագրական շարժումն ինչպես եր զարգանում բանվորական շարժման ազդեցությամբ, յես ձեզ մի փոքրիկ որինակ կբերեմ։

1905 թ. դեկտեմբերին հարյուրավոր դպրոցներում դպրոցական հասակի լեհ յերեխաներն այրեցին բոլոր ռուսաց գրքերը, նկարները և ցարական պատկերները, ծեծեցին ու դուրս վռնդեցին դպրոցներից ռուս ուսուցիչներին և իրենց ռուս ընկերներին, աղաղակելով՝ «Կորե՛ք,



պընացե՛ք Ռուսաստան»։ Միջնակարգ դպրոցների լեհ աշակերտների պահանջները, իմիջի այլոց, հետևյալներն եյին. 1) բոլոր միջնակարգ դպրոցները պիտի յենթարկվեն բանվորների պատգամավորների խորհրդին, 2) դպրոցական շենքերում աշակերտական և ծնողական միացյալ ժողովների գումարում, 3) թույլտվություն գիմնազիաներում կարմիր բլուզներ հագնել՝ իբրև նշան ապագա պրոլետարական հանրապետությանը պատկանելու։

Ինչքան ավելի եյին բարձրանում շարժման ալիքները, այնքան ավելի մեծ յեռանդով և վճռականությամբ եր զինվում ռեակցիան հեղափոխության դեմ կռվելու համար։ Ռուսաստանի 1905 թ. հեղափոխության ժամանակ արդարացավ այն, ինչ վոր 1902 թ. գրում եր Կ. Կաուցկին իր «Սոցիալական հեղափոխություն» գրքում (նա այն ժամանակ, իդեպս ասած, դեռ հեղափոխական մարքսիստ եր, և վոչ թե սոցիալ-հայրենասերների և ոպորտյունիստների պաշտպան, ինչպես ներկայումս)։ Նա գրում եր հետևյալը—... «Ապագա հեղափոխությունն ավելի քիչ կնմանի կառավարության դեմ հանկարծակի ապստամբության և ավելի կնմանի ձգձգվող **քաղաքացիական պատերազմի**»։

Այդպես էլ յեղավ։ Անկասկած այդ այդպես էլ կլինի յեվրոպական ապագա հեղափոխության ժամանակ։

Ցարիզմի ատելությունն ուղղվեց հատկապես հրեաների դեմ։ Մեկ կողմից, հրեաները տալիս եյին հեղափոխական շարժման առաջնորդների հատկապես բարձր տոկոս (հրեական ազգաբնակության ընդհանուր թվի համեմատությամբ)։ Այժմ էլ հրեաներն ունեն, իդեպս ասած, այն արժանիքը, վոր նրանք, մյուս ժողովուրդների համեմատությամբ, տալիս են ինտերնացիոնալիստական հոսանքի ներկայացուցիչների հարաբերաբար բարձր տոկոս։ Մյուս կողմից, ցարիզմը հիանալի կերպով կարողանում եր ոգտագործել ազգաբնակության ամենատգետ շերտերի ամենազզվելի նախապաշարմունքները հրեաների դեմ, վորպեսզի կազմակերպի ջարդեր, յեթե վոչ անմիջապես ղեկավարի այն,—խաղաղ հրեաների, նրանց կանանց և յերեխաների այդ հրեշավոր կոտորածները, վոր այնպիսի զզվանք առաջ բերին վողջ քաղաքակիրթ աշխարհում։ Յես նկատի ունեմ, իհարկե, քաղաքակիրթ աշխարհի իրոք դեմոկրատական տարրերի զզվանքը, իսկ այդպիսիներն են **բացառապես** սոցիալիստական բանվորները, պրոլետարները։

Արևմտյան Յեվրոպայի նույնիսկ ամենաազատ, նույնիսկ հանրապետական յերկրների բուրժուազիան կարողանում է հիանալի կերպով «ռուսական գազանությունների» մասին իր կեղծավոր ֆրազները կապակցել ամենաանամոթ փողային գործարքների հետ, հատկապես ցարիզմի ֆինանսական աջակցության և կապիտալի արտահանության միջոցով Ռուսաստանի իմպերիալիստական շահագործման հետ, և այլն։

1905 թ. հեղափոխությունն իր գագաթնակետին հասավ Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբության ժամանակ։ Մի բուռն ապստամբներ, հենց կազմակերպված և զինված բանվորներ,—նրանք **ութ հազարից** ավելի չէին,—9 օրվա ընթացքում ընդդիմադրություն էին ցույց տալիս ցարական կառավարությանը, վոր չէր կարողանում վստահել Մոսկվայի կայազորին, այլ, ընդհակառակ, ստիպված էր նրան փակված պահել և, շնորհիվ Պետերբուրգից յեկած Սեմյոնովյան գնդի, իվիճակի յեղավ ճնշել ապստամբությունը։

Բուրժուազիան սիրում է մոսկովյան ապստամբությունը համարել ինչ-վոր արվեստական բան և ծաղրել այն։ Օրինակ՝ գերմանական այսպես կոչված «գիտական» գրականության մեջ պարոն պրոֆեսոր Մաքս Վեբերն իր մեծ աշխատության մեջ Ռուսաստանի քաղաքական զարգացման մասին, Մոսկվայի ապստամբությունը անվանել է «պուտշ» («բռնկումների խաղ»)։ «Լենինյան խմբակը,—ասում է այս «մեծագետ» պարոն պրոֆեսորը,—և եսերների մի մասը վաղուց արդեն նախապատրաստում էր այդ **անմիտ** ապստամբությունը»։

Վորպեսզի ըստ արժանույն գնահատենք յերկչոտ բուրժուազիայի այս պրոֆեսորական իմաստությունը, բավական է միայն վերանորոգել հիշողության մեջ գործադուլների վիճակագրության չոր թվերը։ 1905 թ. հունվարին Ռուսաստանում կար միայն 13 հազար զուտ քաղաքական գործադուլ, հոկտեմբերին՝ 330 հազար, **դեկտեմբերին մաքսիմումի հասավ**, այսինքն 370 հազար զուտ քաղաքական գործադուլներ մեկ ամսվա ընթացքում։ Մտաբերենք հակահեղափոխության հաջողությունները, գյուղացիների և զինվորների ապստամբությունը և մենք իսկույն ևեթ այն համոզմանը կգանք, վոր «բուրժուական գիտության» դատողությունը դեկտեմբերյան ապստամբության մասին անհեթեթ է, նա յերկչոտ բուրժուազիայի ներկայացուցիչների միայն բանավոր խարդախություն է, բուրժուազիայի, վոր տեսնում է հանձինս պրոլետարիատի իր ամենավտանգավոր դասակարգային թշնամուն։ Իրականում ռուսական հեղափոխության վողջ զարգացումն անխուսափելիորեն հրում էր դեպի զինված վճռական ճակատամարտ ցարական կառավարության և դասակարգային գիտակից պրոլետարիատի ավանգարդի միջև։

Իմ վերը բացատրած նկատառումների մեջ յես արդեն մատնանշեցի, թե ումն էր ռուսական հեղափոխության թուլությունը, վոր տարավ նրան դեպի ժամանակավոր պարտություն։

Դեկտեմբերի ապստամբության ճնշումով սկսվում է հեղափոխության իջնող գիծը։ Այդ շրջանում ևս կան չափազանց հետաքրքիր մոմենտներ. բավական է միայն մտաբերել բանվոր դասակարգի ամենամարտական տարրերի յերկակի փորձը հեղափոխության



նահանջն ընդհատելու և նոր հարձակում նախապատրաստելու համար։

Բայց իմ ժամանակը համարյա արդեն լրացել է, և յես չեմ ուզում իչարը գործ դնել իմ ունկնդիրների համբերությունը։ Սակայն ամենակարևորը հեղափոխության մեջ՝ նրա դասակարգային բնույթը, նրա շարժիչ ուժերը. նրա կռվի միջոցները, յես,—ինչպես ինձ թվում է,—արդեն ուրվանկարեցի, ինչքան վոր ընդհանրապես հնարավոր է սպառել այսպիսի հսկայական թեման մի կարճ զեկուցման մեջ։

Միայն մի քանի համառոտ նկատողություններ ևս ռուսական հեղափոխության համաշխարհային նշանակության մասին։

Ռուսաստանն աշխարհագրապես, տնտեսապես և պատմականորեն պատկանում է վոչ միայն Յեվրոպային, այլև Ասիային։ Յեվ այդ պատճառով մենք տեսնում ենք, վոր Ռուսաստանի հեղափոխությունը հասավ վոչ միայն նրան, վոր քնից արթնացրեց Յեվրոպայի ամենախոշոր և ամենահետամնաց յերկիրը և ստեղծեց հեղափոխական ժողովուրդ, վորի ղեկավարն է հեղափոխական պրոլետարիատը։

Նա միայն դրան չհասավ։ Ռուսական հեղափոխությունը շարժում առաջացրեց ամբողջ Ասիայում։ Թյուրքիայի, Պարսկաստանի, Չինաստանի հեղափոխություններն ապացուցում են, վոր 1905 թ. հզոր ապստամբությունը խոր հետքեր թողեց, և նրա ազդեցությունը, վոր յերևան է գալիս հարյուր-հարյուրավոր միլիոն մարդկանց առաջադիմական շարժման մեջ, անկարելի յե արմատախիլ անել։

Կողմնակի յեղանակով ռուսական հեղափոխությունն իր ազդեցությունն արեց և Արևմուտքի ընկած յերկրների վրա։ Չպետք է մոռանալ, վոր հենց վոր 1905 թ. հոկտեմբերի 31-ին հեռագիր հասավ Վիեննա ցարի սահմանադրական մանիֆեստի մասին, այդ լուրը վճռական դեր խաղաց Ավստրիայում ընդհանուր ընտրական իրավունքի վերջնական հաղթանակի համար։

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի համագումարի նիստի ժամանակ, յերբ ընկեր Էլլենբոգենը—այն ժամանակ նա դեռ սոցիալ-հայրենասեր չէր, այն ժամանակ նա դեռ ընկեր էր,—իր զեկուցումն էր կարդում քաղաքական գործադուլի մասին, այդ րոպեյին սեղանի վրա նրա առաջ դրին հեռագիրը։ Վիճաբանություններն իսկույն ևեթ ընդհատվեցին։—Մեր գործը փողոցում է,—ահա թե ինչ կանչ անցավ ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի պատգամավորների նիստերի դահլիճում։ Յեվ մերձավոր օրերը տեսան խոշորագույն փողոցային ցույցեր Վիեննայում և բարրիկադներ Պրագայում։ Ավստրիայում ընդհանուր ընտրական իրավունքի օրենքի հաղթանակը վճռվեց։ Շատ հաճախ պատահում են արևմտյան յեվրոպացիներ, վորոնք ռուսական հեղափոխության մասին այնպես են դատում, վոր իբր թե այդ հետամնաց յերկրի անցքերը, հարաբերությունները և կռվի միջոցները

շատ քիչ են նման արևմտա-յեվրոպական հարաբերություններին և այդ պատճառով հազիվ թե ունեն վորևե գործնական նշանակություն։

Ավելի սխալ բան, քան այդպիսի կարծիքը, չկա։

Անկասկած, ապագա յեվրոպական հեղափոխության ապագա ճակատամարտների ձևերը և առիթները շատ տեսակետներից կզանազանվեն ռուսական հեղափոխության համապատասխան հարաբերություններից։

Բայց, չնայած դրան, ռուսական հեղափոխությունը—հենց շնորհիվ իր պրոլետարական բնույթին, այս բառի այն հատուկ նշանակությամբ, վորի մասին յես արդեն խոսել եմ—հանդիսանում ե նախերգանքը գալիք յեվրոպական հեղափոխության։ Անկասկած ե, վոր այդ գալիք հեղափոխությունը կարող ե լինել միայն պրոլետարական հեղափոխություն և դրա հետ միասին այդ բառի ավելի խոր իմաստով՝ պրոլետարական, սոցիալիստական և ըստ իր բովանդակության։ Գալիք այդ հեղափոխությունը մեկ կողմից էլ ավելի մեծ չափով ցույց կտա, վոր միայն դաժան կռիվները, հենց քաղաքացիական պատերազմները կարող են մարդկությունն ազատել կապիտալի լծից, իսկ մյուս կողմից, վոր միայն դասակարգային տեսակետից գիտակից պրոլետարները կարող են հանդես գալ և հանդես կգան իբրև առաջնորդներ շահագործվողների ահագին մեծամասնության։

Մեզ չպիտի խաբի Յեվրոպայի այժմյան գերեզմանային խաղաղությունը։ Յեվրոպան հղի յե հեղափոխությամբ։ Իմպերիալիստական պատերազմի հրեշավոր սարսափները, թանկության տանջանքներն ամենուրեք հեղափոխական տրամադրություն են ծնում, և իշխող դասակարգերը—բուրժուազիան, և նրանց գործակատարները—կառավարությունները, շարունակ ավելի ու ավելի յեն ընկնում փակուղու մեջ, վորից առանց մեծագույն ցնցումների նրանք ընդհանրապես չեն կարող յելք գտնել։

Այնպես, ինչպես 1905 թ. Ռուսաստանում պրոլետարիատի ղեկավարությամբ ժողովրդական ապստամբություն սկսվեց ցարական կառավարության դեմ դեմոկրատական հանրապետության նվաճման նպատակով, այդպես և մերձավոր տարիները հենց այս գիշատիչ պատերազմի հետևանքով Յեվրոպայում կառաջացնեն ժողովրդական ապստամբություններ պրոլետարիատի ղեկավարությամբ ընդդեմ ֆինանսական կապիտալի իշխանության, ընդդեմ խոշոր բանկերի, ընդդեմ կապիտալիստների, և այդ ցնցումները չեն կարող այլ կերպ վերջանալ, քան միայն բուրժուազիայի եքսպրոպրիացիայով, սոցիալիզմի հաղթանակով։

Մենք, ծերերս, գուցե չապրենք մինչև այդ գալիք հեղափոխության վճռական ճակատամարտը։ Բայց յես կարող եմ, թվում ե ինձ, մեծ



վստահությամբ այն հույսն արտահայտել, վոր յերիտասարդությունը»
վոր այսպես հիանալի աշխատում ե Շվեյցարիայի և ամբողջ աշխարհի
սոցիալիստական շարժման մեջ, վոր նա բախտ կունենա վոչ միայն
կռվել, այլև հաղթանակել ապագա պրոլետարական հեղափոխության մեջ։
(Գերմաներենից թարգմ. Վ. Ցուրինեց, խմբագրեց Ի. Ի. Ստեպանովա-Սկվորցովա)․

---

**Ծանոթություն.**—1917թ. հունվարի 22-ին, հունվարի 9-ի 12-րդ
տարեդարձին, Վլադիմիր Իլյիչը Ցյուրիխի «Ժողովրդական տանը» բան-
վորական յերիտասարդության կազմակերպած ժողովում մի զեկուցում
կարդաց «Արյունոտ կիրակի» մասին։ Զեկուցումը պիտի կարդաց-
վեր գերմաներեն։ Այդ պատճառով Վլադիմիր Իլյիչը նախապես գրեց
այն հենց գերմաներեն։ Վլադիմիր Իլյիչի գրչի տակ հունվարի 9-ի
մասին արվելիք զեկուցումը դարձավ խիստ բովանդակալից, բայց
սեղմ և հանրամատչելի, ռուսական հեղափոխության հետ քիչ ծանոթ
լսարանի կարիքների համաձայն, մի ուրվագիծ 1905թ. հեղափոխու-
թյան պատմության և դասերի։
Վլադիմիր Իլյիչի գերմաներեն ձեռագիրը պահպանված ե և այժմ
գտնվում ե Լենինի Ինստիտուտում։ Մինչև այժմ նա բոլորովին ան-
հայտ եր։ Մենք տալիս ենք նրա թարգմանությունը։ Կասկած չկա,
վոր Վլադիմիր Իլյիչի նոր հայտնագործած աշխատությունը ամենա-
արժեքավոր նյութը կլինի կուսակցության անդամների, «լենինյան-
ների», կոմյերիտականների, բանվորների և գյուղացիների ամենա-
լայն մասսաներին առաջին հեղափոխության պատմության հետ ծանո-
թացնելու համար։ Նա պետք ե անհապաղ ամենալայն կերպով տա-
րածվի։ Վլադիմիր Իլյիչի «Ռուսաստանի գործադուլների վիճակագրու-
թյան մասին» բրոշյուրի հետ միասին (հրատ. «Նոր Մասկվա») այս
տպագրած հոդվածը լավագույնն ե, ինչ վոր ունի կուսակցությունը
բանվորների և գյուղացիների ամենալայն մասսաներին 1905 թ. մեծ
հեղափոխության դասակարգային բովանդակության հետ ծանոթացնե-
լու համար։

Լ. Կ.

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԱ-ԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

## I

*Առևտրի ու արդյունաբերության մինիստրության հայտնի հրատարակությունները՝ «Ֆաբրիկաների ու գործարանների բանվորների գործադուլների վիճակագրությունը» 1895-1904 տասնամյակում և 1905-1908 տարիներում, բազմիցս արդեն նշվել են մեր գրականության մեջ։ Այդ հրատարակություններում հավաքված նյութն այնքան հարուստ է և այնքան արժեքավոր, որ նրա լրիվ ուսումնասիրությունը և բազմակողմանի մշակումը դեռ խիստ շատ ժամանակ կպահանջի։ Հիշյալ հրատարակության մեջ կատարած մշակումը միայն առաջին մերձեցումն է գործին, որ շատ ու շատ հեռու յէ բավարար լինելուց։ Ներկա հոդվածում մենք մտադիր ենք ծանոթացնել ընթերցողին մի ավելի մանրամասն մշակման նախնական յեզրակացությունների հետ, հետաձգելով լիակատար շարադրանքը մի այլ անգամի։*

*Նախ և առաջ լիովին հաստատված է այն փաստը, որ Ռուսաստանի 1905-1907 թ. թ. գործադուլների աշխարհում չտեսնված յերևույթ եյին։ Ահա գործադուլների թվի տվյալները հազարներով ըստ տարիների ու յերկրների.*

| Միջինը. | Ռուսաստան | Ամերիկայի Միացյալ Նահանգներ. | Գերմանիա | Ֆրանսիա |
|---|---|---|---|---|
| 1895-1904 թ.թ. | 43 | 660 | 527 | 438 |
| 1905 թ. — — | 2,863 | | | |
| 1906 թ. — — | 1,108 | | | |
| 1907 թ. — — | 740 | | | |
| 1908 թ. — — | 176 | | | |
| 1909 թ. — — | 64 | | | |

*մաքսիմումը 1894—1908 թ. թ. ամբողջ տասնհինգամյակի ընթացքում։*

*1905—1907 թ.թ. յեռամյակն արտաքո կարգի էր։ Այդ յեռամյակի ընթացքում Ռուսաստանի գործադուլների մինիմում թիվը գերազանցում է այն մաքսիմումին, որին յերբևիցե հասել են աշխարհի ամենակապիտալիստական յերկրները։ Այդ չի նշանակում, իհարկե, որ ռուս բանվորներն ավելի զարգացած կամ ավելի ուժեղ են, քան Արևմուտքում։ Բայց այդ նշանակում է, որ մինչև այժմ մարդկությու-*

նը չգիտե, թե տվյալ շրջանում արդյունաբերական պրոլետարիատն ինչպիսի յեռանդ ե ընդունակ զարգացնելու։ Դեպքերի պատմական ընթացքի յուրահատկությունն արտահայտվեց այն բանում, վոր այդ ընդունակության մոտավոր չափերն առաջին անգամ դրսևորվեցին դեռ բուրժուական հեղափոխություն ապրող մի հետամնաց յերկրում։

Վորպեսզի պարզ լինի, թե ինչպես Արևմտյան Յեվրոպայի համեմատությամբ փոքրաթիվ ֆաբրիկա-գործարանային բանվորներ ունեցող Ռուսաստանում կարող եր գործաթողների թիվը այդպես մեծ լինել, պետք ե նկատի առնել **կրկնվող** գործադուլները։ Ահա կրկնվող գործադուլների թվի տվյալներն ըստ տարիների և այն հարաբերությամբ, վոր ունի գործաթողների թիվը բանվորների թվի հետ.—

| Տարիներ | Գործաթողների թվի տոկոսային հարաբերությունը բանվորների ընդհանուր թվի հետ։ | Գործադուլների կըրկնվող դեպքերի տոկոսային հարաբերությունը գործադուլների ընդհանուր թվի հետ։ |
|---|---|---|
| 1895-1904 | 1,46$^0/_0$-5,10$^0/_0$ | 36,2$^0/_0$ |
| 1905 | 163,8 | 85,5 |
| 1906 | 65,8 | 74,5 |
| 1907 | 41,9 | 51,8 |
| 1908 | 9,7 | 25,4 |

Այստեղից մենք տեսնում ենք, վոր 1905-1907 թ. թ. յեռամյակն արտաքո կարգի լինելով գործաթողների ընդհանուր թվով, ջոկվում ե նաև կրկնվող գործադուլների հաճախակիությամբ և գործաթողների թվի դեպի բանվորների ընդհանուր թիվը ունեցած տոկոսային հարաբերության բարձրությամբ.—

Վիճակագրությունը տալիս ե մեզ նաև գործադուլով բռնված գործարանների և գործադուլին մասնակցող բանվորների իրական թիվը. ահա այդ տվյալներն ըստ տարիների.

| | Գործադուլով բռնված գործարանների գործադուլին մասնակցողների տոկոսային հարաբերությունը բանվորների ընդհանուր թվի հետ։ |
|---|---|
| 10 տարում (1895-1904) ամբողջությամբ | 27,0$^0/_0$ |
| 1905 | 60,0$^0/_0$ |
| 1906 | 37,9$^0/_0$ |
| 1907 | 32,1$^0/_0$ |
| 1908 | 11,9$^0/_0$ |



Այս աղյուսակը ևս նախորդի նման ցույց ե տալիս, վոր գործաթողների թվի անկումը 1906-ից 1907 թ. ընդհանուր առմամբ համեմատաբար ավելի թույլ ե, քան 1905-ից 1906 թ. անկումը։ Մենք հետագա շարադրանքի մեջ կտեսնենք, վոր միքանի արտադրությունների և միքանի ռայոնների մեջ 1906-ից 1907 թ. նկատվում ե վոչ թե անկում, այլ գործադուլային շարժման ուժեղացում։ Առայժմ նշենք, վոր ըստ նահանգների տվյալները գործադուլներին իրոք մասնակցող բանվորների թվի մասին, ցույցադրում են հետևյալ հետաքրքրական յերևույթը։ 1905-ից 1906 թ. գործադուլներին մասնակցող բանվորների տոկոսը ցածացավ զարգացած արդյունաբերություն ունեցող նահանգների հսկայական մեծամասնության մեջ, բայց կան մի շարք նահանգներ, վորտեղ այդ տոկոսը 1905-ից 1906 թ. **բարձրացավ**։ Այդ ամենաքիչ արդյունաբերական, այսպես ասած ամենախուլ նահանգներն եյին։ Սրանց մեջ են, որինակ, հեռավոր հյուսիսի նահանգները.—Արխանգելսկի նահանգ (11 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր. 1905 թ. գործադուլներին մասնակցող բանվորների տոկոսը՝ 0,4, 1906 թ.—78,6$^0/_0$). Վոլոգդայի նահանգ (6 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր. 26,8$^0/_0$—40,2$^0/_0$ միևնույն տարիներում), Ալանեցկի նահանգ (1 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր, 0$^0/_0$—2,6$^0/_0$). ապա Սև-ծովյան նահանգ (1 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր. 42,4$^0/_0$—93,5$^0/_0$). Վոլգայի շրջանի նահանգներից՝ Սիմբիրսկինը (14 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր. 10,0$^0/_0$—33,9$^0/_0$). կենտրոնական հողագործական նահանգներից՝ Կուրսկինը (18 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր. 14,4$^0/_0$—16-9$^0/_0$). արևելյան ծայրամասից՝ Օրենբուրգինը (3 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր. 3,4$^0/_0$—29,4$^0/_0$)։

Պարզ ե, թե ինչ նշանակություն ունի այդ նահանգների 1905-ից 1906 թ. թ. գործադուլներին մասնակցողների տոկոսի բարձրացումը. ալիքը նրանց չկարողացավ հասնել 1905 թ., նրանք շարժման մեջ քաշվեցին ավելի առաջավոր բանվորների մեկ տարվա, աշխարհում չտեսնված, կռվից հետո։ Այս յերևույթին, վոր շատ կարևոր ե դեպքերի պայմանական ընթացքը հասկանալու համար, հետագա շարադրանքում մենք բազմիցս կհանդիպենք։

Ընդհակառակ, 1906-ից 1907 թ. գործադուլներին մասնակցողների տոկոսը բարձրանում ե միքանի շատ արդյունաբերական նահանգներում, որինակ՝ Պետերբուրգի նահանգում (68,0$^0/_0$ 1906 թ., 85,7$^0/_0$ 1907 թ.—համարյա նույնքան, ինչքան 1905 թ.—85,9$^0/_0$). Վլադիմիրի նահանգում (37,1$^0/_0$—49,6$^0/_0$). Բաքվի նահանգում (32,9$^0/_0$—85,5$^0/_0$). Կիևի նահանգում (10,9$^0/_0$—11,4$^0/_0$) և մի շարք ուրիշներում։ Այդպիսով, յեթե 1905-ից 1906 թ. մի շարք նահանգներում գործաթողների տոկոսի մեծացման մեջ մենք գտնում ենք բանվոր դասակարգի արրյեր-

գարդը, վորն ուշացել էր կռվի ամենամեծ զարգացման մոմենտից, ապա այդ տոկոսի մեծացումը մի շարք ուրիշ նահանգներում 1906-ից 1907 թ. մեզ ցույց է տալիս ավանգարդը, վոր ձգտում է նորից բարձրացնել կռիվը, կանգնեցնել սկսված նահանջը։

Վորպեսզի այս ճիշտ յեզրակացությունն ավելի ճշգրիտ դարձնենք՝ բերենք բանվորների թվի և գործադուլների իսկական մասնակցողների թվի աբսոլյուտ թվանշաններն ըստ առաջին և յերկրորդ տեսակի նահանգների։

Նահանգներ, վորոնց մեջ գործադուլին մասնակցող բանվորների $^0/_0$-ը 1905-ից 1906 թ. բարձրացել է.

| Այդպիսի նահանգների թիվը. | Ֆաբրիկա-գործարանային բանվորների թիվը նրանցում. | Բանվորների թիվը, վորոնք իրոք մասնակցել են գործադուլներին. 1905 թ. | 1906 թ. |
|---|---|---|---|
| 10 | 61,800 | 6,564 | 21,484 |

Միջին հաշվով նահանգին ընկնում է 6 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր։ Գործադուլներին իրոք մասնակցող բանվորների թվի մեծացումն ամբողջովին 15 հազար է միայն։

Նահանգներ, վորոնց մեջ գործադուլին մասնակցող բանվորների $^0/_0$-ը 1906-ից—1907 թ. բարձրացել է.

| Այդպիսի նահանգների թիվը. | Ֆաբրիկա-գործարանային բանվորների թիվը նրանցում | Բանվորների թիվը, վորոնք իրոք մասնակցել են գործադուլներին. 1906 թ. | 1907 թ. |
|---|---|---|---|
| 19 | 572,132 | 186,926 | 285,673 |

Միջին հաշվով նահանգին ընկնում է 30 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր։ Գործադուլներին իրոք մասնակցող բանվորների թվի մեծացումը մինչև 100 հազարի յե հասնում, իսկ յեթե հանենք Բագվի նահանգի նավթային բանվորներին, վորոնք 1906 թ. չեն հաշվըված (հավանականաբար վոչ ավելի քան 20-30 հազար), այն ժամանակ մոտ 70 հազարի։

Արրյերգարդի դերը 1906 թ. և ավանգարդինը 1907 թ. այս տվյալների մեջ արտառոց կերպով յերևում է։ Այդ չափերի մասին ավելի ճշգրիտ դատելու համար պետք է վերցնել տվյալներն ըստ Ռուսաստանի ռայոնների և համեմատել գործաթողների թիվը ֆաբրիկա-գործարանային բանվորների թվի հետ։ Ահա այդ տվյալների ամփոփումը.



| Ֆաբրիկա-գործարանային շրջաններ | Ֆաբրիկա-գործարանային բանվորների թիվը 1905 թ. (հազարներով). | Գործաթողների թիվը (հազարներով) տարիների ընթացքում: 1895-1904 գումարով | 1905 | 1906 | 1907 | 1908 |
|---|---|---|---|---|---|---|
| I. Պետերբուրգի | 298 | 137 | 1,033 | 307 | 325 | 44 |
| II. Մոսկվայի. | 567 | 123 | 540 | 170 | 154 | 28 |
| III. Վարշավայի. | 252 | 69 | 887 | 525 | 104 | 35 |
| IV-VI. Կիևի, Մերձվոլգյան և Խարկովի. | 543 | 102 | 403 | 106 | 157* | 69* |
| Ամբողջը | 1,660 | 431 | 2,863 | 1.108 | 740 | 176 |

Զանազան ռայոնների բանվորներ անհամաչափ են մասնակցել շարժմանը։ Ընդհանուր առմամբ 1,660 հազար բանվորը ցուցահանել են 2.863 հազար գործաթող, այսինքն 164 գործաթող յուրաքանչյուր հարյուր բանվորին կամ, այլ բառերով ասած, բանվորների կեսից միքիչ ավելին 1905 թ. գործադուլ է արել միջին թվով յերկու անգամ։ Բայց այս միջինները մթագնում են արմատական զանազանությունը, վոր կա մի կողմից Պետերբուրգի և Վարշավայի շրջանների և մյուս կողմից մնացած բոլորի միջև։ Պետերբուրգի և Վարշավայի շրջաններում միասին, ֆաբրիկա-գործարանային բանվորներն ամբողջ թվի $^1/_3$-ն են (550 հազարը 1,660 հազարից), իսկ գործաթողներ նրանք ցուցահանել են ամբողջ թվի $^2/_3$ (1,920 հազար 2,863 հազարից)։ Այդ շրջաններում յուրաքանչյուր բանվոր գործադուլ է արել 1905 թ. միջին թվով մոտ 4 անգամ։ Մնացած շրջաններում 1,110 հազար բանվորին ընկնում է 943 հազար գործաթող, այսինքն համեմատաբար չորս անգամ պակաս, քան վերի յերկուսի մեջ։ Արդեն այստեղից յերևում է, թե ինչքան

* Այս թվանշանները լրիվին համեմատելի չեն նախորդ տարիների տվյալների հետ, վորովհետև 1907 թ. մեջ առաջին անգամ մտցրած են նավթահանքերի բանվորները։ Մեծացումը, հավանորեն, 20-50 հազարից ավելի չէ։

սխալ են լիբերալների պնդումները, որ կրկնում են մեր լիկվիդատորները, թե իբր բանվորները գերագնահատում եյին իրենց ուժը։ Ընդհակառակ, փաստերը ցույց են տալիս, որ նրանք թերագնահատել են իրենց ուժերը, վորովհետև մինչև վերջ չոգտագործեցին այն։ Յեթե գործադուլային կռվի (մենք այստեղ խոսում ենք միայն կռվի այս մեկ ձևի մասին) յեռանդը և համառությունն ամբողջ Ռուսաստանում էլ այնպես լինեյին, ինչպես Պետերբուրգի և Վարշավայի շրջաններում, այն ժամանակ գործաթողների ընդհանուր թիվը **յերկու անգամ** ավելի կլիներ։ Այս յեզրակացությունն այլ բառերով կարելի յե այսպես արտահայտել՝ բանվորները կարող եյին շարժման տվյալ ասպարեզում գնահատել իրենց ուժերի միայն կեսը, վորովհետև մյուս կեսը նրանք դեռ չեյին ոգտագործել։ Խոսելով աշխարհագրականորեն՝ արևմուտքն ու հյուսիս-արևմուտքն արդեն արթնացել եյին, բայց կենտրոնը, արևելքը և հարավը դեռ կիսով չափ քնած եյին։ Կապիտալիզմի զարգացումն ամեն որ վորոշ բան անում է ուշացածներին արթնացնելու համար։

Հետևյալ կարևոր յեզրակացությունը համաձայն ռայոնական տվյալների այն է, վոր 1905-ից 1906 թ. շարժման անկումն ընդհանուր եր, չնայած վոչ համաչափ, իսկ 1906-ից 1907 թ. Վարշավայի շրջանի հսկայական անկման, Մասկվայի, Կիևի և Մերձվոլգյան շրջանների շատ քիչ փոքրացման ժամանակ, մենք տեսնում ենք **մեծացում** Պետերբուրգի և Խարկովի շրջաններում։ Այս նշանակում է, վոր բնակչության գիտակցականության և նախապատրաստման տվյալ մակարդակի ժամանակ, շարժման քննվող ձևը 1905 թ. սպառված եր. ինչքան վոր սոցիալ-քաղաքական կյանքի օբյեկտիվ հակասությունները չեյին չքացել, նա պիտի փոխանցվեր շարժման բարձրագույն ձևին։ Բայց մեկ տարվա, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, հանգստից կամ ուժերի հավաքման շրջանից հետո, 1906 թ. ընթացքում յերկրի մեկ մասում նոր բարձրացում նշվեց և սկսվեց։ Յեթե լիբերալները, իսկ նրանց յետևից լիկվիդատորները գնահատելով այդ շրջանն՝ արհամարհանքով են խոսում «ռոմանտիկների սպասումների» մասին, ապա մարքսիստը պետք է ասի, վոր այդ մասնակի բարձրացմանն աջակցելուց յերես դարձնելով, լիբերալները դեմոկրատական նվաճումների պաշտպանության վերջին հնարավորությունը ջլատեցին։

Գործաթողների տերրիտորիալ բաշխման հարցի առթիվ հարկավոր է դեռ նշել, վոր նրանց ահագին մեծամասնությունն ընկնում է **վեց** նահանգի, վորտեղ ուժեղ կերպով զարգացած է արդյունաբերությունը, և վորոնցից հնգի մեջ խոշոր քաղաքներ կան։ Ահա այդ վեց նահանգը՝ Պետերբուրգի, Մասկվայի, Լիֆլանդիայի, Վլադիմիրի, Վարշավայի և Պետրակովի։ Այդ նահանգներում 1905 թ. 827 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր կար ընդհանուր 1,661 հազար թվից,



այսինքն ընդհանուր թվի համարյա կեսը։ Իսկ նրանց մեջ 1895—1904 թ. թ. տասնամյակում ընդհանուր գումարով գործաթողներն եյին 246 հազար 431 հազարից, այսինքն գործաթողների ամբողջ թվի մոտ 60%. 1905 թ.—2,072 հազար 2,863 հազարից, այսինքն մոտ 70%. 1906 թ.—852 հազար 1,108 հազարից, այսինքն մոտ 75%. 1907 թ.—517 հազար 740 հազարից, այսինքն մոտ 70%. 1908 թ.—85 հազար 176 հազարից, այսինքն կեսից պակաս *։

Այսպես, ուրեմն, այս վեց նահանգի դերը 1905—1907 թ. թ. յեռամյակում **ավելի բարձր** եր, քան նախորդ և հաջորդ շրջաններում։ Նշանակում է, պարզ է, վոր խոշոր քաղաքային, դրանց թվում և մայրաքաղաքային կենտրոններն այդ յեռամյակի ընթացքում շատ ավելի բարձր յեռանդ ցուցահանեցին, քան բոլոր մնացած վայրերը։ Այն բանվորները, վորոնք ցրված եյին գյուղերի և համեմատաբար մանր քաղաքային և արդյունաբերական կենտրոնների մեջ, կազմելով բանվորների ընդհանուր թվի կեսը, 1895—1904 թ. թ. ցուցահանեցին գործաթողների ամբողջ թվի 40%, իսկ 1905—1907 թ. թ. միայն 25—30%։ Լրացնելով վերն արած յեզրակացությունը, մենք կարող ենք ասել, վոր խոշոր քաղաքներն արթնացել եյին, իսկ մանրերն ու գյուղերը նշանավոր չափով դեռ քնած եյին։

Գյուղի վերաբերմամբ ընդհանրապես, այսինքն գյուղերում ապրող ֆաբրիկա-գործարանային բանվորների մասին, բացի այդ կան վիճակագրության տվյալներ **գործադուլների թվի մասին** (վոչ գործաթողների թվի) քաղաքներում և քաղաքներից դուրս։ Ահա այդ տվյալները.—

Գործադուլների թիվը

| | Քաղաքներում | Քաղաքներից դուրս | Բոլորը |
|---|---|---|---|
| Տաս տարվա ընթացքում (1895—1904) գումարը. | 1,326 | 439 | 1,765 |
| 1905 թ. . . . . . | 11,891 | 2.104 | 13,995 |
| 1906 թ. . . . . . | 5,328 | 786 | 6,114 |
| 1907 թ. . . . . . | 3,258 | 315 | 3,573 |
| 1908 թ. . . . . . | 767 | 125 | 892 |

Պաշտոնական վիճակագրություն կազմողները բերելով այս տվյալները՝ մատնանշում են, վոր, համաձայն Պ. Պազուժևի հայտնի հետազոտությունների, Ռուսաստանի ֆաբրիկաների ու գործարանների վողջ թվի 40%-ը գտնվում է քաղաքներում, 60%-ը քաղաքներից դուրս։ Հետևաբար, յեթե սովորական ժամանակ (1895—1904) քաղաքների գոր-

* 1908 թ. գործաթողների խոշոր թիվ ունեցող նահանգների գլուխ է կանգնած Բաքվի նահանգը 47 հազար գործաթողներով։ Մասսայական քաղաքական գործադուլի վերջին մոհիկանները։

ծադուլների թիվը յեռակի բարձր եր գյուղերի գործադուլների թվից, ապա գործադուլների թվի տոկոսային հարաբերությունը գործատների թվի հետ քաղաքներում $4^1/_2$ անգամ ավելի մեծ է, քան գյուղերում։ 1905 թ. այդ հարաբերությունը մոտավորապես 8:1 եր. 1906—9:1. 1907—15:1. 1908*—6:2։ Ուրիշ խոսքով՝ քաղաքային ֆաբրիկա-գործարանային բանվորների դերը գործադուլային շարժման մեջ 1905 թ. շատ ավելի ուժեղ եր, քան նախորդ տարիներում, համեմատած այն դերին, վոր ունեցան գյուղերում ապրող ֆաբրիկա-գործարանային բանվորները, ընդսմին 1906 և 1907 թ. թ. այդ դերը շարունակ ավելի ու ավելի մեծանում եր, այսինքն գյուղերի բանվորների համեմատական մասնակցությունը շարժմանը շարունակ ավելի ու ավելի փոքրանում եր։ Գյուղերում ապրող ֆաբրիկա-գործարանային բանվորները, վորոնք 1895—1904 թ. թ. տասնամյակում ամենից քիչ եյին նախապատրաստված կռվի համար, հայտնաբերեցին ամենաքիչ կայունություն, 1905 թ. հետո ամենից ավելի արագ նահանջի անցնելով։ Ավանգարդը, այսինքն քաղաքային ֆաբրիկա-գործարանային բանվորները, 1906 թ. հատուկ ջանք թափեց, իսկ 1907 թ. ավելի յեվս մեծ ջանք, քան 1906 թ., վորպեսզի կանգնեցնի այդ նահանջը։

Քննենք, ապա, գործադուլողների բաշխումն ըստ արտադրությունների։ Սրա համար մենք կընտրենք արտադրության չորս գլխավոր խմբեր. ա) մետալլիստներ, բ) մանածագործական բանվորներ, գ.) տպագրական բանվորներ, փայտագործներ, կաշեգործներ և քիմիական արտադրությունների բանվորներ, դ) հանքային նյութերի մշակման և սննդի արդյունքների արտադրության բանվորներ։ Ահա տվյալներն ըստ տարիների.—

| Արտադրության խմբերը | Փաբր. գործ. բանվորների ամբողջ թիվը 1904 թ. | Գործադուլողների թիվը հազարներով տարիների ընթացքում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1895—1904 գումարով | 1905 | 1906 | 1907 | 1908 |
| Ա. | 252 | 117 | 811 | 213 | 193 | 41 |
| Բ. | 708 | 237 | 1,296 | 640 | 302 | 56 |
| Գ. | 277 | 38 | 471 | 170 | 179 | 24 |
| Դ. | 454 | 39 | 285 | 85 | 66 | 55 |
| Ամբողջը | 1,691 | 431 | 2,863 | 1,108 | 740 | 176 |

* 1908 թ. գործադուլների թվի մեջ մտան նավթահանքերի 228, իսկ 1907 թ.—250 գործադուլներ, նավթահանքերի, վորոնք առաջին անգամ տեսչության յենթարկվեցին 1906 թ.։



Մետալլիստներն ամենից ավելի լավ եյին նախապատրաստված 1905 թ. առաջ յեղած տասնամյակում։ Այդ տասնամյակի ընթացքում նրանցից գործադուլ եր արել համարյա կեսը (117՝ 252-ից)։ Ամենից ավելի լավ նախապատրաստված լինելով, նրանք 1905 թ. բոլորից առաջ եյին կանգնած։ Նրանց գործադուլողների թիվը ավելի քան յերեք անգամ բարձր է բանվորների թվից (811 հանդեպ 252-ի)։ Ե՛լ ավելի արտառոց կերպով է հանդես գալիս այդ ավանգարդի դերը, յերբ վերլուծում ենք 1905 թ. ամսական տվյալները (այդ տվյալների մանրամասն քննությունն անկարելի յե կարճ հոդվածում, և մենք հետաձգում ենք այն մի ուրիշ անգամի)։ 1905 թ. բոլոր ամիսներից մետալլիստների գործադուլողների մաքսիմումն ընկնում է վոչ թե հոկտեմբերին, ինչպես արտադրության բոլոր մնացած խմբերումն է, այլ հունվարին։ Ավանգարդը մաքսիմալ յեռանդով սկսեց շարժումը, «թափահարելով» մնացած մասսային։ 1907 թ. մենակ հունվար ամսին մետալլիստներից գործադուլ արեց 155 հազար մարդ, այսինքն մետալլիստների վողջ թվի յերկու յերրորդականը (252 հազար), գործադուլողների թիվը մեկ ամսում նշանավոր չափով ավելի յե, քան թե դրանից առաջ յեղած տաս տարում (155 հանդեպ 117-ի)։ Բայց այդ համարյա գերմարդկային յեռանդը 1905 թ. վերջում սպառում է ավանգարդի ուժերը, մետալլիստները 1906 թ. շարժման անկման չափի տեսակետից առաջի տեղն են բռնում։ Նրանց գործադուլների թվի փոքրացումը մաքսիմալն է—811-ից մինչև 213, այսինքն համարյա չորս անգամ։ 1907 թ. ավանգարդը կրկին հավաքում է ուժերը, ընդհանուր առմամբ գործադուլողների թիվը շատ աննշան է պակասում (213-ից մինչև 193), իսկ մետաղների մշակման արտադրությունների խմբից յերեք գլխավորագույն արտադրությունների, այսինքն մեքենաշինարարականի, նավաշինարարականի և չուգունաձուլականի մեջ, գործադուլողների թիվը 1906 թ. 104 հազարից բարձրանում է 1907 թ. մինչև 125 հազար։

Մանածագործական բանվորները կազմում են ռուսական ֆաբրիկա-գործարանային բանվորների գլխավոր մասսան, մի քիչ պակաս ընդհանուր թվի կեսից (708՝1,691-ից)։ 1905թ. առաջ յեղած տաս տարվա ընթացքում ըստ նախապատրաստության նրանք բռնում են յերկրորդ տեղը, գործադուլ է արել ընդհանուր թվի $^1/_3$-ը (237 708-ից)։ Ըստ 1905 թ. շարժման ուժի, նույնպես յերկրորդ տեղը՝ մոտ 180 գործադուլող ամեն մի հարյուր բանվորին։ Նրանք կռվի մեջ են քաշվում ավելի ուշ, քան մետալլիստները, հունվարին նրանք ունեյին մի քիչ ավելի գործադուլող, քան մետալլիստները (164 հազար հանդեպ 155-ի), հոկտեմբերին ավելի, քան յերկու անգամ (256 հազար հանդեպ 117-ի)։ Ավելի ուշ շարժման մեջ քաշվելով՝ այդ գլխավոր մասսան բոլորից ավելի տոկուն է մնում 1906 թ., անկումն այդ թվին ընդհանուր է, բայց

մանածագործական բանվորների մոտ նա բոլորից ցած է, նվազումը կրկնակի յէ (640 հանդեպ 1,296-ի), իսկ մետալլիստների մոտ համարյա քառակի (213 և 811), մնացածների մոտ $2^{1}/_{2}$-$3^{1}/_{2}$ անգամ։ 1907 թ. միայն գլխավոր մասսայի ուժերը սպառված են յերևում, 1906-ից 1907 թ. անկումը հենց այդ խմբումն է **ամենից մեծը**, կրկնակիից ավելի մեծ (302 հանդեպ 640-ի)։

Կանգ չառնելով մնացած արտադրությունների տվյալների վերլուծության վրա, նշենք միայն, որ ամենքից յետ մնացածը Դ. կարգն է, որ ամենից թույլ եր նախապատրաստված և ամենից թույլ եր մասնակցել շարժմանը։ Յեթե իբրև նորմա վերցնենք մետալլիստներին, այն ժամանակ կարելի յէ ասել, որ Դ. կարգը մենակ 1905 թ. համար «պարտք եր մնում» ավելի քան մեկ միլիոն գործաթող։

Մետալլիստների և մանածագործների միջև յեղած հարաբերությունը բնորոշ է, իբրև առաջավոր շերտի հարաբերություն դեպի լայն մասսան։ 1895-1904 թ. թ. ազատ կազմակերպությունների, ազատ մամուլի, պարլամենտական ամբիոնի և այլն բացակայության ժամանակ, 1905 թ. մասսաները չեյին կարող այլ կերպ համախմբվել, քան տարերային կերպով, հենց կռվի ընթացքում։ Այդ համախմբման մեխանիզմն այն եր, որ գործաթողներն ալիք առ ալիք բարձրանում եյին, ընդ վորում լայն մասսաների «թափահարման» համար ավանգարդն ստիպված եր այնքան հսկա յեռանդ ծախսել շարժման սկզբում, որ նա շարժման գագաթնակետի պահին համեմատաբար թուլացած յերևա։ 1905 թ. հունվարին 444 հազար գործաթող կար, նրանցից մետալլիստները 155 հազար եյին, այսինքն 34%, իսկ հոկտեմբերին գործաթողների ամբողջ թիվը 519 հազար եր, նրանցից մետալլիստներ—117 հազար, այսինքն 22%։ Հասկանալի յէ, որ շարժման այսպիսի անհամաչափությունը հավասարազոր է ուժերի վորոշ վատնումի, շնորհիվ բաժանվածության, անբավարար կոնցենտրիացայի։ Դա նշանակում է՝ առաջին, որ եֆֆեկտը կարելի կլիներ բարձրացնել ուժերի լավագույն կոնցենտրացիայով, և յերկրորդ, որ ըստ ուսումնասիրվող դարաշրջանի օբյեկտիվ պայմանների յուրաքանչյուր ալիքի սկզբում անխուսափելի յեր և հաջողության հասնելու համար անհրաժեշտ մի շարք նախնական գործողություններ, այսպես ասած հետախուզումներ, փորձնական շարժումներ և այլն։ Այդ պատճառով, յերբ լիբերալները, իսկ նրանց յետևից Մարտովի նման լիկվիդատորները, «պրոլետարիատի իր ուժերի գերագնահատության» մասին ունեցած իրենց թեորիայի տեսակետով մեզ մեղադրում են այն բանում, թե մենք «քարշ եյինք գալիս տարերային դասակարգային կռվի պոչից», դրանով այդ պարոններն իրենք իրենց դատավճիռն են հանում և հակառակ իրենց կամքի մեզ մեծագույն կոմպլիմենտ հրամցնում։



Վորպեսզի վերջացնենք գործադուլների տարեկան տվյալների ակնարկը, կանգ առնենք դարձյալ այն թվերի վրա, վորոնք բնորոշում են գործադուլների չափը և տևողությունը և գործադուլների փասների մեծությունը։

Գործադուլների մասնակցողների միջին թիվն եր.

| | |
|---|---|
| Տաս տարում (1895—1904) | 244 բանվոր |
| 1905 թ. | 205 » |
| 1906 թ. | 181 » |
| 1907 թ. | 207 » |
| 1908 թ. | 197 » |

1915 թ. գործադուլների չափի նվազումը (ըստ մասնակցողների թվի) բացատրվում է նրանով, վոր գործադուլների մասսան կռվի մեջ մտավ և դրանով իջան մասնակցողների միջին թվերը։ 1906թ. հետագա նվազումը, ըստ յերևույթին, արտացոլում է կռվի յեռանդի իջեցումը։ 1907 թ. այստեղ յերևում է վորոշ քայլ դեպի առաջ։

Յեթե վերցնենք զուտ-քաղաքական գործադուլների մասնակցողների միջին թիվը, այն ժամանակ ըստ տարիների կստանանք այսպիսի թվեր՝ 1905—180, 1906—174, 1907—203, 1908—197։ Այս թվերըն էլ ավելի արտառոց մատնանշում են կռվի յեռանդի թուլացումը 1906 թ. և նոր աճումը 1907 թ. կամ (գուցե և սրա հետ միասին) 1907 թ. շարժման առավելապես ամենախոշոր գործարանների մասնակցությունը։

Մեկ գործաթող բանվորի գործադուլային օրերի թիվն եր.

| | |
|---|---|
| Տաս տարում (1895—1904) | 4,8 օր |
| 1905 | 8,7 » |
| 1906 | 4,9 » |
| 1907 | 3,2 » |
| 1908 | 4,9 » |

Այս թվերով բնորոշված կռվի համառությունն ամենից ավելի բարձրը եր 1905 թ., ապա այն արագ ցածացավ մինչև 1907 թ. և բարձրացավ միայն 1908 թվին։ Հարկավոր է հիշել, վոր ըստ կռվի համառության արևմտա-յեվրոպական գործադուլներն անհամեմատ ավելի բարձր են կանգնած։ Մեկ բանվոր-գործաթողի գործադուլային օրերի թիվը 1894—1898 թ. թ. հնգամյակում կազմում է Իտալիայի համար—10,3, Ավստրիայի համար—12,1, Ֆրանսիայի համար—14,3, և Անգլիայի համար—34,2։

Յեթե առնենք զուտ քաղաքական գործադուլները, այն ժամանակ կստանանք այսպիսի թվեր՝ 1905—7,0 օր մեկ գործաթողին. 1906—1,5, 1907—1,0 օր։ Տնտեսական պատճառներից առաջացած գործադուլները միշտ աչքի յեն ընկնում կռվի ավելի մեծ տևողությամբ։

Նկատի առնելով զանազան տարիների գործադուլային կռվի տարբեր համառությունը, մենք այն եզրակացության կհանգենք, որ գործատերերի թվին վերաբերող տվյալները դեռևս բավարար չափով չեն որոշում զանազան տարիների շարժման համեմատական չափերը: Ճշգրիտ որոշիչ ծառայում է գործադուլային օրական աշխատանքը, որ ըստ տարիների կազմում էր.

| | Տաս տարում (1895—1904) ընդհ. գումարով | Ի թիվս որոց զուտ քաղաքական գործադուլների մեջ |
|---|---|---|
| | 2,079,408 | |
| 1905 թ. . . . | 23,609,387 | 7,569,708 |
| 1906 » . . . | 5,512,749 | 763,605 |
| 1907 » . . . | 2,433,123 | 521,647 |
| 1908 » . . . | 864,666 | 89,021 |

Այսպիսով շարժման ճշգրիտ որոշված չափերը միայն 1905 թ. **ավելի քան տասնմեկ անգամ** մեծ են դրանից առաջ եղած տաս տարվա շարժումից միասին առած: Ուրիշ կերպ ասած՝ 1905 թ. շարժման չափերը 115 անգամ գերազանցում են նախորդ տասնամյակի շարժման **տարեկան միջին** չափերին:

Այս փոխհարաբերությունը մեզ ցույց է տալիս, թե ինչքան կարճատես են այն մարդիկ, որ հաճախ պատահում են պաշտոնական գիտնականների մեջ (ու ոչ միայն մենակ նրանց մեջ), որոնք այսպես կոչված «խաղաղ», «օրգանական», «էվոլյուցիոն» զարաշրջաններում նկատված սոցիալ-քաղաքական զարգացման տեմպն ընդունում են բոլոր դեպքերի համար իբրև նորմա, իբր ամենաբնականոն ժամանակակից մարդկության զարգացման հնարավոր արագության: Իրոք այսպես կոչված «օրգանական» զարաշրջանների «զարգացման» տեմպը մաքսիմալ լճացման, զարգացման մաքսիմալ խանգարման ամենաբնականոն է:

Գործադուլային օրական աշխատանքի թվերի տվյալների համաձայն, պաշտոնական վիճակագրություն կազմողը հաշվում է արդյունաբերության կրած վնասները: Այդ վնասները (արդյունքի թերի պատրաստումը) տաս տարվա ընթացքում, 1895—1904 ընդհանուր գումարով կազմում էին 10,4 միլիոն ռուբլի, 1905 թ.—127,3 միլիոն, 1906 թ.—32,2 միլիոն, 1907 թ.—15,0 միլիոն և 1908 թ.—5,8 միլիոն ռուբլի: Հետևաբար, երեք տարում, 1905—1907, արդյունքի թերի պատրաստումը կազմում էր 173,5 միլիոն ռուբլի:

Բանվորների վնասները, գործադուլային օրերին աշխատավարձ չստանալու հետևանքով (վնասներ, որոնք որոշված են զանազան արտադրություններում ըստ օրավարձի միջին չափի), քննվելիք տարիներում հազար ռուբլիներով կազմում էին.



| Արտադրության խմբերը (տես վերը, եջ 104): | Ֆաբրիկա-գործարանային բանվորների թիվը 1905 թ. հազարներով. | Բանվորների վնասները գործադուլներից հազար ռուբլիներով. | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1895-1904 ընդհ. գումարով: | 1905 | 1906 | 1907 | 1908 |
| Ա. . . | 252 | 650 | 7,654 | 891 | 450 | 132 |
| Բ. . . | 708 | 715 | 6,794 | 1,968 | 659 | 228 |
| Գ. . . | 277 | 137 | 1,997 | 610 | 576 | 69 |
| Դ. . . | 454 | 95 | 1,096 | 351 | 130 | 22 |
| Բոլորը | 1,691 | 1,597 | 17,541 | 3,820 | 1,815 | 451 |

Երեք տարում, 1905—1907, բանվորների վնասները կազմում էին 23,2 միլիոն ռուբլի, այսինքն ավելի քան 14 անգամ մեծ էին, քան առաջի ողջ տաս տարում միասին վերցրած*:

Պաշտոնական վիճակագրություն կազմողը հաշվում է, որ այդ վնասները ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ աշխատող ամեն մեկ բանվորի համար (և ոչ թե ամեն մեկ գործադուլի համար) միջին հաշվով կազմում էին առաջին տասնամյակում տարեկան մոտ 10 կոպեկ, 1905 թ. մոտ 10 ռուբլի, 1906 թ. մոտ 2 ռուբլի, 1907 թ. մոտ 1 ռուբլի: Բայց այս հաշիվը մի կողմ է թողնում քննվելիք տեսակետից այն հսկայական զանազանությունները, որ կան զանազան ար-

---

*) Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ վնասների **մի մասը** բանվորները շարժման ամենաուժեղ շրջանում ձեռնարկուների վրա ձգեցին: Վիճակագրությունը պետք է պարզեր, սկսած 1905 թվից, գործադուլների հատուկ պատճառը (ըստ պաշտոնական նոմենկլատուրայի 50 պատճառների խումբը) **գործադուլի ժամանակամիջոցի համար վճարելու պահանջ** է: Այդ պահանջը ներկայացնելու դեպքերի թիվը 1905 թ.—652 էր, 1906 թ.—256, 1907 թ.—48 և 1908 թ.—9 (մինչև 1905 թ. այդ պահանջն ամենևին չէր ներկայացվում): Այդ պահանջի համար բանվորների կռվի հետևանքները հայտնի են միայն 1906 և 1907 թ. թ. և միայն երկու-երեք դեպք է, երբ մասնաբշած պատճառը **գլխավորն** էր. 1906 թ. գլխավորապես այս պատճառով գործադուլ արած 10,966 բանվորի գործադուլը շահել են 2,171, տանուլ են տվել 2,626 և 6,169 կոմպրոմիսով են վերջացրել: 1907 թ. գլխավորապես այդ պատճառով գործադուլ արած 95 բանվորներից ոչ մեկը չի շահել գործադուլը, 52 տանուլ են տվել, 41 կոմպրոմիսով են վերջացրել: Այն բոլորից, ինչ որ հայտնի է մեզ 1905 թ. գործադուլների մասին, պետք է ենթադրել, որ հիշյալ պատճառից առաջացած գործադուլները 1905 թ. ավելի հաջող էին, քան 1906 թ.:

տադրությունների բանվորների միջև: Ահա ավելի մանրամասն հաշիվ, վոր արված է հենց նոր բերած ադյուսակի թվերի հիման վրա.

| Արտադրության խմբերը | Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության մեջ աշխատող մեկ բանվորին գործադուլներից ընկնող վնասի միջին չափը (ռուբլիներով). | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Տաս տարում 1894-1905 ընդհ. գումարով. | 1905 | 1906 | 1907 | 1908 |
| Ա. . . | 2,6 | 29,9 | 3,5 | 1,8 | 0,5 |
| Բ. . . | 1,0 | 9,7 | 2,8 | 0,9 | 0,3 |
| Գ. . . | 0,5 | 7,2 | 2,2 | 2,1 | 0,2 |
| Դ. . . | 0,2 | 2,4 | 0,7 | 0,3 | 0,05 |
| Բոլորը | 0,9 | 10,4 | 2,3 | 1,1 | 0,3 |

Այստեղից յերևում է, վոր 1905 թ. գործադուլներից մեկ մետալլիստի (Ա. խումբ) ունեցած վնասների չափը կազմում եր 30 ռուբլի, միջինից յերեք անգամ մեծ, տաս անգամից էլ ավելի մեծ, քան հանքային նյութերի և սննդի արդյունքների մշակման բանվորի (Դ. խումբ) վնասների միջին չափը: Վերը մեր արած յեզրակացությունը, վոր մետալլիստները շարժման քննելիք ձևում իրենց ուժերն սպառեցին 1905 թ. վերջում, ավելի ռելյեֆ կերպով հաստատվում է տվյալ ադյուսակով՝ Ա. խմբում 1905-ից 1906 թ. վնասների չափը փոքրացել է ավելի քան 8 անգամ, մնացած խմբերում 3-4 անգամ:

Սրանով վերջացնելով գործադուլների վիճակագրության տարեկան տվյալների վերլուծությունը, անցնենք ամսական տվյալների ուսումնասիրությանը:

## II

Գործադուլային շարժման ալիքաձև բնույթն ուսումնասիրելու համար տարեկան շրջանը չափազանց մեծ է: Մենք այժմ վիճակագրական իրավունք ունենք ասելու, վոր 1905-1907 թ. թ. յեռամյակում յուրաքանչյուր ամիս մեկ տարվա արժեք ուներ: Բանվորական շարժումն այդ յերեք տարում 30 տարի ապրեց: 1905 թ. գործաթողների թիվը վոչ մեկ ամսում ցած չի իջել 1895-1904 թ. թ. տասնամյակի գործաթողների տարեկան մինիմումից, իսկ 1906 և 1907 թ. թ. այդպիսի ամիսների թիվը միայն յերկուական եր:

Դժբախտաբար ամսական տվյալների, ինչպես և առանձին նահանգների վերաբերող տվյալների մշակումը շատ անբավարար է պաշտո-



նական վիճակագրության մեջ: Շատ ամփոփումներ հարկավոր է նորից անել: Այդ պատճառով, ինչպես և տեղի նկատառումներով, մենք առայժմ կսահմանափակվենք յեռամսյակների վերաբերող տվյալներով: Տնտեսական և քաղաքական գործադուլների բաժանման առթիվ նկատենք, վոր պաշտոնական վիճակագրությունը լիովին համեմատելի տվյալներ չի տալիս 1905 և 1906-1907 թվականների վերաբերմամբ: Խառը գործադուլները—ըստ պաշտոնական նոմենկլատուրայի 12 կարգը տնտեսական պահանջներով և 12 Բ. կարգը տնտեսական պահանջներով—1905 թ. համարվում եյին քաղաքական, իսկ ավելի ուշ՝ տնտեսական: Մենք 1905 թ. էլ նրանց տնտեսականներին ենք վերագրում.

Գործաթողների թիվը հազարներով.

| Տարիներ՝ | 1905 | | | | 1906 | | | | 1907 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յեռամսյակներ | I | II | III | IV | I | II | III | IV | I | II | III | IV |
| Բոլորը | 810 | 481 | 294 | 1277 | 269 | 479 | 296 | 63 | 146 | 323 | 77 | 193 |
| Դրանց թվում՝ | | | | | | | | | | | | |
| ա. Տնտեսական | 604 | 239 | 165 | 430 | 73 | 222 | 125 | 37 | 52 | 52 | 66 | 30 |
| բ. Քաղաքական | 206 | 242 | 129 | 847 | 196 | 257 | 171 | 26 | 94 | 271 | 11 | 163 |
| | * | | | * | | * | | | | * | | * |

Վարի կողմից * նշանն ունեն այն շրջանները, վորոնք ցույց են տալիս ալիքի ամենամեծ բարձրացումը: Արդեն ադյուսակի վրա առաջին հայացք ձգելիս աչքի յե զարնում այն, վոր այդ շրջանները զուգադիպում են ամբողջ յեռամյակը բնորոշող հիմնական կարևորություն ունեցող քաղաքական դեպքերին: 1905 I—հունվարի ինը և նրա հետևանքները. 1905 IV—հոկտեմբերյան և դեկտեմբերյան անցքերը. 1906 II—առաջին Դուման. 1907 II—յերկրորդ Դուման. 1907 թ. վերջին քառորդում բարձրացումն ամենափոքրն է, վոր բացատրվում է յերկրորդ Դումայի բանվոր պատգամավորների դատի առթիվ, նոյեմբերի քաղաքական գործադուլով (134 հազար գործաթող): Այսպիսով այդ շրջանը, վոր ավարտում է յեռամյակը և անցումն է հանդիսանում դեպի ռուսաց պատմության մի այլ շերտ, հենց այնպիսի բացառություն է, վոր հաստատում է կանոնը. յեթե գործադուլային ալիքի բարձրացումն այստեղ չի նշանակում ընդհանուր սոցիալ-քաղաքական բարձրացում, ապա մոտիկ քննությունը ցույց է տալիս, վոր չկար նաև գործադուլային ալիք, այլ միայն կար առանձին գործադուլ-դեմոնստրացիա:

Ուսումնասիրվող յեռամյակի համար կանոն է հանդիսանում այն, վոր գործադուլային ալիքի բարձրացումը ցույց է տալիս յերկրի ամբողջ սոցիալ-քաղաքական եվոլյուցիայի կրիտիկական դարձակետերը: Գործադուլների վիճակագրությունն ակնհայտ ցույց է տալիս մեզ այդ

եվոլյուցիայի գլխավոր շարժիչ ուժը։ Այդ չի նշանակում, իհարկե, թե
քննվող շարժման ձևը միակը կամ բարձրագույնն էր,— մենք գիտենք,
վոր այդ այդպես չէ,— այդ չի նշանակում, թե կարելի յե շարժման
տվյալ ձևից անմիջական յեզրակացություններ անել սոցիալ-քաղաքա-
կան եվոլյուցիայի մասնավոր հարցերի վերաբերմամբ։ Բայց այդ նշա-
նակում է, վոր մեր առաջ ունենք վիճակագրական պատկերն (իհարկե,
բոլորովին վոչ-լրիվ պատկերը) այնպիսի մի դասակարգի շարժման,
վորն անցքերի ընդհանուր ուղղության գլխավոր զսպանակն էր։ Մյուս
դասակարգերի շարժումը խմբավորվում է այդ կենտրոնի շուրջը, նրան
է հետևում, նրանից է ուղղություն ստանում (դեպի դրական կամ
բացասական կողմ), նրանով վորոշվում, նրանից է կախված։
Բավական է վերհիշել Ռուսաստանի քաղաքական պատմության
գլխավոր մոմենտները քննվող յեռամյակում, վորպեսզի համոզվենք այս
ճշտության մեջ։ Վերցնենք 1905 թ. առաջին քա-
յեզրակացության ճշտության մեջ։ Վերցնենք 1905 թ. առաջին քա-
ռորդը։ Ի՞նչ է ցույց տալիս մեզ նրա նախօրյակը։—Նշանավոր դեմ-
ստվային-բանկետային կամպանիա։ Արդյոք ճի՞շտ կլիներ բանվորների
յելույթն այդ կամպանիայում գնահատել իբրև «դեմոնստրացիայի
բարձրագույն տիպ»։ Արդյոք ճի՞շտ եյին լիբերալների մեջ «պանիկա»
չառաջացնելուն վերաբերող ճառերը։ Այդ հարցերը դրեք գործադուլների
վիճակագրության շրջանակի մեջ (1903 թ.—87 հազար, 1904—25 հա-
զար, 1905 թ. հունվարին—444 հազար, վորոնց թվում 13 հազարը քա-
ղաքական), և պատասխանը պարզ կլինի։ Զեմստվային կամպանիայի
տակտիկայի վերաբերող վերոհիշյալ վեճը միայն արտացոլում է լիբե-
րալ և բանվորական շարժման ոբյեկտիվ պայմաններում արմատացած
հակադրությունը։
Ի՞նչ ենք տեսնում մենք հունվարի* բարձրացումից հետո։ Փե-
տրվարյան նշանավոր հրամանագրերը, վորոնք սկիզբ դրին պետական
կազմի վորոշ վերափոխության։
Վերցրեք 1905 թ. 3-րդ յեռամյակը։ Քաղաքական պատմության
առաջին պլանում է օգոստոսի 6-ի օրենքը (այսպես կոչված բուլիգի-
նյան Դուման)։ Արդյոք վիճակված եր այդ օրենքին կենսագործվել։ Լի-
բերալները կարծում են, թե այո, և վորոշում են իրենց վարքագիծն
առաջ տանել համապատասխան այդ կարծիքի։ Մարքսիստների բանա-
կում հակառակ կարծիքին են, վոր չեն ընդունում նրանք, ովքեր ոբյեկ-
տիվորեն լիբերալիզմի հայացքներն են անցկացնում։ 1905 թ. վերջին

* Ըստ տարվա քառորդի տվյալների դուրս է գալիս, վոր մեկ բարձրացում
եր յեղել։ Իրոք բարձրացումը յերկուսն եր՝ հունվարին—444 հազար գործադուլ
յեվ մայիսին—222 հազար։ Դրանց միջև ժամանակաշրջանում մինիմումն ընկնում
է մարտին—75 հազար։



քառորդի անցքերը լուծում են վեճը։ Տարվա ամբողջ քառորդին վերա-
բերող թվերի համաձայն, թվում է, վոր 1905 թ. վերջին մեկ բար-
ձրացում է յեղել։ Իրոք բարձրացումը յերկուսն է, վորոնք իրարից
բաժանված են շարժման փոքրիկ թուլացումով։ Հոկտեմբերին կար 519
հազար գործադուլ, վորոնց թվում 328 հազարը զուտ քաղաքական,
նոյեմբերին 325 հազար (վորոնց թվում 147 հազար քաղաքական) և
դեկտեմբերին 433 հազար (վորոնց թվում 372 հազարը քաղաքական)։
Պատմական գրականության մեջ արտահայտված է լիբերալների և մեր
լիկվիդատորների (Չերևանին և ընկ.) հայացքը, վորի համաձայն դեկ-
տեմբերի բարձրացման մեջ «արվեստականության» տարր կա։ Վիճա-
կագրությունը հերքում է այդ հայացքը, ցույց տալով հենց այդ ամ-
սում զուտ-քաղաքական գործադուլների մաքսիմում թիվ—372 հազար։
Հասկանալի յեն այն տենդենցները, վորոնք հարկադրել են լիբերալնե-
րին վորոշ գնահատման հանգել, բայց զուտ-գիտական տեսակետից ան-
հեթեթ է վորևե չափով «արվեստական» համարել այնպիսի չափի մի
շարժում, յերբ մեկ ամսում զուտ-քաղաքական գործադուլների թիվը
կազմում եր ամբողջ մեկ տասնամյակի գործադուլների թվի համարյա $^{9}/_{10}$։
Վերջապես վերցնենք 1906 և 1907 թ.թ. գարնան յերկու վերջին
բարձրացումները *։ Նրանց ընդհանուր տարբերությունը 1905թ. հուն-
վարյան և մայիսյան բարձրացումներից (վորոնցից առաջինը նույնպես
ավելի ուժեղ եր յերկրորդից) այն է, վոր նրանք նահանջի գծով են
ընթանում, մինչդեռ առաջին յերկուսը հարձակման գծով եյին ընթա-
նում։ Այս տարբերությունը բնութագրում է ընդհանուր առմամբ քննվող
յեռամյակի յերկու վերջին տարիները, յեթե համեմատելու լինենք այն
յեռամյակի առաջին տարվա հետ։ Հետևաբար 1906 և 1907 թ. թ.
մասնանշած շրջանում թվերի բարձրացման ճշգրիտ գնահատությունը
այն կլինի, վոր այդ բարձրացումները նշում են նահանջի կանգ առնելը
և նահանջողների փորձը նորից հարձակման դիմելու։ Այսպես է այդ
բարձրացումների ոբյեկտիվ նշանակությունը, վոր մեզ համար պարզ է
այժմ ամբողջ «փոթորկի և գրոհի յեռամյակի» վերջնական հետևանքների
տեսակետից։ Առաջին և յերկրորդ Դումաներն այլ բան չեն, բայց

*Պետք է նկատել, վոր 1895—1904թ.թ. ռուսական գործադուլների տաս-
նամյա պատմությունը յերեվան բերեց տնտեսական գործադուլների սովորական
բարձրացում տարվա 2-րդ քառորդում։ Ամբողջ տասնամյակում գործադուլների
միջին թիվը տարեկան 45 հազար եր, իսկ ըստ տարվա քառորդների՝ I—10 հազար,
II—15 հազար, III—12 հազար, IV—6 հազար։ Թվերի համեմատությունից ե-
նակ բոլորովին ակնհայտնի յե, վոր 1906 յեվ 1907 թ.թ. գարնան բարձրացում-
ները չեն բացատրվում Ռուսաստանի գործադուլների ամռան բարձրացման «ընդհա-
նուր» պատճառներով։ Բավական է միայն քաղաքական գործադուլների թվին նայել։

յեթե քաղաքական դեմոնստրացիաներ վերևում՝ ներքևում նահանջի կանգ առնելու առթիվ:

Այստեղից պարզ է լիբերալների վողջ կարճատեսությունը, վորոնք այդ բանակցությունների մեջ ինչ-վոր ինքնամփոփ, ինքնուրույն բան եյին տեսնում, անկախ նրանից, թե արդյոք յերկա՞ր կտևի և դեպի ու՞ր կտանի նահանջի այս կամ այն դադարը: Այստեղից պարզ է օբյեկտիվ կախումը լիբերալներից, վոր ունեն այն լիկվիդատորները, վորոնք, Մարտովի նման, այժմ արհամարհանքով են խոսում «ռոմանտիկների սպասումների» մասին նահանջի ժամանակ: Վիճակագրությունը մեզ ցույց է տալիս, վոր գործը վերաբերում եր վոչ թե «ռոմանտիկների սպասումներին», այլ փաստապես տեղի ունեցած նահանջի ընդհատումներին, դադարներին: Յեթե չլինեյին այդ դադարները, 1907 թ. հունիսի 3-ի դեպքը, վոր պատմականորեն բոլորովին անխուսափելի յեր, ինչ չափով վոր նահանջները նահանջներ եյին մնում, կկատարվեր գուցե մի ամբողջ տարի առաջ կամ նույնիսկ ավելի քան մի տարի առաջ:

Քննության առնելով գործադուլային շարժման պատմությունը քաղաքական պատմության գլխավոր մոմենտների հետ կապակցած, անցնենք տնտեսական և քաղաքական գործադուլների փոխհարաբերության ուսումնասիրությանը: Պաշտոնական վիճակագրությունն այս հարցին վերաբերող խիստ հետաքրքիր տվյալներ է տալիս: Նախ վերցընենք քննվող յեռամյակի առանձին տարիներին վերաբերող ընդհանուր գումարները:

Գործաթողների թիվը հազարներով.

| | 1905 | 1906 | 1907 |
|---|---|---|---|
| Տնտեսական . . . . . | 1,439 | 456 | 200 |
| Քաղաքական . . . . | 1,424 | 652 | 540 |
| Բոլորը . . | 2,863 | 1,108 | 740 |

Այստեղից առաջին յեզրակացությունն այն է, վոր տնտեսական և քաղաքական գործադուլներն ամենասերտ կապով կապված են: Նրանք միասին բարձրանում և միասին ընկնում են: Հարձակման շրջանում (1905 թ.) շարժման ուժը նրանով է բնորոշվում, վոր քաղաքական գործադուլները կարծես թե կառուցվում են վոչ պակաս ուժեղ տնտեսական գործադուլների լայն բազայի վրա, գործադուլներ, վորոնք, նույնիսկ առանձին վերցրած, խիստ գերազանցում են 1895—1904 թթ. վողջ տասնամյակի թվերը:

Շարժման անկման ժամանակ տնտեսական գործաթողների թիվը ավելի արագ է ընկնում պակասում, քան քաղաքականների թիվը: 1906 և հատկապես 1907 թ.թ. շարժման թուլությունն անպայման բնորոշվում է տնտեսական կռվի լայն և հաստատուն բազայի բացակայությամբ:



Մյուս կողմից քաղաքական գործաթողների թվի ավելի դանդաղ պակասումն ընդհանրապես և հատկապես այդ թվի փոքրիկ պակասումը 1906-ից 1907 թ., ըստ յերևույթին, մեզ արդեն ծանոթ յերևույթն է մատնանշում՝ առաջավոր շերտերն ամենամեծ յեռանդով աշխատում են կանգնեցնել նահանջը և այն հարձակման փոխել:

Այս յեզրակացությունը լրիվին հաստատվում է արտադրության զանազան խմբերի տնտեսական և քաղաքական գործադուլների փոխհարաբերության տվյալներով: Վորպեսզի հոդվածը չնախշենք թվանշաններով, սահմանափակվենք ըստ 1905թ. քառորդների մետալլիստների և մանածագործների համեմատությամբ, ընդսմին այս անգամ վերցնենք պաշտոնական վիճակագրության ամփոփումները *), վորտեղ այդ տարվա խառն գործադուլները քաղաքականների մեջ են հաշված, ինչպես արդեն վերը մատնանշված է.

Գործաթողների թիվը հազարներով.

| | 1905թ. քառորդները՝ | I | II | III | IV |
|---|---|---|---|---|---|
| Ա. խումբ (մետալլիստներ) | Տնտեսական . . . | 120 | 42 | 37 | 31 |
| | Քաղաքական . . . | 159 | 76 | 63 | 283 |
| | Բոլորը | 279 | 118 | 100 | 314 |
| Բ. խումբ (մանածագործներ) | Տնտեսական . . . | 196 | 109 | 72 | 182 |
| | Քաղաքական . . . | 111 | 154 | 53 | 418 |
| | Բոլորը | 307 | 263 | 125 | 600 |

Առաջավոր շերտի և լայն մասսայի միջի զանազանությունը յերևան է գալիս պարզորոշ կերպով: Հենց սկզբում առաջավորների մոտ զուտ-տնտեսական գործաթողները փոքրամասնություն են, ինչպես նաև ամբողջ տարվա ընթացքում: Այս խմբում էլ առաջի քառորդը բնորոշվում է, սակայն, զուտ-տնտեսական գործաթողների շատ բարձր թվով (120 հազար)· պարզ է, վոր մետալլիստների մեջ էլ քիչ չեն այն շերտերը, վորոնց հարկավոր է «թափահարել», և վորոնք շարժումն սկսեցին զուտ-տնտեսական պահանջներ ներկայացնելով: Մանածագործների մոտ շարժման սկզբում (I քառորդ) տեսնում ենք զուտ-տնտեսական գործաթողների հսկայական գերակշռություն, վորոնք փոքրամասնություն են դառնում տարվա II քառորդում, վորպեսզի կրկին մեծամասնություն դառնան III քառորդում: Տարվա վերջին քառորդում, շարժման գագաթնակետին հասած ժամանակ մետալլիստների զուտ-տնտեսական գործաթողների թիվը հավասարվում է գործաթողների ընդհանուր թվի

*) Համաձայն այս ամփոփման 1905թ. տնտեսական գործաթողների թիվը 1,021 հազար եր, քաղաքականներինը՝ 1,842 հազար, այսինքն տնտեսական գործաթողների բաժինն ընդհանուր գումարում ավելի փոքր եր, քան 1906թ.: Մենք արդեն բացատրեցինք, վոր այդ ճիշտ չե:

$10^{0}/_{0}$-ին և մետալլիստների ամբողջ թվի $12^{0}/_{0}$-ին։ Մանածագործների զուտ-տնտեսական գործաթողները միևնույն շրջանում կազմում են գործաթողների ընդհանուր թվի $30^{0}/_{0}$-ը և մանածագործների ամբողջ թվի $25^{0}/_{0}$-ը։

Այժմ բոլորովին ակնհայտ է, թե ինչպիսի յե տնտեսական և քաղաքական գործադուլի փոխադարձ կախումը. առանց նրանց սերտ կապի իրոք լայն, իրոք մասսայական շարժում անկարելի յե։

Իսկ այդ կապի կոնկրետ ձևը մի կողմից հանդիսանում է այն, վոր շարժման սկզբում և շարժման մեջ նոր շերտերի գրավման ժամանակ զուտ-տնտեսական գործադուլը գերակշռող դեր է խաղում, իսկ մյուս կողմից քաղաքական գործադուլն արթնացնում և շարժում է հետամնացներին, ընդհանրացնում և ընդլայնում է շարժումը, հասցնում նրան բարձրագույն աստիճանին։

Զափազանց հետաքրքիր կլիներ մանրամասն հետևել, թե ինչպես ամբողջ յեռամյակի ընթացքում շարժման մեջ եյին քաշվում սկսնակները։ Սրան վերաբերող տվյալներ հիմնական նյութի մեջ կան, վորովհետև տեղեկություններն ստացվում եյին թերթիկներով ամեն մի գործադուլի մասին առանձին-առանձին։ Բայց այդ տեղեկությունների մշակումը պաշտոնական վիճակագրության մեջ շատ անբավարար է, և թերթիկներում յեղած խիստ հարուստ նյութի մեծ մասը կորել է՝ մշակման մեջ չմտնելով։ Վորոշ մոտավոր պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը տոկոսներով գործադուլի դեպքերի թվի մասին, զանազան չափի գործատների թվի համեմատությամբ.—

Գործադուլների թվի դեպքերը $^{0}/_{0}{}^{0}/_{0}$-ով գործատների թվի համեմատությամբ։

| Գործատների խմբերը | 10 տարվա ընթացքում (1895-1904) միասին | 1905 թ. | 1906 թ. | 1907 թ. | 1908 թ. |
|---|---|---|---|---|---|
| Մինչև 20 բանվոր | 2,7 | 40,0 | 18,5 | 6,0 | 1,0 |
| 21-50 . » | 7,5 | 89,4 | 38,8 | 19,0 | 4,1 |
| 51-100 . » | 9,4 | 108,9 | 56,1 | 37,7 | 8,0 |
| 101-500 » | 21,5 | 160,2 | 79,2 | 57,5 | 16,9 |
| 501-1000 » | 49,9 | 163,8 | 95,1 | 61,5 | 13,0 |
| 1000 բանվ. վեր | 89,7 | 291,9 | 108,8 | 83,7 | 23,0 |

Այն առաջավոր շերտը, վոր դիտում եյին մինչև այժմ ըստ զանազան ռայոնների և զանազան խմբերի արտադրությունների տվյալների, այժմ հանդես է գալիս ըստ զանազան խմբերի գործատների տվյալների։



Բոլոր տարիների համար ընդհանուր կանոն է հանդիսանում գործադուլին մասնակցող գործատների տոկոսի բարձրացումը գործատների չափի մեծացման հետ միասին։ Ընդսմին 1905 թ. համար բնորոշ է, առաջին, այն, վոր կրկնվող գործադուլներն այնքան ավելի շատ են, ինչքան խոշոր է գործատունը, և յերկրորդ, վոր յերբ համեմատում ենք 1895—1904 թ.թ. տասնամյակը 1905 թ. հետ, տոկոսի մեծացումն այնքան ավելի սրընթաց է, ինչքան ավելի մանր են գործատները։ Դա պարզ ցույց է տալիս սկսնակների ներս քաշելու հատուկ արագությունը, գործադուլներին դեռ յերբեք չմասնակցած շերտերի գրավումը։ Մաքսիմալ բարձրացման շրջանում արագորեն շարժման մեջ քաշված այդ սկսնակները հանդիսանում են ամենից քիչ տոկունը՝ 1906 և 1907 թ. թ. գործադուլին մասնակցող գործատների տոկոսի նվազումն ամենից ավելի ուժեղ է մանր գործատներում, ամենից ավելի թույլ է խոշորներում։ Ավանգարդն ամենից ավելի յերկար, ամենից ավելի հաստատակամությամբ է ձգնում կանգնեցնել նահանջը։

Բայց դառնանք տնտեսական և քաղաքական գործադուլների փոխհարաբերության տվյալներին։ Վերը բերած ամբողջ յեռամյակի տարիների քառորդներին վերաբերող տվյալները ցույց են տալիս ամենից առաջ, վոր բոլոր խոշոր բարձրացումները կապված են վոչ միայն քաղաքական, այլև տնտեսական գործաթողների թվի բարձրացման հետ։ Վորոշ բացառություն է կազմում միայն 1907 թ. գարնան բարձրացումը, յերբ տնտեսական գործաթողների մաքսիմումն ընկնում է վոչ թե տարվա II, այլ III քառորդին։

Շարժման սկզբում (1905 թ. I քառորդ) մենք տեսնում ենք տնտեսական գործաթողների թվի հսկա գերակշռությունը քաղաքականների հանդեպ (604 և 206 հազար)։ Շարժման գագաթնակետը (1905 թ. IV քառորդը) տալիս է տնտեսական գործադուլների նոր ալիք, ավելի թույլ, քան հունվարյանը, քաղաքական գործադուլի ուժեղ գերակշռումով։ Յերրորդ բարձրացումը, 1906 թ. գարնանը, նորից ցույց է տալիս և՛ տնտեսական և՛ քաղաքական գործաթողների թվի շատ խոշոր մեծացումը։ Արդեն մենակ այս տվյալները բավական են հերքելու այն կարծիքը, վոր իբր տնտեսական և քաղաքական գործադուլի միացումը «շարժման թույլ կողմն» էր։ Այսպիսի կարծիք բազմիցս արտահայտել են լիբերալները, այն կրկնել է 1905 թ. նոյեմբերի վերաբերմամբ լիկվիդատոր Չերևանինը. վերջերս այն կրկնում էր միևնույն դարաշրջանի վերաբերմամբ նաև Մարտովը։ Հատկապես հաճախ այդպիսի հայացքը հաստատելու համար վկայության են կանչում 8-ժամյա բանվորական որվա կռվի անհաջողությունը։

Այս անհաջողության փաստն անվիճելի յե, անվիճելի յե նաև այն, վոր ամեն մի անհաջողություն նշանակում է շարժման թուլություն,

բայց լիբերալ տեսակետը հայտնաբերվում է նրանով, վոր ընդունվում է, թե «շարժման թույլ կողմը» հենց տնտեսական պայքարի միացումն է քաղաքականի հետ. մարքսիստական տեսակետը տեսնում է թուլությունն այդ միացման անբավարարության մեջ, տնտեսական գործաթողների վոչ բավականաչափ խոշոր թվի մեջ:

Վիճակագրությունն ակնառու հաստատում է մարքսիստական հայացքի ճշտությունը, հայտնաբերելով յեռամյակի «ընդհանուր օրենքը»՝ շարժման ուժեղացումը տնտեսական կռվի ուժեղացման ժամանակ: Ցույց այս «ընդհանուր օրենքը» տրամաբանորեն կապվում է ամեն մի կապիտալիստական հասարակության հիմնական գծերին—նրա մեջ միշտ գոյություն կունենան այնքան հետամնաց շերտեր, վորոնց միայն շարժման ամենասրտակարգ սրումը կարող է արթնացնել. իսկ բացի տնտեսական պահանջներից, այլ կերպ հետամնաց շերտերը չեն կարող կռվի մեջ քաշվել:

1905 թ. վերջին քառորդի բարձրացումը համեմատության դնելով նախորդ և հաջորդ բարձրացումների հետ, այսինքն 1905 թ. առաջին քառորդի և 1906 թ. յերկրորդ քառորդի հետ, մենք պարզ տեսնում ենք, վոր հոկտեմբեր-դեկտեմբերյան բարձրացումը **ավելի թույլ** է թե նախորդից և թե հաջորդից ըստ տնտեսական բաղայի լայնության, այսինքն ըստ տնտեսական գործաթողների թվի տոկոսի գործաթողների ընդհանուր թվի վերաբերմամբ: Անկասկած է, վոր 8-ժամյա բանվորական օրվա պահանջը խրտնեցնում էր բուրժուազիայի շատ այնպիսի տարրերի, վորոնք կարող էյին համակրել բանվորների մյուս ձգտումներին: Բայց նույնպես անկասկած է, վոր այդ պահանջը գրավում էր վոչ-բուրժուական շատ այնպիսի տարրերի, վորոնք դեռևս շարժման մեջ չէյին քաշված, վորոնք 430 հազար տնտեսական գործաթող դուրս բերելով 1905 թ. վերջին քառորդում, այդ թիվը 1906 թ. I քառորդում նվազեցրին մինչև 73 հազար և նորից բարձրացրին մինչև 222 հազար 1906 թ. II-րդ քառորդում: Նշանակում է թուլությունը վոչ թե բուրժուազիայի համակրանքի բացակայությունն էր, այլ վոչ-բուրժուական տարրերի վոչ բավականաչափ կամ վոչ բավականաչափ յուրաժամանակ պաշտպանությունը:

Լիբերալին հատուկ է այն վախը, թե քննվող ձևի շարժումը միշտ դեն է հրում բուրժուազիայի վորոշ տարրերին: Մարքսիստին հատուկ է նշել այն, թե քննվող ձևի շարժումը միշտ գրավում է վոչ-բուրժուական լայն տարրերին: Suum cuique—ամեն մեկին իրենը:

Բանվորների և ձեռնարկուների կռվի յելքերի հարցի առթիվ չափազանց ուսանելի յեն պաշտոնական վիճակագրության տվյալները գործադուլների հետևանքների մասին: Այդ վիճակագրության ընդհանուր գումարները սրանք են.—



Գործաթողների թվի տոկոսը գործարաններում մասնանշած հետևանքներով:

| Գործադուլների հետևանքները... | 10 տարում (1895-1901). | 1905 թ. | 1906 թ. | 1907 թ. | 1903 թ. |
|---|---|---|---|---|---|
| Հօգուտ բանվորների. . . | 27,1 | 23,7 | 35,4 | 16,2 | 14,1 |
| Փոխադարձ զիջումներ (կոմպրոմիսներ) . . | 19,5 | 46,9 | 31,1 | 26,1 | 17,6 |
| Հօգուտ տնտեսատերերի (բանվորների դեմ) . . | 51,6 | 29,4 | 33,5 | 57,6 | 65,8 |

Այստեղից ընդհանուր յեզրակացությունն ամենից առաջ այն է, վոր շարժման մաքսիմալ ուժը նշանակում է նաև բանվորների մաքսիմալ հաջողությունը: Ամենից ոգտավետ էր նրանց համար 1905թ., յերբ գործադուլային շարժման կռվի գրոհը ամենամեծն էր: Այդ տարին աչքի յե ընկնում նաև կոմպրոմիսների անսովոր հաճախակիությամբ՝ կողմերը դեռ չեն հարմարվել նոր, անսովոր պայմաններին, ձեռնարկուները շփոթվել են գործադուլների հաճախակիության ազդեցության տակ, և գործն ավելի հաճախ, քան յերբևիցե կոմպրոմիսով էր վերջանում: 1906 թ. կռիվն ավելի համառ է դառնում՝ կոմպրոմիսի դեպքերն անհամեմատ սակավ են. բայց ընդհանրապես բանվորները դեռևս հաղթում են: Հաղթած գործաթողների տոկոսը բարձր է, քան հաղթվածների տոկոսը: 1907 թ. սկսած բանվորների պարտությունններն անընդհատ ուժեղանում են կոմպրոմիսի դեպքերի նվազման հետ միասին:

Յեթե վերցնենք բացարձակ թվերը, ապա կտեսնենք, վոր ընդհանուր գումարով տաս տարում, 1895—1904, 117 հազար բանվոր է շահել գործադուլը, իսկ մենակ 1905 թ. ավելի քան յերեք անգամ շատ՝ 369 հազար, 1906 թ. մեկ ու կես անգամ ավելի՝ 163 հազար:

Բայց տարին չափազանց մեծ շրջան է 1905-1907 թ. թ. յեռամյակի գործադուլային կռվի ալիքաձև շարժումն ուսումնասիրելու համար: Զբերելով ամսական տվյալները, վորոնք չափազանց շատ տեղ կբռնեյին, բերենք 1905 և 1906 թ. թ. վերաբերող տվյալներն ըստ տարվա քառորդների: 1907 թ. կարելի յե բաց թողնել, վորովհետև ըստ գործադուլների հետևանքների այդ տարում չենք նկատում ընդհատումներ, անկումներ և բարձրացումներ, այլ տեսնում ենք բանվորների ամբողջական նահանջը և կապիտալիստների հարձակումը, վոր լիովին արտահայտված էր արդեն բերած տարեկան տվյալներում:

| Տարիներ՝ | 1905 | | | | 1906 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գործադուլի հետևանքները | | | | | | | | |
| Տարվա քառորդները. | I | II | III | IV | I | II | III | IV |
| Հօգուտ բանվորների . . . | 158 | 71 | 45 | 95 | 34 | 86 | 37 | 6 |
| Կոմպրոմիսս . . . . . . . | 267 | 109 | 61 | 235 | 28 | 58 | 46 | 8 |
| Հօգուտ տնտեսատերերի . . | 179 | 59 | 59 | 100 | 11 | 78 | 42 | 23 |
| Բոլորը * | 604 | 232 | 165 | 430 | 73 | 222 | 125 | 37 |

Այս տվյալներից բղխում են շատ հետաքրքրական յեզրակացություններ, վորոնք մանրամասն քննություն են պահանջում։ Մենք տեսանք, վոր ընդհանուր առմամբ կռիվն այնքան ավելի հաջող է բանվորների համար, ինչքան ավելի ուժեղ է նրանց գրոհը։ Արդյոք այդ հաստատվում է բերած տվյալներով։ 1905 թ. I քառորդը բանվորների համար ավելի քիչ օգտավետ է, քան II, չնայած շարժումն այդ շրջանում թուլացել էր։ Այս յեզրակացությունը, սակայն, սխալ է դուրս գալիս, վորովհետև յեռամսյա տվյալները միացնում են հունվարյան բարձրացումը (321 հազար տնտեսական գործաթողներ) և անկումը՝ փետրվարին (228 հազար) ու մարտին (56 հազար)։ Անջատելով բարձրացման ամիսը, հունվարը, տեսնում ենք, վոր այդ ամսում բանվորները հաղթել են՝ 87 հազար գործաթողներ շահել են գործադուլը, 81 հազար տանուլ տվել, 152 հազար կոմպրոմիսով վերջացրել։ Այս շրջանի անկման յերկու ամիսը (փետրվարը և մարտը) պարտություն են բերում բանվորներին։ Յերկրորդ շրջանը (1905 թ. II քառորդը) բարձրացման շրջան է, վոր իր գագաթնակետին է հասնում մայիսին։ Կռվի բարձրացումը նշանակում է բանվորների հաղթություն՝ 71 հազար գործաթող շահել են գործադուլը, 59 տանուլ տվել, 109 հազարը կոմպրոմիսով վերջացրել։ Յերրորդ շրջանը (1905 թ. III քառորդը) անկման շրջան է՝ գործաթողների թիվն ավելի քիչ է, քան II քառորդում։ Գրոհի անկումը նշանակում է տնտեսատերերի հաղթություն։ 59 հազար բանվոր տանուլ են տվել գործադուլը, միայն 45 հազարն են շահել։ Գործադուլը տանուլ տվող բանվորների տոկոսը հավասար է 35,6 ի, այսինքն **ավելի բարձր է, քան 1906 թվին։** Այդ նշանակում է, վոր 1905 թ. այն «համակրանքի ընդհանուր մթնոլորտը» դեպի բանվորները, վորի մասին այնքան շատ խոսում են լիբերալները իբրև բանվորների հաղթանակի գլխավոր պատճառ (վերջերս «գլխավոր պատճառի»--բուրժուազիայի համակրանքի—մասին խոսեց և Մարտովը),——ամենևին չխանգարեց, վոր բանվորները պարտվեն, **յերբ նրանց**

*) Պաշտոնական վիճակագրության մեջ տվյալ հարցի մասին ամսական գումարներ չկան, ստիպված այն կազմել ենք արտադրության վերաբերող տվյալներից։



**գրոհը թուլացավ**։ Դուք ուժեղ եք, յերբ հասարակությունը ձեզ համակրում է,—ասում են բանվորներին լիբերալները։ Ձեզ համակրում են հասարակության մեջ, յերբ դուք ուժեղ եք,—ասում են բանվորներին մարքսիստները։ 1905 թ. վերջին քառորդը բացառություն է թվում՝ ամենից մեծ բարձրացման ժամանակ բանվորները պարտվում են։ Բայց այդ բացառությունն առերևույթ է, վորովհետև միացած են բարձրացման ամիսը—հոկտեմբերը, յերբ բանվորները հաղթեցին նաև տնտեսական ասպարեզում (57 հազար բանվոր շահել են գործադուլը, 22 հազար տանուլ տվել), և նոյեմբեր (25 հազար շահել, 47 հազար տանուլ տվել) ու դեկտեմբեր (12 հազար շահել, 31 հազար տանուլ տվել) ամիսները, յերբ տնտեսական կռիվը թուլանում էր, և յերբ բանվորները պարտվեցին։ Ընդամին նոյեմբեր ամիսը բեկման ամիս է, ամենամեծ տատանումների, հակադիր ուժերի ամենամեծ հավասարակշռության, ընդհանրապես Ռուսաստանի պատմության ընդհանուր հետևանքների և ընդհանուր ուղղության, մասնավորապես գործատերերի դեպի բանվորներն ունեցած հարաբերությունների պատմության վերաբերմամբ ամենամեծ անհայտության ամիս. այդ ամիսը 1905 թ. բոլոր ամիսներից կոմպրոմիսի դեպքերի **ամենամեծ** տոկոսն է տալիս՝ 179 հազար տնտեսական գործաթողներից այդ ամսում 106 հազարը, այսինքն գործաթողների 59,2%-ը կռիվը կոմպրոմիսով վերջացրեց *։

1906 թ. I քառորդը նորից տալիս է առերևույթ բացառություն՝ տնտեսական կռվի ամենամեծ անկում և բանվորների ամենամեծ շահելը (34 հազարը շահում են, 11 հազարը տանուլ տալիս)։ Այստեղ էլ միացրած են բանվորների պարտության ամիսը, հունվարը (4 հազարը շահած, 6 հազարը տանուլ տված) և բանվորների հաղթության ամիսները՝ փետրվարը (14 հազարը շահած և 2 հազարը տանուլ տված) ու մարտը (16 հազարը շահած, $2^1/_2$ հազարը տանուլ տված)։ Տնտեսական գործաթողների թիվն այդ ամբողջ շրջանի ընթացքում նվազում է (հունվար—26,6 հազար, փետրվար—23,3 հազար, մարտ--23,2 հազար), բայց ընդհանուր շարժման բարձրացումն արդեն պարզ գծագրվում է (հունվարին գործաթողների ամբողջ թիվը 190 հազար է, փետրվարին—27 հազար, մարտին--52 հազար)։

1906 թ. II քառորդը շարժման խոշոր բարձրացման և բանվորների շահելու շրջանն է ( 86 հազարը շահել են, 78 հազարը տանուլ տվել). այս շարժումը հատկապես ուժեղ է մայիսին և հունիսին.—հունիսին տնտեսական գործաթողների թիվը հասնում է 1906 թ. մաքսի-

*) Տնտեսական գործաթողների ընդհանուր թիվը հոկտեմբերին 190 հազար էր, նոյեմբերին՝ 179 հազար, դեկտեմբերին՝ 61 հազար։

մումին, 90 հազարի.—մինչդեռ ապրիլը բացառություն է կազմում՝ բանվորների պարտություն, չնայած շարժումը մարտի համեմատությամբ աճել էր:

Սկսած 1906 թ. III քառորդից մենք տեսնում ենք ընդհանուր առմամբ տնտեսական կռվի ընդհանուր անկում մինչև տարվա վերջը և դրան համապատասխան բանվորների պարտություն (չնչին բացառություն է 1906 թ. օգոստոսը, երբ բանվորները վերջին անգամ տնտեսական կռվի մեջ հաղթանակեցին՝ 11,3 հազար շահած, 10,3 հազար տանուլ տված):

Վորպեսզի 1905 և 1906 թ. թ. տնտեսական կռվի ելևէջների համառոտ գումարները հանենք, կարելի է այսպիսի ելղանակ գործադրել: 1905 թ. պարզ կերպով աչքի են ընկնում գործադուլային կռվի երեք գլխավոր բարձրացումը ընդհանրապես և տնտեսականինը մասնավորապես՝ հունվար, մայիս և հոկտեմբեր ամիսներին: Այդ երեք ամսում միայն տնտեսական գործաթողների թիվը 667 հազար էր, տարվա 1,439 հազարի ամբողջ թվից, այսինքն վոչ թե քառորդն էր, այլ կեսին մոտ: Ցեվ այդ բոլոր երեք ամիսը տնտեսական ասպարեզում բանվորների հաղթության ամիսներ եյին, այսինքն գործադուլը շահած բանվորների թվի գերակշռության գործադուլը տանուլ տված բանվորների թվի հանդեպ:

1906 թ. հայտնաբար ջոկվում են ընդհանուր առմամբ տարվա առաջին և յերկրորդ կեսը: Առաջինում նահանջի դադարը և մեծ բարձրացում, յերկրորդում—մեծ անկում: Տարվա առաջին կեսին ընկնում է 295 հազար տնտեսական գործաթող, յերկրորդին—162: Առաջին կեսը տնտեսական կռվում բանվորներին հաղթանակ տվեց, յերկրորդը—պարտություն:

Այս ընդհանուր գումարները լիովին հաստատում են այն յեզրակացությունը, վոր վոչ թե «համակրանքի մթնոլորտը», վոչ թե բուրժուազիայի սիմպատիաները, այլ գրոհի ուժն է, վոր տնտեսական կռվում ևս խաղում է վճռական դեր:

Гос. Публ. Библиотека
ՀԱՅՍՍ-ССР

# ՑԱՆԿ

Եջ

ԶԵԿՈՒՑՈՒՄ

Ժամանակավոր Հեղափոխական Կառավարության մեջ ս.-դ. մասնակցության հարցի մասին . . . . . 3

Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները 17

Հեղափոխության առաջին հաղթանակը . . . 24

Կառավարության քաղաքականությունը և ապագա կռիվը 31

Ծանոթություններ . . . . . . 35

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՌՎԻ ՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ 43

Ծանոթություններ

1. Մանիֆեստ բանակին և նավատորմին . . . 61
2. Մանիֆեստ Ռուսաստանի ամբողջ գյուղացիությանը 63
3. Ամբողջ ժողովրդին . . . . . . 66
4. * * * . . . . . . . . 70
5. Բ. Պ. Կ. մանիֆեստը Ռ. ամբ. բնակչությանը . 70

ՀՈՒՆՎԱՐԻ ԻՆՆԸ . . . . . . . 75

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 97

№ 285 Գրառեալվար № 205 բ. Տիրաժ 3000

ՀՀ Ազգային գրադարան
NL0181615

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

ԳԻՆԸ 60 ԿՈՊԵԿ